№ 2 (220) XXII ՏԱՐԻ ՓԵՏՐՎԱՐ 1912

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ



ՊԻԷՌ ԿԻՅԵԱՌ

1864—1912

Պէռ Լաշէզի գերեզմանատանը, իրենից ոչ հեռու, պառկած են ընդհանուր, լայնատարած դամբարանի տակ 15,000 կոմմունարները,—նրանք, որոնք 1871-ի սարսափելի օրերում, Մօն-Մարտրի բարձունքների վրայ պարզեցին „տիեզերական կարմիր հանրապետութեան" դրօշը և արիւնահեղ կռիւներից յետոյ խմբովին կոտորուեցին բուրժուական կառավարութեան հրամանով։

Մեր ըմբոստ բարեկամի հոգին գնաց միանալու—նոյն արիւնոտ, նուիրական հողի տակ—այդ միւս ըմբոստների թանկագին նշխարներին, որոնց հետ նա կապուած էր իր ապստամբ խառնուածքով, իր մտքի ու սրտի ամենանուրբ թելերով։

Անատօլ Ֆրանս և ֆրանսիական գրականութեան այլ գագաթներ, Պրէսսանսէ և ֆրանսիական հրապարակագրութեան այլ բազմաթիւ ներկայացուցիչներ գնացել էին իրենց յարգանքը մատուցանելու

այդ վաղաժամ դագաղին։ Պարիզեան գրագէտների երիտասարդ պլէադը ողբում է համակրելի *fin-lettré*-ի անագորոյն վախճանը, բայց թւում է թէ, այդ մահուան և այդ թաղման սիմվոլիկ արտայայտութիւնը, նրա վսեմ խորհուրդը ուրիշ տեղ էր... այն փոքրաթիւ հայկական պատգամաւորութեան մէջ, որ խոր սգով համակուած, հեռաւում էր դիակառքին, որ սրտառուչ, եղբայրական գուրգուրանքով տանում էր [illegible] ուսերի վրայ...

Պրէսսանսէ, Անատոլ Ֆրանս նոյնպէս ըմբոստ, յեղափոխական Ֆրանսիայի զաւակներ են, բայց ուրիշ շրջանի մարդիկ... Կիյեառի սրտին շատ աւելի մօտ էին՝ հին, կլասսիկ յեղափոխութեան դէմքերն ու մեթոդները, կամուրջների վրիժառու և ճարակող ռումբերը, գարիբալդեաններ կարմրավառ շապիկները, Բլանկիների ցասկոտ և դաւադիր հոգիները, որ յղացել են անցեալի մէջ այնքան ահեղ ու խիզախ ծրագիրներ, որ ծրագրել են հալեցնել վառօդի և ուժանակի հսկայական հնոցի մէջ՝ աշխարհը ստրկացնող, ժողովուրդների կեանքն ու առաջադիմութիւնը խեղդող, այլանդակող բոլոր սև անջրպետները, երկնային և երկրաւոր բռնութիւններն ու անիրաւութիւնները...

Կիյեառի սրտին շատ աւելի մօտ էին այդ յանդուգն հոգիները և նա նրանց չէր գտնում այլ ևս իր պանծալի հայրենիքում, նա նրանց փնտրում էր օտար երկնքի տակ, գտնում էր նմանները հեռաւոր Հայաստանում ու Մակեդոնիայում, ոգևորւում էր Սերոբների ու Սարաֆովների դէմքերով ու գործերով... ճնշուած, լացող, հոգեվարող Հայաստանը ցնցում էր նրա բարի, ղգայուն սիրտը, բայց աւելի ևս ցնցում էին Անդրանիկների յուսահատ և գահավէժ թռիչքները. հայկական մարտիրոսագրութիւնից շատ աւելի հրապուրիչ էր նրա համար՝ հայկական դիւցազներգութիւնը...

Եւ երբ մի օր, 12 տարի սրանից առաջ, *Pro Armenia*-ի հիմնադրութեան օրերում, ֆրանսիացի բարեկամի հետ, *Champel*-ի մենաւոր հիւրանոցի մէջ, հաւաքւել էին մտերմական ճաշի շուրջը „Դրօշակ"ի խմբագրութեան անդամները և Ժընէվի հայ ուսանողութիւնը, — Քրիստաֆոր իր հակիրճ բաժակաճառի մէջ ուղղում էր համակրելի հիւրին հետևեալ նշանակալի խօսքերը.

„Մենք չենք, որ գտանք ձեզ,—այլ դուք էք որ մեզ գտաք"...

Զարմանալի ճիշտ ըմբռնում Պիէռ Կիյեառի յեղափոխական էութեան։

Կիյեառ պատասխանեց Քրիստաֆորին մի զգացուած ճառով։ Երկու յեղափոխականները այնուհետև կապուեցին մտերմական կապերով. Ըմբոստ և արիւնստագէտ ֆրանսիացի հայասէրին կախարդեց հայ շարժման վետերանի լռիկ, համեստ անձնաւորութիւնը, նրա ազդու, առաքելական պատկերը, որի մէջ նշմարում էր թերևս վշտատանջ և ապստամբ ժողովրդի ոգու ցոլքը։ Եւ ամեն անգամ մեզ հանդիպելով, նախ Քրիստաֆորի մասին կը հարցներ, նրա առողջութեան ու գործերին կը տեղեկանար և շատ անգամ կը յարէր.

— *Vous savez, j'ai un culte pour Christophor!* *).

Եւ նա ողբաց մեր ընկերոջ մահը, ինչպէս կ'ողբար ամենամտերիմ հարազատը. *C'est une catastrophe!* „Դա մի աղէտ էր, ասում էր նա, ես իմ կեանքում ոչ ոքի այն աստիճան չէի սիրել ու յարգել և ոչ մի մահ այն աստիճան չէր ցաւեցրել իմ սիրտը"...

Ինքն էլ գնաց այժմ՝ Քրիստաֆորին միանալու, ճիշտ նոյն տարիքում, յոյսերով ու ծրագիրներով բեռնաւորուած...

Ինչպէ՞ս գնահատել Թանկագին հանգուցեալին, ինչի՞ց սկսել... Այնքան բազմազան են հայոց դատին նրա մատուցած ծառայութիւնները։ Նրանք սկսւում են հայ զուլումի նախօրեակին և շարունակւում են մինչև դագաղ։ Նրանք որոշ, սիստեմատիկ բնոյթ են առնում 1898—99-ի օրերից ի վեր, երբ հաստատւեց կանոնաւոր յարաբերութիւն „Դաշնակցութեան" ու Կիյեառի միջև։

„Պրօ Արմէնիա"ի միսսիօնը և գործունէութիւնը յայտնի են բոլորին։ Նախաձեռնողը Քրիստաֆորն էր, հոգին—ինքը խմբագրապետ Կիյեառը, աջ բազուկը—այն հոյակապ ծերունին, որ այսօր որդեկորոյս հօր պէս մնացել է որբացած, անդարմանելի սգի մէջ—Պրէսսանսէն։

Հայր և որդու ամենաքնքոյշ յարաբերութիւններ էին հաստատւել երկուսի միջև. մինը միւսով հպարտ էր. մինը գրում էր յօդուածներ, խտացնում էր Հայաստանից եկած լուրերն ու տեղեկութիւնները, միւսը—Պրէսսանսէն—և՝ գրում էր և միաժամանակ հնչեցնում „Պրօ Արմէնիա"ի դատը ֆրանսիական պարլամենտում, ուր նա ունէր միշտ ուշադիր և պատկառոտ լսարան, որին նա միշտ հմայում էր իր ահագին երուդիսիոնով, իր նրբապէշ ու կարկաչուն բառբառով և իր անկեղծ ու մաքուր, ասպետական բարկութիւններով։

Ինչքա՜ն տխուր ու ճնշող էին „Պրօ Արմենիա"ի երկունքի օրերը։ Թերթի առաջին համարները անցնում էին ընդհանուր անուշադրութեան մէջ՝ Պարիզն ապրում էր իր ընտանի և փոթորկոտ վայրկեաններից մինը։ Տրանսվալեան պարտուած հանրապետութեան վեհափառ նախագահը, Կրիւգեր, կատարում էր իր հանդիսաւոր մուտքը Ֆրանսիայի մայրաքաղաքը և պարիզցիք դիմաւորում էին ցոյցերով, ովսաննաներով։ Ցոյցերը երկար տևեցին. ամբողջ շաբաթներ հանրային ուշադրութիւնը կեդրոնացած էր Կրիւգերի վրայ։

Անցաւ, սակայն, ժխորը և կամաց-կամաց հայ-ֆրան-

*) Գիտէ՞ք, ես պաշտամունք ունիմ Քրիստաֆորի համար։

սիական նոր օրգանը նիւթ դարձաւ լրագրային յօդուածների ու մեկնութիւնների։ Պէտք էր նախ խօսեցնել մեծ մամուլը — և նրան խօսեցրեց Պրէսսանսէ։ Նրա ձեռքումն էր Temps-ի առաջին սիւնակը, ուր արծարծւում էին միջազգային քաղաքականութեան կընճիռները և ուր թառել էր մեր բարեկամը երկար տարիներից ի վեր, իր գիտուն, զմայլելի գրչի շնորհիւ, հասցրել էր պարիզեան մեծ օրգանը անսովոր բարձրութեան, դարձրել էր այն՝ համաշխարհային կարծիքի խոշորագոյն ազդակներից մինը։

Եւ մի օր այդ ազդեցիկ և իրաւարար-օրգանի առաջին սիւնակը նուիրուեց „Պրօ Արմէնիա"ին ու նրա դատին։ Այնուհետև խորտակւած էր անտարբերութեան սառուցը. մամուլի միւս օրգաններն ևս, արտասահմանն ևս սկսեցին հետաքրքրուել փոքրիկ, համեստ երկշաբաթաթերթով, որի ճակատը զարդարւած էր ֆրանսիական մտքի և հոգու ազնւականութեան ամենախոշոր անուններով—Անատոլ Ֆրանս, Կլեմանսօ, Պրէսսանսէ և Ժօռէս։

„Դրօշակ"ի խմբագրութիւնը մատակարարում էր նոր թերթին երկրից ստացւած նիւթերը և „Դաշնակցութեան" Արևմտեան Բիւրօն, յանձին իր պարիզեան ներկայացուցիչների՝ վարում էր թերթի տնտեսական մասը, հոգում էր և նրա տարածումը հայ և օտար աշխարհներում։

Առաջին համարի մէջ թերթն արդէն դրսևորեց իր քաղաքական գոյնը, իբրև ոչ միայն տեղեկատու մի օրգան, այլ և իբրև կռուի օրգան, կռիւ՝ ուղղւած հայ ժողովրդին ստրկացնող երկու մեծ բռնապետութեանց դէմ — Թիւրքիոյ և Ռուսաստանի։ Կիյեառ և Կլէմանսօ — վերջինս „Արիւնոտ ձեռք" վերնագրով իր հուժկու յօդուածի մէջ — խարանում էին հաւիդեան բարբարոսութիւնները, այն ինչ՝ Պրէսսանսէն նշաւակում էր ցար-լօբանովեան հայահալած ռէժիմը։

Ուշագրաւ էր այդ սկզբնաւորութիւնը։ Կիյեառ և Պրէսսանսէ, իբրև թերթի ամենամօտիկ վարիչները՝ առժամանակ փոքր ինչ սկեպտութեամբ էին վերաբերւում դէպի նրա նախաձեռնողները — „Դաշնակցութիւնը"։ Նրանց ականջներին հասնում էին կասկածելի շշուկներ այս ու այն մութ անկիւնից, անգամ հայ շրջաններից, ուր անսկզբունք, անդաւանանք հակառակորդները պատրաստ էին վիժեցնել „Դաշնակցութեան" ամեն մի նախաձեռնութիւն... Շշուկներ այն մասին՝ թէ Հայ Յեղափոխական կազմակերպութիւնը գտնւում է ինչ որ մեղսալի յարաբերութեան մէջ՝ ցարի կառավարութեան հետ։ Այդ այլանդակ առասպելները վաղուց արդէն եռանդով մշակւում էին և մի յայտնի մամուլի մէջ, ի միջի այլոց „Մեշվերեթի" էջերում։ Կիյեառ և Պրէսսանսէ ակամայ ազդւում էին այդ չարամիտ գաղտասուքներից, ուստի և վճռեցին—„Դաշնակցութեան" տրամադրութիւնները ստուգելու համար—առաջին իսկ համարի մէջ մի քանի սլաքներ նետել՝ նաև ռուսական բռնապետութեան դէմ։

Ժամանակը փարատեց ստայօդ առասպելների մշուշը. „Դաշնակցութեան" ճշմարիտ տակտիկը յայտնի եղաւ մեր ֆրանսիացի բարեկամներին և նախկին փոքր ինչ թերահաւատ վերաբերմունքը տեղի տւեց լիակատար վստահութեան, բարեկամութեան, մտերմութեան։ 1903—905—907 թւականների անդրկովկասեան փոթորկոտ անցքերի միջոցին՝ „Պրօ Արմէնիա"ն Պարիզից ուժգին արձագանք էր տալիս „Դաշնակցութեան" վարած ճակատամարտներին և հայ մարտական կազմակերպութեան անգիտակից հակառակորդները (նրանց շարքում և բերլինեան Vorwärts-ը) տեսան, թէ որքան յանցաւոր թեթևամտութիւն էր ցարիզմի գործիք հռչակել—նոյն ցարիզմի գաղափարական թշնամիներին...

***

Հրապարակագրութեամբ չսահմանափակւեց Պիէռ Կիառի ագիտացիական գործունէութիւնը ի նպաստ հայ ժողովրդի։ Խօսքը միայն գրչին։ Խօսքը՝ նոյնքան սիրելի և համոզիչ—որքան գրիչը։ Քանի՞ կոնֆերանսներ, հրապարակային միտինգներ, ճաշկերոյթի ճառեր... Պիէռ Կիառը—Բրիւսէլում, Լոնդոնում, Ժընէվում, Միլանում, Հռօմում, Բուդապեստում, ամեն տեղ, ուր հող կար պրօպագանդի, ամեն տեղ, ուր կայ գէթ մի փոքրիկ շրջան սրտացաւ ու կարեկից անհատների։

Այնքան խօսեց և գրեց Հայաստանի ու հայերի մասին, որ ինքն էլ „հայացաւ"... Մի օր — կարծեօք 1901-ին —նա ինքը խոստովանեց այդ՝ մի փայլուն բանկետի մէջ, որ „Դաշնակցութեան" պարիզեան ներկայացուցիչները կազմակերպել էին ի պատիւ Ժօռէսի ու Վանդերվելդի և ուր ներկայ էին պարիզաբնակ թիւրքահայ մտաւորականութեան մի քանի ներկայացուցիչների հետ՝ գիտական-պրոֆէսօր Մարիլիէ (այժմ հանգուցեալ), Գամբարով, հայագէտ Մէյիէ, հայր և որդի Լօնգէներ, Լագարդէլլ և ուրիշներ։ „Ես, ինչպէս յայտնի է, արդէն հայացած եմ"—այսպէս սկսեց Պիէռ Կիյեառ իր բաժակաճառը, քաղցրիկ ժպիտը շրթներին, համակրելի հայեացքն ուղղելով Ժօռէսի և Վանդերվելդի կողմը, որոնք պատասխանում էին բուռն հաւանութեան ու համակրանքի նշաններով։

Նոյն համակրանքի ցոյցերն արին հայացած ֆրանսիացուն՝ Բրիւսէլի միջազգային, մեզ համար պատմական, համագումարի մէջ (1902-ին)—կազմակերպւած հայկական խնդրի լուծման համար նոյն „Դաշնակցութեան" ջանքերով — ուր Ժօռէսի, Պրէսսանսէի, տիկին Սեվրինի, ապա և բելգիացի, գերմանացի, դանիացի հռետորների շարքում, Պիէռ Կիյեառ արտասանեց մի ընդարձակ, փաստացի և ցնցող ճառ հայկական մարտիրո-

սութեան մասին — լաւագոյն ճառերից մէկը, որ երբևիցէ արտասանուել է այդ տխուր նիւթի առթիւ։ Փայլուն հռետոր չէր, բայց ազդում էր մարդկանց վրայ իր կուտակած փաստերով, դօկումենտներով և հարցերի իր ընդարձակ ու խորունկ ծանօթութեամբ, ազդում էր, յուզում, երբեմն արտասուեցնում։ 1903-ի սկզբներում, Բուդապեստի մէջ—ուր գնացել էր Արևմտեան Բիւրօի ներկայացուցչի հետ փոքր ինչ մշակելու մաջառական հանրային կարծիքը, խօսել տալու պարլամենտի հեղինակաւոր դէմքերին—նա նոյն ցնցող փաստերով ու դօկումենտներով արտասուեցրեց պարլամենտի նախագահ՝ կոմս Ալբեր Ապպոնիին, որը յետոյ անմիջապէս, հակառակ Վիէննայի Համիդեան դեսպանի բողոքներին, նոյն պարլամենտի շէնքում իսկ, իր անձնական նախագահութեամբ ժողով գումարեց մաջառ ազդեցիկ պատգամաւորներից, խօսեց ինքը հայկական դատի մասին և կրկին խօսեցրեց Կիլեառին։ Նոյն ատենախօսութիւնը վերջինս կրկնեց ունգարական մամուլի բազմաթիւ ներկայացուցիչների համագումար-ժողովի մէջ։

„Փաստե՛ր տուէք, դօկումենտնե՛ր—գրում էր մեզ շարունակ Փարիզից. դրանցով է, որ պիտի ազդենք, սթափեցնենք“։

Եւ փաստերի մի անսպառ շտեմարան էր, նա ինքը։ Շատ քչերը մեզնից այնքան խորունկ ու բազմակողմանի ծանօթութիւններ ունին մեր հայկական խնդրի ու դատի մասին։ Ունայնած իր արտիստ, բանաստեղծական մտակազմին ու խառնուածքին — որ սովորաբար խորշում է արշիվային տաղտկալի փորփորումներից—մեր բարեկամը ունէր անսովոր համբերութիւն ու եռանդ՝ մտնելու պատմական հարցերի կնճռոտ հիւսուածքի մէջ, խղճամիտ, զուտ գիտական մեթոդով պրպտելու իրականութեան բոլոր խորշերը և մերկ, անժխտելի վաւերագրերով ազդելու մարդկանց ոչ այնքան զգացումների, որքան մտքերի վրայ։ Ճշգրիտ ու բազմակողմանի ծանօթութիւններ՝ ոչ միայն հայոց խնդրի ու շարժումների, այլ և պատմութեան, աշխարհագրութեան, լեզուի մասին։ Այդ բանաստեղծ-գրագէտը, որ ուշի ուշի հետևում էր համաշխարհային հին ու նոր գրականութեան արտադրութիւններին և տալիս էր շարունակ իր անգուլ հետաքրքրութիւնների գողտրիկ էջերը *Mercure de France*-ին —նա ձեզ սիրով և իրազեկ մարդու ձեռնհասութեամբ կը պատմէր Հիւբշմաններին, Միւլլերներին ու Մէյիէներին տեսութիւնները հայկական լեզուագիտութեան վերաբերմամբ, նա ձեզ անգիր կը թուէր և Տարօնի, Սասնոյ անհաշիւ գիւղերի անունները, աշխարհագրական դիրքը, նրանց ապրած ազէտները և այլն։

Ահա թէ որպիսի ընկեր կորցրինք։ Մեզ հետ էր հայկական տագնապի ազէտաբեր ելևէջներում. մեզ հետ էր, երբ Սասունը պարզել էր ապստամբութեան դրօշը՝ վերստին յիշեցնելու պապանձած եւրոպային արիւնաներկ հայրենիքի սրբազան գանգատները, մեզ հետ էր, երբ ապստամբ բանակը, երկու ամսւայ յուսահատ դիմադրութիւնից յետոյ, սկսել էր — Գէորգի, Վահանի, Հրայրի, Անդրանիկի առաջնորդութեամբ — իր տխուր նահանջը դէպի Անտոր ու Տալուորիկ, մեզ հետ էր և շարունակ թափում էր Պարիզից նամակների տարափը, հարցնում էր տեղեկութիւններ ռազմիկների մասին, հարցնում էր խորհուրդներ եւրոպական կարծիքը յուզելու վերաբերմամբ — մինչ Պրէսանսէն, իր հոգևոր, գաղափարական հայրիկը, փոթորկում էր ֆրանսիական պարլամենտը իր վճիտ և յուզիչ պերճախօսութեամբ, իր վեհանձն ընդվզումներով ընդդէմ Կարմիր Գազանի, իր խանդավառ ներբողներով, ուղղուած հայ ռազմիկներին—մեզ հետ էր Պիէռ Կիյեառ խանդավառութեան այն օրերում, երբ նորէն յուսադրուած Սասունի ապստամբութեամբ և եւրոպական դաշինքների սթափուած ուշադրութեամբ՝ կազմում էինք Քրիստոֆորի հետ նոր ու լրիւ յիշատակագիր,—աւելի յստակ և ընդարձակ քան Պայիսեան մէմօրանդումը—որ յետոյ ինքը Կիյեառը ներկայացրեց Դելկասէին՝ յանուն „Դաշնակցութեան“, մեզ հետ էր նա, վերջապէս, Վասպուրականի, Խաչէնի ամենավերջին ազէտի ժամանակ, օսմանեան Յեղափոխութեան նախօրեակին, երբ նորէն բարձրացել էր խժդժութեան հողմը և տանջանքի, յուսահատութեան բառաչը. մեզ հետ էր նա 1908-ի յուլիսին, Վիկտոր Բերարի և Արևմտեան Բիւրօի պատուիրակի հետ, ներկայանում էր արտաքին գործերի մինիստր Պրիշոնին, պատմում էր հայ ժողովրդի անվախճան տագնապը և լուծումն էր պահանջում... Մեզ հետ էր ամեն տեղ և ամեն պարագայում—անգամ Ընդհանուր ժողովի նիստերի մէջ, Բուլգարիայում— և մենք երբէք չենք մոռանայ սիրուած ընկերոջ, բարեկամին, երբէք չենք ջնջի մեր սրտերից ու մտքերից՝ այս վերջին փոթորկալի տասնամեակի մի շարք յուզիչ դրուագները. չենք մոռանայ — և այսօր երախտագիտութեան ու սիրոյ անխառն զգացումով, խոնարհւում ենք այդ թանգ դամբարանի և այդ անբիծ, ոգևորիչ յիշատակի առջև։

ԲԱՂԱԲԱԿԱՆ

ԼԵՀԱՍՏԱՆԸ ԵՒ ՆՐԱ ԴՐՕՇԱԿԱԿԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ *)

Իր հիմնադրութեան օրերից ի վեր (1892 թ. նոյեմբեր) Լեհ Սօցիալիստ Կուսակցութիւնը ընդունել է, իբրև իր քաղաքական ծրագրի առաջին կէտ՝ ստեղծել Լեհական Անկախ Ռամկավարական Հան-

*) Ներկայ յօդուածը գրել է յատկապէս „Դրօշակ“ի համար՝ Լեհաստանի ամենամեծ սօցիալիստ Կուսակցութեան (P. P. S.) պարագլուխ և թեօրետիկոս—Վրօնսկի։

բապետութիւն։ Այդ նշանաբանի տրամաբանական հետևանք էր զինուած ապստամբութեան անհրաժեշտութիւնը, որովհետև, բնականաբար, ռուս կառավարութիւնը յօժարակամ չէր բաց թողնի իր ճանկերից մի հարուստ, բազմամարդ, կուլտուրական երկիր, որի նուաճումը այնքան թանկ է նստել ցարերին և որը այսօր դրա փոխարէն տալիս է նրանց ամեն տարի տասնեակ միլիոններով եկամուտ, տասնեակ հազարներով նորակոչներ, կերակրում է գիշատիչ պաշտօնեաների մի ամբողջ հօրդա։ Այդպիսի մի աւար չեն բաց թողնում ձեռքից անգամ այսպէս անուանած քաղաքակիրթ պետութիւնները. ո՞ւր մնաց մի այնպիսի կիսաարևելեան բռնակալութիւն, որպիսին է ցարիզմը։

Ուստի P. P. S.-ի հիմնադիրները իրենց գործունէութեան սկզբից ի վեր գիտակցում էին, որ վաղ թէ ուշ զինուած ապստամբութեան խնդիրը պիտի ցցւի կուսակցութեան առջև։ Ինչպէս յայտնի է, P. P. S.-ի (Լեհ. Սոց. Կուսակցութեան) հայեացքները շուտով յաղթանակեցին և դարձան լեհական պրոլետարիատի սեփականութիւն։ Առաջներում հիմնուած կուսակցութիւնները („Պրոլետարիատ“, „Լեհ Բանուորական Դաշնակցութիւն“ և այլն) կազմալուծուեցին. նոր ստեղծուած „Լեհ Թագաւորութեան Սոցիալ-դեմոկրատիան“ դադարեցրեց իր գոյութիւնը, և մի առ ժամանակ (1896—1900 թ.) P. P. S.-ը միակ սոցիալիստ կազմակերպութիւնն էր ռուսական Լեհաստանում։ Նոյնիսկ յետոյ, երբ „Լեհ Թագաւորութեան և Լիտվայի Սոցիալ-դեմոկրատիան“ վերսկսեց իր գործունէութիւնը, երբ Լեհաստանում հրապարակ եկաւ և հրէական „Բունդ“-ը՝ լեհ կազմակերպուած աշխատաւորների ճնշող մեծամասնութիւնը պատկանում էր P. P. S.-ին, մի բան, որ դիւրին է ստուգել նոյնիսկ այն պաշտօնական զեկուցումներով, որ ներկայացրել են այլևայլ կուսակցութիւններ։

Ինտելիգենցիայի, մտաւորականութեան մէջ ևս Լեհ Սոց. Կուսակցութիւնը գտաւ ընդարձակ և ջերմ կողմնակցութիւն. այդտեղ նա միայն մէկ ու զօրաւոր հակառակորդ ունեցաւ՝ Ազգային Ռամկավար Կուսակցութիւնը (Նարոդովայա Դեմոկրատիա) *)։ P. P. S.-ը աճեց շարունակ, չը նայած կառավարական ճնշումներին։ Թւում էր թէ Լեհաստանը պիտի մօտենար ասիական արագութեամբ յեղափոխական բռնկման վայրկեանին։ Իրօք, սակայն, նա հեռու էր դրանից։ Ընդունել մի բան, իբրև տրամաբանօրէն անհրաժեշտ և սկսել համապատասխան գործողութիւններ—այդ երկու բաները միշտ չեն յաջորդում իրարու։ Առօրեայ կեանքը պահանջում էր Լեհ Սոց. Կուս. անդամից մի շարք այնպիսի քայլեր, որոնք ոչ մի առնչութիւն չունին զինուած կռուի հետ։ Առօրեայ կեանքը ստիպում էր նրան՝ զբաղուել ագիտացիայով (մտքերը յուզելով), կազմակերպել, ստեղծել և տարածել գրականութիւն և այլն։ Առօրեայ կեանքը, մի խօսքով, ժամանակ չէր տալիս մտածելու պատերազմական կամ մարտական խնդիրների մասին։ Այդ պատճառով թէ օրիայի մէջ մենք ամենքս (կամ յամենայն դէպս, մեծամասնութիւնը մեր մէջ) մտածում էինք ապստամբութեան մասին, բայց գործնականում մենք բնաւ չէինք պատրաստւում դրա համար, չէինք էլ իմանում, թէ ինչպէս ձեռնարկել դրան։

Պէտք է աւելացնել, որ թէև մեր կուսակցութիւնը ընդունում էր տերրորը (ահաբեկչական գործունէութիւնը), իբրև կռուի մի միջոց կառավարութեան դէմ, սակայն չէր գործադրում այն։ Քաղաքական տերրորը Լեհաստանի մէջ չունի առհասարակ այն նշանակութիւնը, որ նա ունի Ռուսաստանում, քանի որ մեզ մօտ Կուսակցութիւնը գործ ունի միայն ստորադրեալ պաշտօնեաների հետ, ուրիշների կամակատար։ Անգամ ինքնապաշտպանութեան դէպքերում Կուսակցութիւնը չէր հրատարակում իր գործողութիւնները, գործնական նկատումներով, որ համապատասխան էին այն ժամանակւայ պայմաններին։ Հասկանալի է, որ այդ հանգամանքն ևս չէր կարող նպաստել Կուսակցութեան մէջ ռազմական ոգու զարգացման։

Ամենայն հաւանականութեամբ, Կուսակցութեան ուժերի աստիճանական զարգացման հետ և նրա ներգործութիւնը միշտ աճելով պրոլետարիատի ու գիւղացիութեան վրայ՝ P. P. S.-ը կը դիմէր իրական գործողութիւնների, որոնք անհրաժեշտ հետևանք են նրա ծրագրի։ Սակայն, նրան չէր վիճակուած սպասել մինչև այդ վայրկեանը։ Պայթեց ռուս-եապօնական պատերազմը և Կուսակցութիւնը մէկէն ի մէկ դրեց նոր ու շատ ծանր խնդիրների առջև։ Անգամ չը լինելով մասնագիտօրէն ծանօթ ռուս զինուորական ուժերի կացութեան հետ, կարելի էր նախատեսնել, որ պատերազմը պիտի լինէր երկարատև, պիտի ստիպէր Ռուսաստանին լարելու իր բոլոր ուժերը, պիտի պատճառէր ժողովրդին հազար ու մի թշուառութիւններ և թերևս պիտի վերջնար անարգօրէն։ Այդպիսի մի պատերազմ, կարելի է ասել, լաւագոյն առիթն էր, յարմարագոյն ժամանակը՝ փորձ անելու խլելու Ռուսաստանից լեհական նահանգները։ Բայց, ինչպէս արդէն ասացինք, մեր Կուսակցութիւնը բնաւ պատրաստուած չէր դրա համար։ Եւ հետևանքները շուտով վրայ հասան։

Անկարող լինելով զինուած ապստամբութեան նշանաբանն արձակելու՝ Կուսակցութիւնը որոշեց գէթ օգտագործել պատերազմի յարուցած յուզումը՝ ագիտացիական նպատակներով։ Թռուցիկները հրատարակեցին

*) Լեհ ազատամիտ կամ լիբերալ կուսակցութիւնն է, որ նոյնպէս ուածում է խորունկ ու անհաշտ թշնամութիւն դէպի ռուսաց տիրապետութիւնը, բայց որ խորշում է յեղափոխական պայքարի միջոցներից, սահմանափակելով խաղաղ դիմադրութեամբ, ազգային գաղափարի, լեզուի, կուլտուրայի ուժգին, մոլեռանդ պաշտպանութեամբ։ Ծ. Խ.

աւելի մեծ քանակութեամբ, քան երբևիցէ, սկսեցին փողոցային ցոյցերը։ Սակայն դրա հետ զուգընթացաբար աճեցին կառավարական ճնշումները։ Նախկին պոլիցիական միջոցները, բռունցքներն ու նագայկաները (մետաղածայր մտրակ) հերիք չէին. դիմեցին զէնքի, նախ ցուրտ զէնք գործածեցին։ Արիւնը հոսեց։ Բանւորները սկսեցին զէնք պահանջել ինքնապաշտպանութեան համար։ Վերջապէս, Կուսակցութիւնը որոշեց սարքել զինուած ցոյց։

Յիշում եմ այդ ժամանակը։ Յիշում եմ թէ ինչպէս մարդիկ, որոնց ոչ ոք չէր կարող կասկածել երկչոտութեան մէջ և որոնք յետագայում ցոյց տուին իրենց արիութիւնը շատ գործերում, յիշում եմ, ինչպէս նրանք, երկար վարանում էին, նախ քան հաւաձայնուել ենթարկելու իրենց ընկերներին մահուան վտանգի։ Թէև շատերը յաձախ էին երազել և բաղձացել դուրս գալու թշնամու հանդէպ զէնքը ձեռին, բայց այնուամենայնիւ դիւրին չ'եղաւ անցնել խրամատը, որ բաժանում էր բաղձանքը գործողութիւնից։

Ցոյցը տեղի ունեցաւ հոկտեմբերի 30-ին (1904 թ.) Գրիբօվայա հրապարակի վրայ, Վարշաւայում։ Գնեցին որոշ թւով ատրճանակներ (բաւական վատ տեսակի), հրատարակուեց թռուցիկ, հաւաքուեց մեծ բազմութիւն և երբ ոստիկանութիւնը նետուեց սրերով ցուցարարների դէմ, գնդակները թափուեցին ոստիկանական շարքերի վրայ։ Ոստիկանութիւնը փախաւ, նորէն վերադարձաւ և սկսուեց երկուստեք հրաձգութիւն։ Շուտով եկաւ զօրքը (կօզակները պարզուած դրօշակներով) և ի հարկէ յաղթեց։ Սակայն ցոյցը իր նպատակին հասած էր։ Առաջին անգամը 1864 թուից ի վեր (վերջին լեհական ապստամբութեան թուականն է) Վարշաւայի փողոցներում արիւն հոսեց ոչ միայն նրա բնակիչների, այլ և դահիճների արիւնը. և դա ցնցող տպաւորութիւն արեց մասսաների վրայ։

Այնուամենայնիւ, իսկական նպատակը դեռ հեռու էր իրականացումից։ Եւ թէպէտ Վարշաւայի ցոյցին հետևեցին մի շարք նման ցոյցեր գաւառներում՝ ամենքի համար ակներև էր, որ կառավարութիւնը չը պիտի զիջէր մի քանի տասնեակ ատրճանակների առջև։ Բայց շուտով վրայ հասան դէպքեր, որոնք մէկէն ի մէկ փոխեցին մտքերն ու տրամադրութիւնները։ Պետերբուրգում տեղի ունեցաւ Գապոնի առաջնորդութեամբ յայտնի ցոյցը։

Նրան յաջորդեց առաջին ընդհանուր գործադուլը։ Կառավարութիւնը սկսում էր տատանուել, ապա դիմեց զիջումների, որոնց իսկական նպատակն էր հանգստացնել ժողովուրդը և սպասել մինչև պատերազմի վախճանը։ Եւ թէպէտ այդ զիջումները ոչ ոքի չը հանգստացրին, այնուամենայնիւ նրանք ստեղծեցին պատրանք՝ թէ գուցէ հնարաւոր էր կացութիւնը բարւոքել տալ առանց զինուած կռիւների։ Այդ նշանաբանը, որ գալիս էր բուրժուական շրջաններից, մուտք գործեց և Լեհ Սոցիալիստ Կուսակցութեան մէջ և շուտով ընդունուեց մեր կուսակցական ինտելիգենցիայի մեծամասնութեան կողմից։ Այդ բանին նպաստեց թարմ ուժերի հսկայական ներհոսանքը, ուժերի՝ որոնք ծանօթ չէին կուսակցութեան աւանդութիւնների հետ։ Այդ մարդկանց թւում էր, թէ եթէ հրաժարւինք Լեհաստանի անկախութեան պահանջից, կըստանանք առանց մեծ դժուարութիւնների քաղաքական ազատութիւն։

Կուսակցութեան մէջ կատարուեց յեղաշրջում. նոր մարդիկ գլուխ կանգնեցին նրան. անկախութեան նշանաբանը փոխարինուեց Սահմանադիր Ժողովի պահանջով, որ յետագայում պիտի վերածուէր մի աւելի համեստ պահանջի՝ լեհական թագաւորութեան ինքնօրինութեան (ավտոնոմիա)։

Միաժամանակ Կուսակցութեան մէջ սկսեցին մղել եռանդով պրօպագանդ՝ ընդդէմ զինուած ապստամբութեան գաղափարի։ Նրան ընդդիմադրում էին ընդհանուր գործադուլները, ցոյցերը և այլն։ Այդ կռիւը շարունակուեց գրեթէ մինչև 1905-ի վերջը։ Նա յետոյ ևս չը դադարեց, չը նայած Կուսակցական Մարտական Կազմակերպութեան առաջ գալուն։ Բայց այդ կազմակերպութիւնն ևս ստեղծուեց միայն այն ժամանակ, երբ իրաք մօտենում էր յեղափոխութեան հաշուեյարդարութեան (լիկվիդացիայի) ժամը։ Մարտական կազմակերպութեան մէջ մտաւ մեծամասնութիւնը այն ընկերների, որոնք մնում էին կողմնակից Լեհաստանի անկախութեան։ Մնացածները հեռացուեցին գործերից, կամ զրկուեցին ազդեցութիւնից։

Այդպիսով մեր կուսակցութիւնը պատիժ կրեց նրա համար, որ նախօրօք չէր կարողացել պատրաստուել անցքերին դիմաւորելու։ Հարկաւ, ոչ ոքի չի կարելի մեղադրել կատարուածի համար։ Իմ ամբողջ տեսութիւնից երևում է, որ Կուսակցութեան մէջ տեղի ունեցած փոփոխութիւնների պատճառը ձախորդ պայմաններն են։ Եւ եթէ մենք այդպէս ծանրանում ենք մեր պատմութեան այդ շրջանի վրայ, չենք անում այդ՝ որևէ մէկին մեղադրելու նպատակով, այլ միայն դասեր քաղելու ապագայի համար։

Այնուամենայնիւ, ինչպէս ասացի, ամբողջ Կուսակցութիւնը չը հրաժարուեց նախկին ծրագրից, և անկախութեան կողմնակիցների մեծամասնութիւնը կենտրոնացաւ Մարտական Կազմակերպութեան մէջ։ Թէև այդ կազմակերպութիւնը երբէք չը վայելեց Բանւորական Կենտրոնական Կոմիտէի համակրութիւնը, այնուամենայնիւ, արագ-արագ աճեց, զարգացաւ և նրան վիճակուած էր վերածնեցնել Կուսակցութիւնը։ Ճիշտ է, այդ կազմակերպութիւնը չ'արեց այն, ինչ որ սպասելի էր նրանից։ Լեհաստանը ոչ միայն փորձ չ'արեց ազատագրուելու ցարիզմի բռնաւոր լծից, այլ և առ հասարակ

չ'եղաւ ասպարէզ լուրջ կռիւ, ճակատամարտների, որոնց մէջ մասնակցութիւն առնէին աշխատաւոր ժողովրդի զանգուածները։ Բայց արածն էլ բաւական եղաւ՝ ստեղծելու համար մարտական այն մթնոլորտը, որ չը կար առաջներում։ Ամբողջ երկիրը ծածկուեց մարտիկների փոքրիկ խմբերով, որոնք հարիւրաւոր դէպքերում կռիւ էին մղում ոչ միայն ոստիկանութեան ու ժանդարմների, այլ և զինուորների դէմ, իսկ միանգամ այսպէս կոչուած, արիւնոտ շորեքշաբթի օրը, մեր ռազմիկները գրոհ տուին միաժամանակ (1906 թ. 3 օգոստոս) ոստիկանութեան ու կազակների դէմ Լեհաստանի 19 քաղաքներում։

Թերևս աւելի կարևոր է Մարտական Կազմակերպութեան ներգործութիւնը բանւորական զանգուածների և ամբողջ հասարակութեան վրայ։ Իր շեշտակի հարուածներով, ուղղուած կառավարութեան դէմ, այդ կազմակերպութիւնը ցոյց տուեց, որ կռիւը ռուս զօրքի դէմ ուռուպիա, ցնորք չէ, ինչպէս թւում էր այդ շատերին՝ լեհական վերջին ապստամբութեան վիժումից յետոյ։ Նա յարուցեց հետաքրքրութիւն ռազմական գործերի համար, ստեղծեց զինուորական արուեստի շուրջը գրականութեան սկզբնաւորութիւնը,—արուեստի՝ որ յարմարեցրած է յեղափոխութեան կարիքներին ու պահանջներին։ Նրա ազդեցութեան տակ, այսօր իսկ արդէն, P. P. S.-ի շարքերից դուրս ևս՝ կան մեծ թւով մարդ'կ, որ թէորիապէս և գործնականապէս պատրաստւում են գալոց յեղափոխութեան համար։

Կուսակցութեան մէջ եղած երկու հոսանքների պայքարը պէտք է հասցնէր պառակտման։ Եւ նա առաջացաւ 1906-ի նոյեմբերին, Կուսակցութեան IX համագումարում. վերջինը բաժանուեց ու ցրուեց։ Այնուհետև անկախութեան կողմնակիցները անուանեցին իրենց „Լեհ Սոցիալիստ Կուսակցութեան Յեղափոխական Հատուած“ (*Fraction Révolutionnaire du P. P. S.*)։

Ես չեմ պատմի մանրամասնօրէն Կուսակցութեան մէջ եղած այդ յեղաշրջման պատմութիւնը, կ'ասեմ միայն՝ որ Յեղափոխական Հատուածի կոչին արձագանք տուեց Կուսակցութեան ահագին մեծամասնութիւնը։ Մինչ միւսի ետևից տեղական կազմակերպութիւնները անցնում էին այդ Հատուածի կողմը։ Իսկ երբ այսպէս կոչուած „Զափաւոր Հատուածը“ իր առաջին համագումարում դուրս վտարեց իր ծրագրից անկախութեան պահանջը և յայտարարեց ինքզինքը ոչ միայն զինուած կռիւ պատրաստութեան, այլ և նոյնիսկ ամեն ձևի տերրօրի դէմ, այն ժամանակ նրա սանկութիւնն ակներև դարձաւ։ Այժմ այդ կազմակերպութիւնը զուրկ է քաղաքական որևէ նշանակութիւնից, որա օրգանները դադարել են, բացի մէկից, որ լոյս է տեսնում տարին 3—4 անգամ։

Ինչ վերաբերում է Յեղափոխական Հատուածին՝ նա „Զափաւորների“ վերոյիշեալ համագումարից յետոյ վերստին առաւ իր նախկին անունը „Լեհ Սոցիալիստ Կուսակցութիւն“, ի նկատի ունենալով, որ միմիայն նա է կրող հանդիսանում Կուսակցութեան նախկին ծրագրի ու տակտիկի, բացի այդ, պահպանում է իր շարքերում ոչ միայն Կուսակցութեան հիմնադիրներին, այլ և նրա անդամների մեծամասնութիւնը։

Այդպիսով, Լեհ Սոց. Կուսակցութիւնը վերստեղծուեց, իբրև մարտական կուսակցութիւն։

Այդ միջոցին փոփոխուել էին և արտաքին պայմանները։ Ռէակցիան յաղթանակել էր *)։ Ամբողջ 1907 թուականը քանդումի, կազմալուծման շրջան էր։ Քանդուում էին յեղափոխական շարժման միջոցին չափից դուրս մեծացած կազմակերպութիւնները։ Մեր կուսակցութիւնն ևս տուժեց դրանից։ Դեռ 1907-ի սկզբում, Կուսակցութեան X Համագումարում, մենք հաշուում էինք 25,000 գործօն անդամներ, բայց շուտով անհնարին դարձաւ ղեկավարել զանգուածները։ Ամբողջ Լօձի շրջանը, որ ունէր 12,000 անդամ, պէտք եղաւ լուծել։ Վարշաւայում Կուսակցութիւնից հրաժարուեց բանւորների մեծամասնութիւնը։ Նրանք կազմեցին առանձին կուսակցութիւն, որ մղում էր գործարանային տերրօր։ Մասաւորականութիւնը ոչ միայն լքեց մեր շարքերը, այլ և զանգուածօրէն յայտարարեց ինքզինքը մեր դէմ հանդիսանալով P. P. S.-ը երկրի բոլոր դժբախտութիւնների պատճառ։ 1907 — 1908-ի ձմեռը ռէակցիայի գագաթնակէտն էր — թէ ներքին և թէ արտաքին ռէակցիայի։

1908-ի ամառանից կացութիւնը սկսում է բարւոքուել։ Կազմակերպութիւնը վերանորոգուեց այն տեղերում, ուր նա դադարած էր իր գոյութիւնը։ Բայց աւելի կարևոր է այն՝ որ Կուսակցութեան անդամները յարմարուեցին իրերի նոր կացութեան։ Հին, դասադրական մեթոդները վերադարձան։ Մասսային կազմակերպութիւնները արձակուեցին և նրանց տեղ ստեղծուեցին նորերը, կազմուած փոքրաթիւ, բայց փորձուած անհատներից։ Այժմ գլխաւոր հոգսն էր՝ կուսակցական անդամների զարգացումը, դպրոցական սիստեմի միջոցով, մի սիստեմ, որով իրաւամբ մենք կարող ենք պարծենալ։

Դրա հետ միաժամանակ փոխուում են և մեր գործունէութեան արտաքին պայմանները հասարակութեան մէջ։ Նախկին սարսափը անհետանում է, որովհետև մարդկանց ջղերը վարժուել, ընտելացել են կառավարական ճնշումներին և վերջիններս այլ ևս չեն աղդում առաջուան պէս։ Ինտելիգենցիան կարեց յոյսերը սահմանադրական իրաւակարգի վերադարձի նկատմամբ։

*) Պէտք է նկատել, որ եթէ Կուսակցութեան պառակտումը աւելի վաղ տեղի ունենար, հաւանաբար թէ նրա յեղափոխական տարրերը կարողանային յաղթութիւն տանել։

P. P. S.-ի գուշակութիւնը—որ առանց կռի ազատութիւն չը պիտի լինի — հաստատեց իրողութիւններով։ Ֆինլանդիայի օրինակը, կառաղի հալածանքը բոլոր „այլազգիների“ դէմ, գազանասիրտ նացիոնալիզմի շարունակական աճումը ռուսական հասարակութեան մէջ, այդ բոլորը ապացուցեց, որ ռէակցիան հետևանք չէ մեր յեղափոխական պայքարի, այլ որ նա տրամաբանական արդիւնք է այն յաղթանակի, որ կառավարութիւնը տարել է յեղափոխութեան դէմ։

Այդ էւոլիւսիոնը արտայայտւում է բազմաթիւ իրողութիւններով։ Մեր շարժման բնորոշ գիծն այն է՝ որ ամենաաչքի ընկնող լեհ գրողներն ու բանաստեղծները հավակրում են մեզ։ Նրանք ևս ռէակցիայի սկզբում „հանդարտեցին“ և իրենց գրուածքներում մատնում էին իրենց յուսաբեկ տրամադրութիւնները։ Այժմ իրենց բազմաթիւ պատկերների մէջ իդեալացնում են կռիւը, այն կռիւը, որ մենք մղեցինք։ Երկրորդ ուրախառիթ և չը տեսնված իրողութիւնը—չը տեսնված մեր բոլոր ապստամբութիւններին յաջորդող ռէակսիոն շրջաններում—այն է՝ որ ամենուրեք բորբոքւում ու բարձրանում է զինված կռի անհրաժեշտութեան գիտակցութիւնն ու շահը։ Ամենուրեք կազմակերպւում են ակումբներ ու մարմիններ, որ կապւում են մեզ հետ կամ գործում են անկախօրէն, սովորում են ռազմական արուեստը, թարգմանում են համապատասխան գրքեր օտար լեզուներից և այլն։ Եւ որովհետև այդ գործում մեր կուսակցութիւնը յայտնւում է առաւելապէս ձեռնհաս՝ ուստի և նա ստանում է իր շարքերի մէջ միշտ նոր ու նոր համախոհներ։

Այդ հանգամանքն անդրադառնում է և կազմակերպական յարաբերութիւնների վրայ։ Թէև մենք տակաւին շատ փայլուն չենք համարում մեր գործերը, բայց և այնպէս այժմ մեզ համար անհամեմատ աւելի դիւրին է գտնել քարոզիչներ, ագիտատորներ, ստեղծել կազմակերպութիւններ, քան առաջ։ Երկու տարի սրանից առաջ մենք գրեթէ բնաւ ազդեցութիւն չունէինք երիտասարդութեան վրայ. նրա ղեկավարներն էին կամ „ժողովրդական ռամկավարները“ և կամ սոցիալ-դեմոկրատները ու „չափաւորները“ (այսպէս կոչուած „լէվիցա“ն)։ Այսօր երիտասարդական ժողովների մէջ՝ մերոնք են տոն տուողը, տիրապետող դիրք ունեցողը։ Յամենայն դէպս, նրանք կարողացել են համախմբել իրենց շուրջը ամուր կազմակերպութիւններ։ Այդ բանը նկատելի էր և մեր այսպէս անուանած „կենտրօնական դպրոցներում“։ Առաջին և երկրորդ դպրոցի մէջ մենք ունէինք միմիայն գործաւորներ։ Երրորդը—խառն էր, չորրորդի մէջ ունէինք միմիայն մտաւորականներ։ Նոյնը տեսնում ենք աւելի մանր պարագաների մէջ։ Նախանցեալ տարուայ աշնանը Լեհաստանի „աշակերտական միութեան“ մէջ մերոնք կատարեալ ազդեցութիւն ունէին, այնպէս որ մեր ընկերները նոյնիսկ իրենց հարց էին տալիս՝ արժէ՞ արդեօք պրոպագանդ մղել այդ շրջանում։ Նորերս այդ աշակերտական կազմակերպութեան համագումարում՝ մեր կուսակցութեան պատկանող 12 պատգամաւորների հանդէպ՝ կային միայն 4 հակառակորդներ։

Մեր Մարտական Կազմակերպութիւնը, հարկաւ, ամենից աւելի տուժեց ռէակցիայից և պէտք է վերակազմէր։ Այժմ նա շատ աւելի փոքրաթիւ է, բայց գոհացնում է կուսակցութեան կարիքները,—դրա մասին կը վկայեն այն տեղեկութիւնները, որ զետեղած են մեր կենտրօնական օրգանի գրեթէ իւրաքանչիւր համարում։ Նրա գործունէութիւնը զարգանում է երկու ուղղութեամբ. 1) Անմիջական գործողութիւնների մէջ, այսինքն զինված յարձակումներ անձերի կամ կառավարչական հաստատութիւնների վրայ։ 2) Պրոպագանդի մէջ. դպրոցներ ստեղծելով, դասախօսութիւններ կարդալով, հրատարակութիւններ, կրթական այլևայլ կազմակերպութիւններ հիմնելով կամ եղածներին օժանդակելով և այլն։

Մեծ կարևորութիւն է տրւում մեզ մօտ հրատարակչական գործունէութեան։ Մենք ունինք մօտ 12 օրգան—կենտրօնական և տեղական — տպագրում ենք ահագին թւով գրքեր այլևայլ նիւթերի մասին։

Վերջապէս—սա բոլոր նախորդներից կարևորագոյնն է—մեր շարքերում վերջին տարիներս առաջ եկաւ գաղափարային հիմնական յեղաշրջումն։ Նախ՝ աւելի խորացել է մեր ծրագրի ըմբռնումը։ Մեր ընկերները այժմ արդէն պարզ գիտակցում են, որ մենք, սոցիալիստներս, լեհ աշխատաւորութեան շահերի համար, պիտի ձգտինք վերաստեղծելու լեհական անկախ պետութիւնը, որը պէտք է լինի ըստ կարելոյն ռամկավար, բայց որ, հարկաւ, լինելու է նոյնպէս „բուրժուական“, ինչպէս բոլոր միւս հանրապետութիւնները։ Իսկ առաջներում շատերը կարծում էին, թէ յեղափոխութիւնը իսկոյն պիտի տայ մեզ սոցիալիստական իրաւակարգ կամ մտածում էին, որ „չ՝արժէ իսկ“ յեղափոխութիւն անել, եթէ նա չպիտի հասցնէ միանգամից—Սոցիալիզմի...

Ա. ՎՐՕՆՍԿԻ

***

Լեհական Սոցիալիստ Կուսակցութիւնը, որի գործունէութեան մասին հրատարակում ենք սոյն համարում Վրօնսկիի լուրջ և ամփոփ տեսութիւնը, կատարեց անցեալ տարի ուշագրաւ յոբելեան։ Նա տօնեց իր գաղտնի դաւադրական օրգանի 250-րդ համարի ի լոյս ընծայումը։ Եզակի դէպք Ռուսաստանի յեղափոխական մամուլի պատմութեան մէջ։ Դիւրին բան չէ այդքան համարներ հրատարակել ամսէ-ամիս, գաղտագողի, „ստորերկրեայ“ նկուղներում, „երկրի“ մէջ, այսինքն ռուսա-

կան Լեհաստանում, ուր ոստիկանութիւնը շարունակ գործի վրայ է, ուր շարունակ խուզարկում են, ձերբակալում մարդկանց հետ գաղտնի տպարանները, տառերը, ձեռագիրները... Միշտ, սակայն, ձերբակալուածների տեղ՝ նորերն են երևան գալիս, նոր մեքենաներ ու գրաշարներ, նոր խմբագիրներ ու ցուցիչներ։ Եւ այդպէս երկար տարիներ։ Ինչպէս յայտնի է, մեր „Դրօշակ"ը, որ բոլոր հայ յեղափոխական օրգանների մէջ միակն էր „երկրի" մէջ տպագրուած, իբրև „ստորերկրեայ" հրատարակութիւն, շատ կարճ կեանք ունեցաւ։ առաջին համարից ու մի երկու թուցիկից յետոյ, տպարանը մատնուեց և թերթը վտարանդի եղաւ... անցնելով դէպի Ռումանիա, այնտեղից՝ Ժընէվ (քսան տարի սրանից առաջ)։

Լեհ միջավայրը շատ աւելի նպաստաւոր յայտնուեց գաղտնի ձեռնարկների համար — և այսօր ահա մեր առջևն է դրուած P. P. S-ի դաւադրական օրգանի 251-րդ փառահեղ, յոբելեանական համարը, որ տակաւին շարունակւում է Լեհաստանի ստուերում, խորհրդաւոր մի անկիւնում։ Անունն է՝ „Աշխատաւոր", „Robotnik", Organ Polskiej Partji Socjalistycznej։

Յոբելեանական այդ համարի մէջ մասնակցում են իրենց ողջոյնի նամակներով՝ Կամիլլ Հայսմանս, քարտուղարը Միջազգային Սոց. Բիւրոի, Եալմար Բրանտինգ, շվէտական սոցիալիստների պարագլուխը, Նատանսոն, Ձերնով, Ռուբանովիչ, ռուս սոցիալիստ յեղափոխականների կողմից և „Դրօշակ"ի խմբագրութիւնը։

„Դրօշակ"ի նամակի վրայ առանձնապէս ծանրանում է „Robotnik"ի խմբագրութիւնը, յիշեցնելով լեհ սոցիալիստներին ու յեղափոխականներին „Դաշնակցութեան" արժէքը և այն մտերիմ, բարեկամական կապերը, որ գոյութիւն ունին լեհ և հայ յեղափոխական կուսակցութիւնների միջև։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻԱՅ ԺԱԿԱՑԱՄԱՐՏՆԵՐԸ ԵՒ "ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

(ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ)

1909 թուին, երբ գահազուրկ արքան ռուս դեսպանատան ամառանոցից կառք էր նստում դէպի իր աքսորավայրը, մեկնելիս յայտնել էր իր շրջապատին, թէ „նախնիքս իրենց թրի ուժով են տիրել երկրին, ես էլ իմ թրի ուժով պիտի վերադառնամ կրկին տիրելու իմ գահին"։

Այս խօսքերը, որ այն ժամանակ թուում էին այրուած սրտի մխիթարանք, յետագայում քիչ մնաց, որ իրականութիւն դառնային։

Պարզ է, որ էքս Շահը Օդեսայում պարապ նստած չի եղել, որ նա ակտիվ գործունէութեան և սերտ յարաբերութեան մէջ է եղել յետադէմ տարրերի և կիսավայրենի ցեղերի հետ։ Պարսից սահմանադրական կառավարութիւնը այդ բանին լաւատեղեակ էր, ինչպէս ցոյց են տալիս ռուս-անգլիական դեսպանատներին ներկայացուած բողոքները, դրանով հանդերձ փոխանակ ի մի ամփոփելու երկրի լաւագոյն ուժերը, իրենց պարլամենտական տգիտութեամբ, ապիկար կաբինետների շարունակական փոփոխութեամբ, քաղաքական կուսակցութիւնների մէջ տիրող թայֆայականութեամբ, մի խօսքով երկրի շահը անձնականին զոհաբերելով, ստեղծել էին մի այնպիսի անիշխանութիւն, որից բնականաբար պիտի օգուտէր նախկին Շահը իր մտադրութեանց գործադրութեան համար։ Չպէտք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ եթէ այդպիսի թուլամորթ ու վախկոտ մի անձնաւորութիւն, որը թուում է թէ չպիտի մոռացած լինէր յեղափոխական բանակի ռումբերն ու կախաղանի վրայ ճօճւող իր հավատակիցների դիակները՝ չպիտի համարձակուէր այդպիսի վտանգաւոր քայլ անել, առանց արտաքին „ապահովութեան"։

Ռուս կառավարութեան հաւաստիացումները, թէ իբր նա տեղեկութիւն չի ունեցել էքս-Շահի գաղտնի մտադրութիւնների մասին և անգլիական յայտարարութիւնները իր չէզոքութեան մասին, մեր աչքերին նետած ոսկէ փոշիներն են։

Քննենք երկու պատերազմող կողմերի ուժը։ Ժողովուրդը, մասսան գրեթէ անտարբեր է, նա սովորել է անմռունչ ճնշուել ու կեղեքուել երկու ռէժիմի տակ էլ, նրա համար միևնոյն է՝ սահմանադրութիւնն է յաղթելու, թէ էքս-Շահը, նա սովորել է վիզը ծռել ուժի առջև և գրկաբաց ընդունել նրան։ Էքս-Շահի և Սալարդօվլէի յառաջխաղացումը արդէն ցոյց է տուել այդ տխուր իրողութիւնը։

Կառավարութիւնը ունէր իր տրամադրութեան տակ նորակազմ ռէժիմները, որ պատերազմող ուժ չեն ներկայացնում, թնդանօթաձիգներն ու Ամիրէ ձիաւորները, որոնք միջակ ուժ են, կոզակների բրիկատը, որոնց վրայ երբէք չի կարելի վստահիլ և կռիւ ուղարկել, և բախտիարի ձիաւորները, որոնք հայերից կազմուելիք մարտական խմբերի հետ կառավարութեան միակ յոյսն ու ապաւէնն էին ներկայացնում։

Բախտիարներն ամենայն արագութեամբ արձագանք տուին կառավարութեան կոչին։

Այդ ուժերի վրայ պիտի աւելացնել կառավարութեան մեծաքանակ արագհարուածեան թնդանօթները, վերջին սիստեմի հրացանները և առատ ռազմամթերքը, նաև այն բարեպատեհ հանգամանքը՝ որ ֆինանսները

գտնուում էին ամերիկացի խորհրդական Շուստերի ձեռքին, որը պատերազմական ծախսերի համար տրամադրելի է արել մօտ չորս միլիոն թուման և իր անձնաւորութիւնը, իբրև պատերազմական նախարարութեան խորհրդական։

Թշնամու բանակը բաժանուած էր երեք ճիւղերի։ Սալարդօվլէն գրաւելով Սէնէնդէճը և կազմակերպելով իր ուժերը, մեկնել էր այնտեղից մօտ 5000 ձիաւոր ու հետիոտն մարդկանցով։ Այնտեղ նրան միացել էին Զաֆ ցեղի քիւրդերն ու Ալի Ռզա-խան Կառուսին։ Այնտեղից նա մեկնել էր դէպի Քիրմանշահ և գրաւել էր այդ քաղաքը։

Ալի-Ռըզա խանը արդէն իր ձիաւորներով Քիրմանշահից յառաջացել էր և գրաւել Ասատապարը։

Գալով էքս-Շահին, նա Թուրքմէնների մէջ չգտաւ այն ընդունելութիւնը, որ սպասում էր։ Շնորհիւ Թուրքմէնների պատգամաւոր Ադինէ Մուհամեդ խանի մղած պրոպագանդի, որը գտնուում է այժմ իր ցեղի մէջ, Թուրքմէնների մեծ մասը երես դարձրին նրանից և հազիւ նա կարողացաւ իր շուրջը հաւաքել 1500 հոգի, որոնցով նա տիրեց Աստարապատը. դիմադրողներ այնտեղ չ'եղան։ Աստարապատում նրա ձեռքն ընկաւ երկու թնդանօթ և ժողովրդից կորզեց մօտ 25,000 թումանի գումար։

Այնտեղից բանակը երկու մասի բաժնուեց, մօտ 600 հոգի Արշատը Դօվլէի հրամանատարութեամբ առաջ խաղաց դէպի Շահռուդ, տիրեց այդ քաղաքը ու սկսեց յառաջանալ դէպի Ցաղան. կառավարութեան մի փոքրիկ բանակ, մօտ 400 հոգով ու երկու թնդանօթով փորձում է կասեցնել նրա յառաջխաղացումը, բայց թեթև կուից յետոյ զօրքի մի մասը անձնատուր է լինում, իսկ մի մասն էլ ապաստանում է մօտիկ սըրբատեղին ու յետոյ նոյնպէս անձնատուր լինում։ Բանակի հրամանատար Մասուդօլ-Մոլքը, մի քանի հոգով փախչում է Սմնան, ուսկից տեղեկագրում է կառավարութեան կուի արդիւնքը։ Այդպիսով Արշատը Դօվլէի առաջ բացւում է Խորասան-Թեհրանի ճանապարհը և նա շարունակում է անարգել իր յառաջխաղացումը։ Մահմեդ-Ալին թողնելով Շահ-Սալթանին Աստրաբատում, Գիւմուշթափէից նաւ է նստում և ցամաք իջնում Աշրաֆ, այնտեղից գրաւում է Սարի ու Բարֆրուշ և միանում Մազանդարանի խաների ու Ռէշիտ Սալթանի հետ, որոնք կարող են դուրս բերել մօտ 1000 ձիաւոր։ Ռէշիտ Սուլթանը, իբրև բանակի առաջապահ, գրաւել էր արդէն Տէմավենտի և Ֆիրուզքուհի բարձունքները։ Կառավարական բանակը Սարդար Մօհու հրամանատարութեան տակ, կազմուած ռէֆօրմէ զինուորներից, մուճահիտներից, էնիէ և բախտիարի ձիաւորներից՝ բռնել էր Իմամզատէ Հալիմի անառիկ կիրճը և պատրաստւում էր լուրջ դիմադրութեան։

Վերահաս վտանգից ցնցուած՝ քաղաքական կուսակցութիւնները անձնական հաշիւները մի կողմ թողնելով, լուրջ գործունէութեան դիմեցին, միջկուսակցային խորհրդաժողովը, կազմուած դաշնակցականներից, դեմոքրատներից, էթէդաղթաբուլուց և էթէդալիուններից, միջոցներ ձեռք առաւ։

Օգոստոսին Սավադքուհից լուր էր հասնում՝ թէ էքս-Շահի բանակը, որը անառիկ դիրքեր էր բռնել լեռան վրայ՝ օգտւելով գիշերւայ մթութիւնից յառաջացել և գրաւել է բանակի ձախ թեւի վրայ գտնուող զինուորների մի քանի դիրքերը։ Կառավարական բանակը, որ գտնուում էր Ֆիրուզքուհից 3 փառսախ հեռաւորութեան վրայ, այդ լուրն ստանալուն պէս առաջ է շարժուում. բախտիարները խիզախ մի գրոհով յետ են խլում դիրքերը և շփոթութիւն ձգում թշնամու դիրքերի մէջ. միւս կողմից էլ մուճահիտներն ու բախտիարներ առթից օգտւելով աջ կողմից սկսում են ռմբակոծել և ընդհանուր յարձակումով գրաւում թշնամու անառիկ դիրքերը ու նրան յետ մղում դէպի անտառը. թշնամուց սպանւում են մօտաւորապէս 120 հոգի, գերի ընկնում 52 հոգի, 150 հրացան և 2 թնդանօթ. սպանուածների մէջ են մի քանի նշանաւոր մազանդարանցի պետեր. հայ մարտիկներից սպանւում է մի համատանցի տղայ և վիրաւորւում երկուսը. 52 գերիները քաղաք բերուեցին. թշնամու ուժը այդ կողմում հաշւում էր մօտաւորապէս 2000. կուի մէջ եղել է Շահ Սալթանէն, բայց ինքը Մահմեդ Ալին, յայտնի չէր ուր պահուած լինելը։

Արշատը-Դօվլէն, որ գտնուում էր Սմնանում, օգտւելով Սմնան-խարի մէջ Տեհնամաք կոչուած գիւղում գտնուող կառավարական յառաջապահների փոքր թւից՝ մօտաւորապէս 40 պախտիարի և 150 օսանլու՝ յանկարծական յարձակմամբ ցրւում է նրանց, գերի վերցնելով մօտաւորապէս 20 պախտիարցի և մի մաս օսանլու. պախտիարցիներին տեղն ու տեղը գլխատել տալով յառաջանում է դէպի Խառ. Խառում գտնուող պախտիարցիները, Զէրզամը Սալթանէի հրամանատարութեան տակ յետ են նահանջում և ամուր դիրքեր գրաւում Խառի և Էրվանէկէյիի մէջ գտնուող լեռների վրայ. տեղիցս անմիջապէս օգնական ուժ է ուղարկւում նրան Էմիր-Մուճահիտ բախտիարցու հրամանատարութեամբ։

Լուր է հասնում, որ Արշատը-Դօվլէն, շեղւելով իր բնական ճանապարհից, որ անցնում էր Խառից Թեհրան, դուրս է եկել Վարաձնի դաշտը և մտադիր է այդ կողմով մտնել քաղաք. լուրը հաղորդւում է Զէրզամը-Սալթանէին ու Ամիր-Մուճահիտին, որոնք թողնելով Խառը, յառաջանում են դէպի Վէրամին. տեղիցս անմիջապէս ճանապարհւում է Քեռին հայ զինուորներով ու բախտիարներով, նրան հետևում են Լֆրեմը, Սարդար Բհատօրն ու Սարդար Մօհթալէօն նոր գունդերով ու թնդանօթներով։ Կռիւը, որ

Իմամզատէճֆերում սկսել էր արդէն Արշադը-Դովլի և Զերղամը Սալթանայի միջև՝ վճռական է դառնում, երբ հասնում են Թեհրանից գնացած գնդերը. Թշնամին երեք կողմից շրջապատած, լքում է կուի դաշտը և փախչում. ինքը Արշադը-Դովլէն վիրաւորուած բռնւում է, մեծ թւով սպանուած, վիրաւոր և գերի տալով. գերի են ընկնում նրա 3 թնդանօթները, ռազմամթերքը, մեծ քանակութեամբ հրացան և կանխիկ դրամ. իրեն հարցաքննելուց յետոյ, Թեհրանից ստացուած հրահանգների համաձայն, Եփրեմը տեղն ու տեղը գնդակահարել է տալիս նրան ու վերադառնում մայրաքաղաք։

Արշադը-Դովլի պարտութեամբ արդէն Մազանդարան-Խօրասանի կողմում Մահմեդ Ալիի ուժերը գրեթէ իսպառ խորտակուած էին։

Բռնապետութեան սիւներից մէկն էլ ընկնում է յանձին Նայիպ Հուսէյն Բաշուն. նա Հէրէնդի շրջանն աւերելուց յետոյ, առաջացել էր դէպի Քաշան, բայց Զիլ-Սուլթան բախտիարցին նրա առաջն կտրում է և Իմամզատէ Ապուզէյտում նրան շրջապատում։ Ծերունի աւազակապետը դիմադրութիւնն անօգուտ տեսնելով անձնատուր է լինում և ձերբակալւում։

Շուտով հրապարակ եկան Սալար Դովլէն, Սուլթան Դովլէն և մի շարք Նայիբ Հուսէյններ ու դրանց նման անձնաւորութիւններ, որոնք իրենց շուրջը հաւաքելով խառնակիչների ու թալանչիների խմբակներ, հակակառավարչական գործողութիւններ էին սկսել այս ու այն կողմում։

Կառավարութիւնը, որ բաւականաչափ ուժ չունէր բոլոր ուղղութիւնների վրայ արշաւելու, կենտրօնացրեց իր ուշադրութիւնը Մահմեդ Ալիի դէմ։ Սրան ի հանդէպ ուղարկած բանակը ունէր իբրև անուանական հրամանատար Սալար-Ֆաթէն, բայց իսկական հրամանատարը մեր ընկեր Ասլանն էր, որ կարողացել էր գրաւել ու խաղաղացնել ամբողջ Մազանդարանը։ Խլել էր մարտական ներից Բաշֆռուշն ու Սարին և Մահմեդ Ալիին փախցրել էր Գիւմուշթափա, որ ռուսական սահմանագլխի վրայ է ընկած։

Կրասնովոդսկիից մի նաւ էր ճանապարհւել դէպի այդ կողմը, Մահմեդ Ալիի տրամադրութեան տակ դրուելու համար։

Մազանդարանը կարճ միջոցում այն աստիճան խաղաղացրեց, որ կառավարութիւնը յետ կանչեց դաշնակցական անւան տակ կռւող մարտիկներին և մի խումբ ժանդարմների՝ ուրիշ տեղ ուղարկելու նպատակով։

Այժմ դառնանք Սուլթան Դովլէին և Թաւրիզի դէպքերին։ Ինչպէս յայտնի է, կառավարութեան դէմ ապստամբողներից մէկը և թերևս ուժեղագոյնը այդ անձն էր։ Թաւրիզի Անջումանը հեռագրում է կենտրօնական կառավարութեան, որ օգնութիւն հասցնէ, այլապէս իրենք ոչինչ անել չեն կարող։ Այդ հեռագրից պարզւում է, որ ժողովրդականներից սպանուած է 5 հոգի, իսկ հակառակորդներից 20-ից աւելի վիրաւորներ։ Թաւրիզում պաշարի մեծ պակասութիւն կար. թշնամին շարունակում էր պաշարել քաղաքը և պատրաստութիւն էր տեսնում ամեն կողմից յարձակւելու նրա վրայ։

Կառավարութեան ուժը փոքրիկ էր. նա իր ամբողջ ուշադրութիւնը դարձրել էր քաղաքի ինքնապաշտպանութեան վրայ։ Թաւրիզի շուրջը դիրքեր էին պահում դաշնակցականները։

Կացութիւնը սկսեց լաւանալ և յոյսեր ներշնչել, երբ քաղաքի բոլոր ուժերի հրամանատար նշանակւեց Թեհրանից ընկեր Դումանը։ Նրան էին ներկայացրած հայ ու թիւրք բոլոր խմբապետները և յանձնած թնդանօթները։ Ընկերը կարողացաւ իր շուրջը հաւաքել դաշնակցական մարտիկներից մի ստուար բազմութիւն։

Ռուս կառավարութիւնը, որ վաղուց ի վեր սովորութիւն էր արել պարսից բոլոր գործերում միջամտել, մէկէն ի մէկ յայտարարեց, որ նա թոյլ կը տայ կառավարչականներին՝ Թաւրիզից միայն 35 քիլոմետրի վրայ կռիւ մղել։ Այդ յայտարարութեան հետևանքը ահա թէ ինչ եղաւ.

Օգոստոսի 20-ին Ազի կամուրջի վրայով մի խումբ ձիաւորներ ուզում են քաղաք մտնել։ Քաղաքից իրենց առաջն են ուղարկում ժանդարմների մի խումբ։ Հազիւ մի քանի գնդակ արձակած՝ ռուս կօզակները գալիս են կռւի վայրը և ուզում են ձերբակալել ժանդարմներին։ Ընդհարման ժամանակ վիրաւորւում է մի օֆիցէր, Գումի անունով։ Ժանդարմներից յաջողւում է ձերբակալել 4 հոգու, որոնց հիւպատոսարան տանելուց յետոյ փոխադրում են ռուսաց բանակը և բանտարկում։ Իր այդ քայլը ռուս կառավարութիւնը բացատրում է նրանով՝ որ կռիւը 35 քիլոմետրից մօտիկ տարածութեան վրայ է եղել։

Սեպտեմբերի 6-ին Ռուզա Դովլէն մեծ ուժով Սարիգ-Ալլից և Շահ-Զաղանից յարձակում գործեց Թաւրիզի վրայ։ Կռիւը 7 ժամ տեւեց. Սուլթան Դովլէն մեծ ջարդ կերաւ և յետ նահանջեց։

Գալով Սալար Դովլին, նա Սուլթանաբատ էր, իսկ նրա մարդիկ Համադանը գրաւելուց յետոյ՝ այնտեղի և Ղազբինի մէջ եղած ճանապարհներն էին թալանում։ Կառավարութիւնը իր ուժերը կենտրօնացրեց նրա դէմ. կառավարական զօրքերը այլևայլ ուղղութիւններով առաջ գնացին, թշնամուն ամեն կողմից պաշարելու համար։ Բաւական թւով մուջահիդներ և բախտիարցիներ գնացին։ Մեր մարտիկներից գնացած են Սիմօնի, Արշակի և Շերամի խմբերը (75 հոգի) և Լուանի գընդակացիրներն ու խումբը (14 հոգի)։ Ապա գնացին Քեռին ու Եփրեմը իրենց տղաներով։

***

Աւելորդ չի լինի տեղեկացնել ձեզ և այն դէպքերի մասին, որոնք պարզում են ռուս կառավարութեան դէպի դաշնակցականներն ունեցած քաղաքականութիւնը։

Ամենից առաջ մեր դահիճները սկսեցին Ենգէլիյից։ Ռաշտի հիւպատոսի հրամանով Էնգէլիյի ագենտը ձերբակալում է Արշակ Սարուխեանին, որ տարիներ առաջ այնտեղ է եկել և յայտնի է իբրև պարսկահպատակ։ Նա զինուորագրութիւնից փախած է։ Նրան արդէն Կովկաս են ղրկել։ Ուրիշ 4 հոգու էլ կանչել է ու խիստ նկատողութիւն արել, որ նրանք յաճախել են այնտեղ մեր ընկերոջ դասախօսութիւնները և առհասարակ մասնակցել են պարսկական շարժումներին կամ անդամակցել են Հ. Յ. Դաշնակցութեան։

Բէնդէրգազից էլ հեռագրում էին մեզ, որ այնտեղ էլ մեր ռուսահպատակ ընկերներից ձերբակալուածներ կան։ Ռուսաց դեսպանատան պաշտօնեան պահանջում է արտաքին գործոց նախարարից յանձնելու նրան „Կրասնօվօդսկ“ պատերազմական նաւի նաւաստիներից մէկին, որ փախել է մի ինչ որ յեղափոխական Սուրէնի հետ. հակառակ դէպքում սպառնում է ձերբակալել այնտեղի դատաւորին և դաշնակցական ընկերներին։

Ղաւաստին Ղազբինից դէպի Թեհրան ճանապարհին ձերբակալում են, իսկ Սուրէնի մասին յայտնի չէ դեռ։

Սեպտեմբերի 2-ին ռուսաց հիւպատոսարանից մարդ են ղրկում Հայկ Տէր Օհանեանի ետևից և կանչում նոյն գործի համար։ Երբ սա ներկայանում է, ձերբակալում են։ Պատճառը նրա ռուսական թերթերին տուած ճիշտ տեղեկութիւններն են։ Նրա բռնելուց յետոյ՝ Եփրեմը հեռագրում է Տարդօվին (ռուսական մայրաքաղաքի թերթերի աշխատակից է, այստեղ եղած). „Հայկը ձերբակալուած է, թերթերին ճիշտ տեղեկութիւն հաղորդելու համար“։ Դրա վրայ ձերբակալուածին ազատ են արձակում։

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ

ՊԵՏՐ ԼԱՎՐՕՎԻ ՊԱՏՄԱՓԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹԵԱՆ ՏԵՂ

Ընդամենը 12 տարի է բաժանում մեզ ռուս մարտական մտաւորականութեան այն հոյակապ դէմքից *), որին իր երախտագէտ հայրենակիցները դեռ պայքարի օրերին „մեր ժամանակների ունիվերսալ գլուխը“ տիտղոսին են արժանացրել։

Պատմական կորովի մի դէմքի հասարակական նշանակութիւնը, նրա ամբողջական գնահատումը տալու համար անցած մի տասնամեակը առհասարակ շատ կարճ ժամանակամիջոց է։ Իսկ երբ հարցը Պ. Լավրովի նման անձնաւորութիւններին է վերաբերում, որոնք ամբողջ սերունդների տարածութեան վրայ, մի մտաւորականութեան լաւագոյն և ամենազգայուն մասը իրենց ուժեղ մտքի և անհատականութեան թովքին են ենթարկել,— ապա այդչափ կարճ ժամանակամիջոցները կորցնում են անգամ իրենց համեմատական արժէքը։ Այսօր մենք ձգտում ենք դեռ իրականացնելու այն, ինչ այնքան հետևողականօրէն և աննկունութեամբ քարոզել է մեծ ուսուցիչը։ Եւ այդ ոչ միայն խօսքով ու գրչով, այլ և գործով, կենդանի օրինակով։ Ասէք այսօր մեզ հետ է դեռ կենդանի մարդը իր անհատականութեան ամբողջ հմայքով, իր կարող մտքով ու կամքով։ Ասէք նրա հետ միասին դեռ նոյն օդն ենք շնչում, անում ենք նոյն զգացումներով, խորհում ու մտորում ենք այնպէս, ինչպէս նա է խորհել և մտորել։

Ցաճախակի դիտուած երևոյթ է, որ շատ հասարակական խոշոր դէմքեր, պատմական թատերաբեմից յետ քաշուելուց յետոյ դադարում են այլ ևս ժամանակակիցների յիշողութեան մէջ ապրելուց։ Նրանց կողմից համարեա թէ մոռացութեան են տրուում։ Որ նոյնքան յաճախ դիտուած է նաև տրամագծօրէն հակառակ երևոյթը,— դրանով միայն հասարակական մի շարք եղելութիւնների գոնէ առերևոյթ հակասական լինելն է փաստւում և ոչ առաջինը ժխտւում։

Կայ հասկանալին, բացատրելին։ Բայց կայ նաև անբացատրելին, առեղծուածայինը, յամենայն դէպս թուաբանական հաշիւներից խուսափողը՝ այդ օրինակ երևոյթների մէջ։

Պատմահասարակական խոշոր դէմքը ապրել, մտածել, զգացել է հասարակական, պատմական այրող պրօբլեմներով, այդ պրօբլեմների համար։ Դրանց որոշակի, վերջնական և նպատակայարմար լուծումը նրա որոնող մտայղացումների մշտական նիւթն է եղել։ Նա իր կամեցողութիւններով, գործողութիւններով և մտորումներով հասարակական պիտանի ուժերն է մղել դէպի այդ լուծումը։ Նա իր անհատական ուժի ամբողջ հեղինակութեամբ — շատ անգամ ընդունողների կողմից նոյնիսկ աննկատելի—ստիպել է հասարակական ոչ սակաւաթիւ անհատներին և գրուպաներին (խմբումն) մտածել այնպէս, ինչպէս ինքն է մտածել, զգալ և կամենալ այնպէս, ինչպէս ինքն է զգում և կամենում։ Անհատական մտածողութիւնը հասարակական կամ գրուպային մտածողութեան արժէքն է ստանում։ Անհատական զգացողութիւնը դառնում է հասարակական կամ գրուպային զգացողութիւն։ Անհատական կամքը, վերջապէս, հասարակութեան հեղինակաւոր նուիրագործումն է ստանում,— յաճախ լռելեայն, ի հարկէ։

Գալիս է վայրկեանը, երբ անհատը „դիմազրկւում“ է։ Բայց դա թւում է միայն. մոռացումը սոսկ ձևական է։

*) Հռչակաւոր ռուս սոցիալիստ-մտածողը վախճանուեց 1900 թ. փետրուարին Պարիզում, աքսորի մէջ։ Ծ. Խ.

Անհատը դիմաթող չէ լինում, նա չէ կորցնում իր անհատական մեծութիւնը, այլ հասարակութեանը, գրուպաներին է բարձրացնում կամ մոտեցնում իրեն, իր թովիչ անհատականութեան. բարձրացնում ու մոտեցնում է գէթ նրանց ընդհանուր տրամադրութիւնները։ Պատմահասարակական խոշոր դէմքը չէ մոռացւում իրօք. նա „մոռացւում“ է միայն (երևութական մոռացութիւն), որովհետև նա լուծւում է իր անհատականութեամբ հասարակութեան ամենազգայուն, ապա ուրեմն և լաւագոյն մասի գիտակցութեան մէջ. և մնում է այնտեղ պահւած, անկատելի։ „Մոռացւում է“, որովհետև հասարակութեան այս կամ այն մասը կրում է նրան իր մէջ. որովհետև „ժամանակներն“ են կրում նրան իրենց արգանդում։

Եւ որքան աւելի տևական են սոցիալ-պատմական այն պայմանները, որոնց մէջ շնչել ու գործել է պատմական դէմքը, որքան աւելի սերտօրէն է կապւել նա իր շրջապատի հետ և որքան աւելի զօրեղ է եղել նրա ազդեցութիւնը իր միջավայրի վրայ, այնքան ևս մեծ է „ապրել-մոռացւելու“ վտանգը, այնքան ևս հեռու է այն վայրկեանը, երբ պատմահասարակական դէմքը որոշակի գծերով կըսկսէ բիւրեղանալ հասարակութեան „յիշողութեան“ մէջ, կ'անցնի, ուրիշ խօսքով, պատմութեան գիրկը։

Այդ վայրկեանին է, որ պատմաբանի զգուշաւոր ձեռքը առանց վարանելու կը թափթփէ իր գրիչը՝ պատմական դէմքի իրական գնահատման առաջին էջը բանալու համար։

Լավրովի վերաբերմամբ՝ այդ վայրկեանը, դժբախտաբար, դեռ չէ հասած, որովհետև ռուսական հասարակական կեանքը Լավրովի վարդապետածից միայն ընչին բեկորներ, համարեա ոչի՛նչ է իրականացրել տակաւին։

Մեր մատնանշած հասարակական-հոգեբանական ուշագրաւ երևոյթը հազարաւոր դէպքերով է յայտնի մարդկային պատմութեան մէջ։ Նման երևոյթ տեղի ունի և ոչ միայն հասարակական պայքարի թատերաբեմում անմիջական հարւածներ տւող և ստացող կուատենչ հոգիների հետ, այլ և փիլիսոփաների։

Գերմանական, գուցէ և բոլոր ժողովուրդների ու ժամանակների խոշորագոյն մտածող՝ Կանտը, մոռացած էր իր հայրենիքի մէջ մի այնպիսի շրջանում, երբ գերման կրթւած հասարակութիւնը անգիտակցօրէն նրա դաւանած բարոյագիտութեան շնչովն էր ապրում. երբ գերմանական բարոյա-իմաստասիրական գրականութիւնը մեծ փիլիսոփայի մտքերի բեկորներովն էր կերակրւում։

Նման երևոյթ՝ Ֆրանսիայում։

Մոնտեսքիոյին, Ռուսսոյին և Վոլտերին ֆրանսիական ժողովուրդը քիչ, շատ քիչ էր կարդացել մինչ-յեղափոխական շրջանում։ Բայց ժամանակակից գրական և պատմական երկերը ցոյց են տալիս, և ականատեսները վկայում են, որ Մեծ Յեղափոխութեան նախօրեակին դժւար էր գտնել Ֆրանսիայում նօրմալ մէկին, որը իր սովորական արտայայտութիւնների մէջ չմերկացնէր մի կտոր Ռուսսո, Վոլտէր կամ Մոնտէսքիօ։

Ֆրանսական ժողովուրդը, անշուշտ, միջականօրէն իր գիտակցութեան մէջ էր առել այդ մեծ դէմքերի վարդապետածները։

La contagion! La fascination! —Վարակո՛ւմ, թովո՛ւմ, կ'ասէր, հարկաւ, Գիւստաւ Լը Բոն։

L'imitation!—ընդօրինակո՛ւմ, կը պնդէր Թերևս Գ. Տարդը։ Գուցէ և ամեն մէկը մի որոշ իրաւունքով. բայց ո՛չ միակ և ո՛չ ամբողջական իրաւունքով։ Պակասում է արխիմեդիան յենակէտը՝ երևոյթը իր պատմա-հասարակական ամբողջ բովանդակութեամբ և հոգեբանութեամբ վերցնելու համար։ Նմանօրինակ չափազանց շատ պարագաներում այդպիսի մի յենակէտ կամ գոյութիւն չունի՝ պատմահասարակական դէմքերի և դէպքերի գնահատման համար. կամ գոյութիւն ունին միաժամանակ մի քանիսը. և կամ իբրև միակը գտնւած վայրկեանին գնահատւող դէմքն ու դէպքը այնքան հեռացած են մեզնից, որ ժամանակի և տարածութեան թանձր քօղը անմատչելի է դարձնում մեզ կատարւածի կամ եղածի իրական վիճակը։

Բացարձակ „առարկայական“ վերաբերումը, որ հնարաւոր պիտի լինէր գնահատողի և գնահատւողի հեռաւորութեան պատճառով, յաճախ բերում է իր հետ անհրաժեշտօրէն նաև կիսատ վերաբերումի հնարաւորութիւնը. այո՛, համարեա անխուսափելիութիւնը։

Թերևս մի խոշոր մասով նման հիմք ունի յայտնի մոլորութիւնը, թէ՝ „մեծ ժամանակները իրենց մեծ մարդկանցն են ծնում“։

Իրո՛ք։ Մի „մեծ ժամանակի“ և մեծ մարդու կամ մարդկանց զուգադիպման դէպքում շատ աւելի դիւրին է, և՛ քաղաքական գնահատողների համար և՛ կոնկրետ ու գոհացուցիչ ժամանակակիցների բազմութեան աչքում, „մեծ ժամանակների“ լայն հիմքի վրայ սեղմ անհատին կանգնեցնելու, քան վերջինիս վրայ առաջինները։ Շատ աւելի դիւրին է՝ որոշ անհատին անորոշ „մեծ ժամանակների“ հետևանք համարել, քան թէ անհատին կամ անհատներին վերջիններիս պատճառ։ Բայց ինչ որ դիւրին է և առաջին իսկ բոպէից կոնկրետ երևացող՝ դեռ ևս իրականն ու իրաւացին չէ։ Ընդհակառակը։ Երբ հարցը հասարակական և անհատական հոգեբանութեան հետ խճողւած բարդ երևոյթներին է վերաբերում, հիմք կայ ենթադրելու, որ հեշտ և կոնկրետ երևացող մի „փոքրիկ“ դէպք զուգորդւած է մշտապէս մի շատ խոշոր մոլորութեան հետ։ Այդ երևոյթների մի խորունկ հոգեբանական և հասարակագիտական վերլուծութիւնն ցոյց կը տար և ցոյց է տւել,

որ յաճախ հակառակն է ճշմարիտ. որ „ժամանակները փոքր են, որովհետև չունին իրենց մեծ մարդիկը“։ Այդպիսի մի վերլուծութեան առաջին քայլը դեռ չ'արած՝ մեզ իսկոյն կը գտնէինք, օրինակ, նման հարցերի դիմաց։

Ռուսական „մեծ ժամանակնե՞ը“ արդեօք ծնեցին Հերցէնները, Չերնիշևսկիները, Սալտիկովները, Լավրովները, Բելինսկուն, Դոբրոլիւբովին և այլն, թէ՞ դրանք ստեղծեցին „մեծ ժամանակները“. ստեղծեցին, ի հարկէ, ոչ ոչնչից։ Արդեօք Ռուսսօն, Վոլտերը, Մոնտէսքիոն էի՞ն, որ դրին ֆրանսիական „մեծ ժամանակների“ սկիզբը, կամ գոնէ մեծ չափով նպաստեցին դրան, —թէ՞ այդ փայլուն դէմքերը դադարեցին այլևս արտադրելուց, հէնց որ ֆրանսիական „ժամանակները“ թօթափեցին իրենցից „մեծութեան“ ծիրանին։

Այլ հարցում։ Լուդվիգ Բիւոնները, Հայնէները, „Նրիտասարդ Գերմանիայի“ փայլուն պլեա՞դն էր արդեօք, որ բերեց Strum und Drang, թէ՞ գերմանական „ժամանակները“ իրենք իրենց պէտք է արդէն փոթորկուէին, եթէ անգամ գերմանացի մայրերը փոթորկոտ հոգիներ չծնէին։

Բայց „մեծ ժամանակներին“ հակադրւում են յաճախ „փոքրիկ ժամանակները“։

Եւ կրկի՞ն։ Սակա՞ւ են փոքր երևացող այնպիսի ժամանակներ, որ „մեծ“ լինելու մէկից աւելի հնարաւորութիւն ունին իրենց ծոցում, սակայն ճնում են „փոքրիկ“, որովհետև դեռ չկան, դեռ թագնուած են նրանց մեծ դարձնող դէմքերը։

Ե՞րբ, ո՞ր դարում, ո՞ր ժողովրդի մօտ աւելի շատ տրտունջներ են բարձրացել սերնդի մանրացման առթիւ, քան մեր ժամանակում։

Նորից հարց է. իրօք սերունդն է մանրացած. արդեօք ժամանակնե՞ը կամ մայրե՞րն են ավլացել, այլևս „մեծեր“ չեն ծնուում թէ՞ այդ „մեծերը“ այնչափ շատ են, որ մէկը կամ երկուսը անհատօրէն չեն կերպաւորւում հասարակական ֆոնի վրայ։ Թէ՞ անհատի հանդէպ ցցուած պրոբլեմները իրենց հսկայական և բազմակողմանի լինելուն պատճառով՝ այդ անհատի „մեծութիւնն“ են նսեմացնում։ Թէ՞ գուցէ նախկին ժամանակները բաժան-բաժան չ'անելով անհատի հոգեկան կարողութիւնները, կենտրօնացնելով նրանց համեմատաբար սակաւաթիւ ու միակողմանի պրոբլեմների շուրջը, հնարաւորութիւն են ընձեռել նաև աւելի մեծութեամբ երևան գալու։

Կամ գո՞ւցէ այն պատճառով, որ „մեծ“ տիտղոս կրող էութիւնը մի խոշոր մասամբ ուրիշ բան չէ, բայց եթէ „անանուն հերոսների“ հմայքը, հերոսներ, որ ամեն տեղ են, ամեն ժողովրդի մէջ, ամեն դարում։ Մի տեղ աւելի, մի այլ տեղ պակաս։

Մի Վայլինգ, մի Լասսալ, մի Լիբկնեխտ, մի Բեբել մեծ հոգիներ են, անշուշտ. մեծ՝ թէկուզ հէնց միայն իրենց իդէալների անաղարտութեամբ, դրանց անկուն, մոլեռանդ հետապնդումով և փոթորկոտ հոգիներ։ Հետևա՞նք են դրանք իրենց ժամանակի մեծ շարժումներին, թէ՞ այդ շարժումները իրենց մեծութեան մի խոշոր մասը պարտական լինելով նման նախորդներին, աւելի ևս մեծանում են դրանց անձնական մասնակցութեամբ։

Բաբեօֆ, Պրուդօն, Լուի Բլան, Ֆուրէս, սրանք ևս խոշոր են ոմանք իրենց հոյակապ յղացումներով, ուրիշներ իրենց կամքով, մարտական խառնուածքով։

Ո՞վ կարող է լուսաբանել նոյնիսկ չափազանց անհատական, ուստի և նուազ անհատապաշտ գերմանացիների խոշոր սոցիալական շարժումը՝ առանց ծանրանալու Լասսալների, Բեբելների, Լիբկնեխտների վրայ։ Ծայրայեղ դոգմայնութիւնն իսկ՝ ինքզինքը թերի է ցոյց տուել այդ լուսաբանութեան մէջ։

Ո՞վ կարող է առանց դոգմային մատնողութեանը զոհուելու, բացատրել անհատապաշտ և նուազ անհատական ֆրանսիացիների սոցիալիստական շարժման ուժն ու ծաւալը, առաքինութիւններն ու սխալանքները՝ անհատի հմայքից անջատ ու անկախ։

Վիճելի հարցեր են. մասամբ և վիճած։

Մի բան պարզ է. Պ. Լավրովը մէկն է այն դէմքերից, որոնք իրենց անհատական ամբողջ թափով, պատմահասարակական գործելով ու հեղինակութեամբ „մեծ ժամանակների“ աքսիոմատիկ երևացող տեսութիւնը առնուազը պատմութեան սրբագրական սեղանի առջև են հրաւիրում։ Առանց խոշոր դղրդումների ու շշուկների, իր լուիկ հմայքով ապրած ու գործած մարդը ապրում է հասարակութեան լաւագոյնների խորքերում, լուծւում է այդ գիտակցութեան մէջ։ Եւ յաճախ չափազանց դժուար է նոյնիսկ մի յայտնի վայրկեանում՝ որոշել, թէ որտեղ է վերջանում անհատականը և որտեղից սկզբնաւորում հասարակականը, խմբականը, մասսայինը։

Լավրովի զարգացման պատմութիւնը իր գործնական հատուածի մէջ ռուսական իրականութեան պատմութիւնն է. իսկ տեսական աշխարհում՝ մասամբ նաև եւրոպական մտքի զարգացման պատմութիւնը։

Նա ռուսական առաջին, գիտակցական փիլիսոփան է։ Առաջինը գոնէ, որ Արևմուտքում կանտեան և կոնտեան փիլիսոփայութեան ազդեցութեան տակ սկզբնաւորուած հակաստուածաբանական և հակաքրիստոնեական հոսանքը ճշգրտօրէն ըմբռնեց, փիլիսոփայական նոր ուղղութեանը քննադատօրէն հետևեց, մէկ կամ մի քանի կէտում ինքնուրոյնաբար շեղելով թէ՛ մէկից և թէ՛ մի քանիսից։

Նա ռուսական սուբեկտիվ (ենթակայապաշտ) հասարակագիտութեան—կամ ինչպէս Արևմուտքում կարծւում է—„ռուսական սոցիոլոգիայի“ ականաւոր հիմնադիրներից է. և Միխայլովսկու, Չերնիշևսկու հետ

հասարակագիտական այդ դպրոցի տաղանդաւոր հիմնաւորողն ու զարգացնողը։

Նա միաժամանակ և մարդաբան է, խոշոր երուդիցիայով. համարեա միակը, որ իր մարդաբանական ընդարձակ ծանօթութիւնը այնքան միաձոյլ կերպով շաղկապել է իր ընկերվարական հայեացքների հետ։

Նա ռուսական պոզիտիվ (դրապաշտ) բարոյագէտն է. ամենակորովին՝ արդի դասակարգային կուին բարոյագիտական հիմնաւորումն տալու փորձը ձեռնարկողներից. և առաջիններից։

Նա Զերնիշևսկու հետ հասարակական մի ամբողջ շարժման պարագլուխն է, զեկավարը, գրեթէ ստեղծողը։

Նա այդ շարժման միջազգային ներկայացուցիչն է 1871-ի Ֆրանսիայում։

Նա, վերջապէս... Լավրովն է։ Անունն իսկ շատ բան է ասում մեր սրտին և մեր ուղեղին. „Հանիբալեան երդման“ մեծահռչակ օրերին, տեմպերամենտով լի երիտասարդ „ծերուկը“ և „Հանիբալեան երդմնազանցութեան“ վատաբախտ օրերին քչերի հետ իր դրօշակին հաւատարիմ մնացած ծերուկ երիտասարդը։

Բոլորը չեն սրանք. բայց գլխաւորներն են։

Նիւթ առնել այս ամենը այն դէպքում, երբ մենք նպատակ ենք դրել տալ ընթերցողին մի ներածութիւն դէպի Լավրովը՝ որպէս ամբողջական և գրանիտեայ անհատականութիւն, կը նշանակէր թեքուել մեր նպատակից. կը նշանակէր անել անարդարացին՝ ունիվերսալ (հանրագէտ) մտածողի վերաբերմամբ. աւելի ևս, որ մենք պիտի սահմանափակուինք մի քանի տասնեակ էջերով։

Միւս կողմից. պոկել Լավրովի անհատականութեան մի մասը և ուշադրութեան առնել սոսկ այդ. բաժանել միանցից Լավրով-փիլիսոփան, Լավրով-հասարակագէտը և բարոյագէտը, Լավրով-մարդը, կը նշանակէր ոչ միայն հակառակ անարդարութեան մէջն ընկնել, այլ և Լավրովին հասկանալու, ճանաչելու խնդիրը սկզբից և եթ փխրուն հողի վրայ դնել։

Լավրովը ամբողջական մարդն է. ամբողջական, երբ նա իրաւացի է, բայց ամբողջական նաև, երբ նա առերևոյթ սխալանքի մէջ է։ Որովհետև նա սկզբունքի, դաւանանքի մարդն է։ Կամքի, մտքի և գաղափարի մարդը. որոնցից մէկը — վերջինը — հեռանկարներն է ուրուագծում նրա առջև. միւսը — միտքը — բովանդակութիւն դնում դրանց մէջ. երրորդը թափով մղում դէպի իրագործումն։

Der Wille zur Macht.

Լավրովը՝ դրական, հականիշէական մտքով՝ այս արտայայտութեան իրականացումն է։

Նրա համար չկայ թէօրիա և պրակտիկա ջոկ-ջոկ. տեսութիւն և գործնականութիւն իրարից անջատ։ Նա ինքը ամբողջովին թէօրիայի և պրակտիկայի միացումն է, դրանց խառնումը, իրար մէջ լուծումը, սինթէզը։

Անկարելի է մարդաբան, հասարակագէտ, փիլիսոփա, բարոյագէտ կամ սոցիալիստ Լավրովը իրարից պոկել, առանց գրանիտեայ կերտուածի ամբողջականութեան մէջ խոշոր ճեղքուածներ առաջացնելու։

Մարդաբան Լավրովը հետախուզում է հասարակութեան և անհատների կեանքում ներգոյ հոգեբանական մոմենտների հիմունքները և ծագման կարգով դրանց իրենց բնախօսական գործօններին վերածում։ Նա աչքի առաջն է քաշում ֆիզիքական և ֆիզիօլոգիական պրոցէսներն առհասարակ։

Հասարակագէտ Լավրովը մարդաբան Լավրովին ձեռք ձեռքի՝ բնախօսական հողի վրայ առաջացած հասարակա-տնտեսական պահանջների, այդ պահանջներից ծագած հասարակական կերպաւորումների և ընդհանուր հասարակական կազմի կնճիռներն է բաց անում, ընկերային հաստաշխութեան զարգացման ձևերի պայմաններն է քննում, մէկ կամ միւս մութ անկեան վրայ գիտական հետազօտութեան պայծառ լոյսը թողնելով։

Փիլիսոփա-Լավրովը մերթ մարդաբանական և հասարակական հետազօտութիւնների տուած հետևանքներից ընդհանուր հիմունքներ է դուրս բերում, մակարդակը ընդլայնում, մերթ նախօրօք կազմած փիլիսոփայական սկզբունքների և ընդհանրացումների համամատ մարդաբանական և հասարակագիտական անմատչելի դաշտերը գիտական հետազօտութեանը մատչելի դարձնում։

Բարոյագէտ Լավրովը համաձայնեցնում է պատմա-փորձնական իրողութիւնները և փիլիսոփայական մտայղացումները (*Begriff*) գործնական և նպատակայարմար հասարակակենցաղի ու անհատական կեանքի պահանջների հետ։ Պատճառների և հետևանքների տարերային, բնագիտական պահանջի տեղ՝ նա առաջադրում է նպատակների և միջոցների բարոյագիտական „ստեղծագործող պահանջը“։

Վերջապէս, սոցիալիստ Լավրովը գիտական այդ ընդարձակ զինարաններից վարպետօրէն դուրս կորզած զէնքերն է սեղմում աշխատաւորների ջլուտ բազուկների մէջ, պատմական կուի յաղթանակի խրախուսանքով նրանց յեղափոխական կորովը հրահրելով։

Ստացւում է մի ուշագրաւ մտաքառուցուածք, որտեղ գիտական հետազօտութեան մի բնագաւառը երկու կամ աւելի օղակներով կապուած է միւսի հետ. որտեղ ո՛չ մէկը սոսկ պատճառ կամ հետևանք է, այլ մէկը և միւսը միաժամանակ. որտեղ տարբեր մասերը անքակտելի կապերով ընդգրկում են իրար և առաջ բերում կառուցուածքի ճարտարարուեստ ամբողջականութիւնը։

Բարեբախտաբար, կայ մի բուսականաչափ սեղմուած կէտ, ուր Լավրովը թոյլ է տալիս իրեն ճանաչել իր ամբողջականութեան մէջ — գոնէ հիմնական գծերով։ Դա Լավրովի պատմափիլիսոփայութիւնն է։

Պատմափիլիսոփայութիւնը մի դոգմատիկ և խորհրդապաշտ մտածողի համար յաճախ այլ բան չէ, քան իրականութիւնից կտրուած, եթերի մէջ սաւառնող ինչ որ բացարձակ իդէաների, ինչ որ խորհրդաւոր յայտնագործութիւնների մի ժամագրավայր։ Ամեն այդպիսիների համար պատմափիլիսոփայութեան մէջ պրակտիկան ոչ միայն ստորադասւած է թէօրիային, այլ նոյնիսկ յաճախ պակասում է այդ պրակտիկան։

Ռէալիստ (իրապաշտ) Լավրովի համար, սակայն, պատմափիլիսոփայութիւնը ներկայացնում է այն կիզակետը, որտեղ ձուլւում են իրար հետ թէօրիայից և պրակտիկայից եկող ճառագայթները և երկու շրջանների այդ ճառագայթների նպատակայարմար զուգադիպութիւնից առաջացած նոր խուրձերը կրկին սփռում չորս կողմ։ Եւ միամիտ ու մոլորութեան մէջ կը լինի նա, ով կը ջանայ ամեն մէկը այդ ճառագայթներից բաժանել միւսից և մատնանշել. „ահա՛ թէօրիա՞ն, ահա՛ պրակտիկա՞ն“։

Եթէ խօսելու լինինք Լավրովի լեզուով, նրա պատմափիլիսոփայութիւնը „ընթերցողին է դիմում ո՛չ միայն անցեալին վերաբերող խօսքերով, այլ և ներկային“։ Այլ և ապագային —կ՚աւելացնենք մենք։

Ամեն պատմափիլիսոփայութիւն անհրաժեշտաբար այդպիսին չէ։ Բայց Լավրովինը իր տրամաբանական ամբողջ կառուցուածքով, իր բարոյահասարակական բովանդակ լոգիկայով այդպիսին է։

Եւ ամեն գիտնական ու ճշմարիտ պատմափիլիսոփայութիւն այդպիսին պէտք է լինի։

Պատմութեան փիլիսոփայական ըմբռնումը ըստ Լավրովի, պէտք է լինի ոչ միայն իրական հողի վրայ առարկայականութեան հնարաւորսահմաններում պատմական անձնաւորութիւնների և դէպքերի ենթակայական գնահատումը, այլ և „ժամանակակից անձնաւորութիւններին պատմութեան այդ միակ-իրական և զարգացած մղիչներին՝ ցանկալի և հնարաւոր գործունէութիւնը ցոյց տալու“ ուղին։

Ահա թէ ինչու մտադրելով այստեղ ուրուագծելու Լավրովի պատմափիլիսոփայական սիստեմը իր հիմնական կէտերով—հնարաւորին չափ՝ մտածողի սեփական արտայայտութիւններով, թէև ոչ միշտ բառացի — մեզ թւում է, որ այդպիսով կատարած կը լինենք դէպի մեծ ուսուցիչը ունեցած մեր պարտականութեան առաջին, թէկուզ շատ փոքրիկ մասը։

Այստեղ է, որ ներածօրէն կը ճանաչենք նաև պատմահասարակական հոյակապ դէմքը, նրա ուժեղ անհատականութիւնը։

Լավրովի պատմափիլիսոփայութիւնը ամենավստահելի ներածութիւնն է դէպի Լավրով-անհատականութիւնը, դէպի ամբողջական մարդը։

ՍՆԱՐ

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ՍԵՊԱՐԱՏԻԶՄԸ“ ԱՇԽԱՏԱՒՈՐԱԿԱՆ ԾԱՐԺՄԱՆ ՄԷՋ

(ՆԱՄԱԿ ՎԻԷՆՆԱՑԻՑ)

II

Այո, ազգային յաւիտենական կնճիռն է, որ բորբոքւում է —սինդիկալիզմի հողի վրայ—Աւստրիայի չեխ ու գերման սոցիալիստների միջև։ Ազգայնական համերաշխութեան ուժեղ բնազդն է, որ խօսում է չեխ ընկերվարականների մէջ։ Մեղադրել նրանց՝ թէ գիտակցաբար դաւաճանում են ինտերնացիոնալին, ամբաստանել նրանց թթու, մոլեռանդ ազգամոլութեան, շովինիզմի մէջ—ինչպէս արեցին ոմանք—անհնարին է։ Համոզուած սոցիալիստներ են այսպէս անւանւած չեխ „անջատականները“, բայց և պահանջում են ինքնօրինութիւն, ավտոնոմիա՝ նաև տնտեսական, արհեստակցական գործունէութեան ասպարէզում։

Ինչպէս ասացինք, խնդիրը դրուած էր Կոպենհագի Համագումարի առջև և երկար, աղմկայոյզ վիճաբանութեան մէջ արտայայտեցին թեր և դէմ կարծիքներ։

Մօտ յիսուն հազար չեխ բանւորներ յանկարծ անջատւում են Վիեննայի համաաւստրիական կենտրոնից և հիմնում են արհեստակցական միութեան նոր ու զուտ ազգային կենտրոն, իրենց մայրաքաղաք Պրագայի մէջ։ Ինչպէ՞ս է վերաբերում Սոցիալիստական Ինտերնացիոնալը այդ խոշոր անցքին։

Միանգամայն բացասաբար։ Գրեթէ միաձայն—Ֆինլանդիայի 5 ձայնի և Թուրքահայաստանի պատգամաւորների ձեռնպահութեամբ — Կոպենհագում գումարւած ինտերնացիոնալը յայտարարեց, որ չեխերը սխալ ճամբու վրայ են, որ ապակենտրոնացումը տնտեսական հողի վրայ կորստաբեր է և որ նրանց քայլը յղի է վնասակար հետևանքներով ամբողջ միջազգային աշխատաւորական շարժման համար։

Մի քանիսը Կոպենհագի Կոնգրէսի անդամներից առաջարկում էին ծայրայեղ ու վիրաւորական բանաձև՝ չեխ „անջատականների“ դէմ. առաջարկում էին դատապարտել նրանց, որպէս դաւաճանների։ Այդ մտքով էր խօսում ի միջի այլոց Լէգիէն, գերմանական սոցիալ-դեմոկրատիայից։ Կոնգրէսը սակայն — դարձեալ գրեթէ միաձայն — յետ մղեց այդ տեսակ առաջարկները, հասկացրեց, որ չեխերը գործում են bonne foi-ով, որ նրանք անկեղծօրէն համոզուած են իրենց տակտիկի օգտակարութեան մէջ, որ նրանք չեն տարւած հակագերմանական տրամադրութիւններով և այլն։

Ահա այն գանգատների և մեղադրանքների տարափը, որ թափեցին չեխ „անջատականների“ վրայ Կոպեն-

հագի Համագումարում *)։ Նրանք գալիս էին գլխաւորապէս գերման-աւստրիական սոցիալիստներից։

„Վերջին տարիներս—ասում է Հիւբեր—չեխ կուսակցութիւնը ամեն բան արաւ, ինչ որ կարող էր, որպէս զի քայքայէ և ցրէ սինդիկաները (արհեստակցական միութիւնները) և բաժանէ նրանց ութ ազգային խմբակցութիւնների միջև, որոնք կազմում են Աւստրիան... Կարելի է յիշել այս ու այն գործարանը, ուր կարելի է համախմբուած գտնել մեր երկրի բոլոր ութ ազգութիւնները։ Արդ, եթէ մենք կամենում ենք ձեռք բերել տնտեսական իրաւունքներ, եթէ ուզում ենք կերպարանափոխել աշխատանքի ու օրավարձի պայմանները, անհրաժեշտ է ստեղծել մէկ միացեալ արհեստակցական կազմակերպութիւն, ուղղուած ընդդէմ բանւոր դասակարգի անմիջական շահագործողների։ Կոիւը կապիտալիզմի դէմ անհնարին է դառնում, եթէ բանւորական կազմակերպութիւնները մնան բաժանուած և եթէ ձեռնարկող կապիտալիստները զօրաւորապէս կազմակերպուած լինին մէկ միացեալ խմբակցութեան մէջ։ Չեխ կուսակցութիւնը ստեղծել է մի շարժում չեխ աշխատաւորների մէջ անջատական նացիոնալիզմի ոգով,—մի շարժում, որ վտանգաւոր է ոչ միայն արհեստակցական, այլ և առհասարակ սոցիալիստական շարժման համար... Նրանք աչքից թողել են սոցիալիզմի մեծ նպատակը։ Մենք յուսով ենք, որ նրանք կը վերադառնան մարքսիստական հին ճշմարտութեան. „պրոլետարներե՛ր բոլոր երկրների—միացե՛ք“։

„Ամեն մի արհեստակցական աշխատանքի առաջին սկզբունքն է՝ միացնել աշխատաւորներին և ոչ բաժանել—յայտարարում էր մի ուրիշ աւստրիացի պատգամաւոր Բ ե ե ր... Արհեստակցական միութիւնը **) պէտք է հիմնուի ոչ թէ երկիրների, այլ „պետութիւնների“ վրայ։ Այդպիսով մեծ ծառայութիւն կը մատուցանէիք աւստրական շարժման և միջազգային սոցիալիզմին“։

„Մեր չեխ ընկերները, ասաց Լէգիէն, դէմ են գնացել Ինտերնացիոնալի սկզբունքներին, կազմալուծելով սինդիկաները... և սահմանելով անջատական (ազգային) կազմակերպութիւններ...

„Պէտք է դատապարտել չեխ անջատականներին—եզրակացնում է Լէգիէն... Եթէ թոյլ տրուէր սինդիկաները հիմնել ազգային գծանի վրայ, շուտով չէր գտնուի մի երկիր, ուր սինդիկային կազմակերպութիւնը բաժան-բաժան չը լինի։ Մենք կունենայինք այն ժամանակ Գերմանիայում լեհական, դանիական, ֆրանսիական, գուցէ նոյնիսկ հոլլանտական սինդիկաներ (արհեստակց. միութիւններ)...

„Սինդիկային Ինտերնացիոնալը հիմնուած է հետևեալ սկզբունքի վրայ. քանի որ շարժումը և ղեկավարութիւնը միևնոյնն են, բոլոր աշխատաւորները, առանց ազգութեան ու լեզուի խտրութեան, պէտք է միանան մէկ կազմակերպութեան մէջ... Մենք գերմանացիներս, հրատարակում ենք իտալերէն լեզուով մի թերթ այն հազարաւոր իտալացի պանդուխտների համար, որ գալիս են մեր երկրում աշխատելու և նոյնիսկ տալիս ենք նրանց յատուկ իտալացի պրոպագանդիստներ։ Սակայն նրանք չեն կարող կազմել մի առանձին կազմակերպութիւն։ Նրանք պատկանում են մեր կենտրոնական գերմանական կազմակերպութեանը... Առաջիկայ Համագումարը այլ ևս չը պիտի զբաղուի այս խնդրով, այլ միայն կը քննի այն հարցը՝ թէ արդեօք չեխ անջատականները պատկանո՞ւմ են Ինտերնացիոնալին“...

Լեհաստանի պատգամաւոր Կ ա ր ս կ ի.

„Չեխերը պատճառաբանում են, թէ Աւստրիայում Սոցիալ-դեմոկրատիան կազմակերպուած է ազգայնօրէն, ուստի արհեստակցական միութիւններն ևս պէտք է կազմակերպուին ազգայնօրէն... Սինդիկային միութիւնը պէտք է որ, ընդհակառակը, օգնէ մեզ՝ յաղթահարելու քաղաքական ֆեդերալիզմը (ապակենտրոնացում)։ Զգոյշ կացէ՛ք, չեխ ընկերներ, եթէ շատ հեռու մղէք ձեր ֆեդերալիստական ոգին, 3 տարի չի անցնի և հակառակ լեհերի բարի կամեցողութեան, մենք կունենանք մի լեհ քաղաքական արհեստակցական կենտրոն և շուտով 10 կամ 12 ուրիշ այլևայլ արհեստ. կենտրոններ... Նրանք, որոնք բաժանում են սինդիկաները կապիտալիզմի հանդէպ, ոճիր են գործում... Հնարաւոր է ամենամեծ չափով միութիւն ձեռք բերել և կենտրոնացնել սինդիկաները։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ բոլոր աշխատաւորների կուլտուրական պահանջները և լեզուական շահերը պէտք է ի նկատի առնուին“...,

Գ ր օ յ լ ի խ (Շվեյցարիա).

„Դատապարտելու խնդիր չը կայ այստեղ. չեխերը շիտակ են ու անկեղծ, բայց Կոնգրէսը իրաւունք ու պարտաւորութիւն ունի հաստատելու, որ նրանք սխալուած են և որ ճշմարտութիւնը կենտրոնացման մէջ է“։

Վ ի կ տ օ ր Ա դ լ ե ր (Աւստրիա).

„Մենք պիտի ջանանք պահպանել Աւստրիոյ բոլոր սոցիալիստ կուսակցութիւնների միջազգային կենտրոնացումը, թէև նա ուժեղ սպառնալիքի տակ է գտնուում ներկայումս... Չեխ ընկերները յայտնում են, որ սինդիկաները պէտք է բաժանուած մնան, քանի որ աւստրիական Սոցիալ-դեմոկրատիան էլ բաժանուած է ըստ ազգերի։ Բայց քաղաքական կուսակցութիւնների բաժանումը կատարուել է ընդհանուր համաձայնութեամբ և ոչ խզումով։ Չեխ ընկերների գլխաւոր կարիքները միշտ

---

*) *Huitième Congrès Socialiste International Compte Rendu Analytique.*

**) Թէ ի՞նչ է արհեստակցական միութիւնների կամ սինդիկաների էութիւնն ու պաշտօնը—տես այդ մասին Ե. Թոփչեանի գրքոյկը („Արհեստակցական միութիւններ“, հրատ. „Ցառաջ“) և „Հոսանքները“, հրատ. „Դրօշակ“։

ի նկատի են առնուել լայն, շատ լայն, գուցէ չափազանց լայն չափով (բացականչութիւն չեխերի կողմից)... Չեխերը, լեհերը, իտալացիք և սլովէնները ունին աւելի հարուստ սինդիկային մասուլ, քան գերմանացիք (աւստրիական գերմանացիք)։ Բնականաբար միշտ լինում են մի քանի ազգային գանգատներ։ Բայց մի՞թէ այդպիսի անհամաձայնութիւններ չեն առաջանում նաև ազգային միապաղաղ կազմակերպութիւնների մէջ։ Եթէ բոլոր կարիքները միանգամից չեն կարողացել բաւարարութիւն ստանալ, մի՞թէ կարելի է ասել, որ Վիէննայի համապետական յանձնաժողովը անտարբեր է գտնուել չեխ սինդիկաների վերաբերմամբ... Դուք չէք ուզում կենտրոնացումն Վիէննայում, բայց դուք ուզում էք այդպիսի կենտրոնացում Պրագայի մէջ... Մէկ թեթև տարբերութիւն միայն կայ Վիէննայի և Պրագայի կենտրոնացումի մէջ. Վիէննայինը միացնում և ուժեղացնում է պայքարի համար, այն ինչ՝ Պրագայինը՝ բաժանում է և թուլացնում պայքարի միջոցները... Մենք չենք ուզում վիրաւորել չեխ ընկերներին, քանի որ երկար տարիներ պայքարել ենք նրանց հետ թև թևի և պիտի շարունակենք պայքարել յանուն նոյն դատի... Ես խնդրում եմ Ինտերնացիոնալին՝ չքացնել մեր արհեստակցային շարժման միջից անհամաձայնութեան ամէն մի կայծ։ Դուք չէք կարող այսօր դատապարտութեան վճիռ արտասանել չեխ ընկերների դէմ, այլ միայն մի կոչ ուղղել նրանց»...

Օտտօ Բաուէր (Աւստրիա).

„Ես կարծում եմ, որ օտար երկիրների մեր ընկերներից շատերը դեռ չեն ըմբռնել ճշտապէս մեզ առաջադրուած պրոբլեմը... Կացութիւնը բաւական արդէն գէշ կը լինէր, եթէ մենք գործ ունենայինք Աւստրիայում միմիայն տնտեսական սահմանագծումների հետ։ Բայց չեխ ընկերները շատ աւելի հեռու են գնում։ Նրանք ուզում են իրենց ավտոնոմ (ազգային, ինքնօրէն) կազմակերպութիւնների մէջ մտցնել ցիր ու ցան չեխ աշխատաւորներին, մինչև իսկ երբ նրանք բնակւում են ոչ-չեխ շրջաններում։ Նրանք ուզում են բաժանել սինդիկաները ոչ թէ ըստ երկրային սահմանների, territoire-ի, այլ ըստ ազգութեան։ Եթէ օրինակ մի գործարանի մէջ աշխատում են 200 գերմանացի և 3 չեխ, այդ երեք չեխ ընկերները պէտք է գրուին Պրագայի կենտրոնի վրայ (ուժգին բողոք չեխ պատգամաւորների կողմից)... Միջազգային Սոցիալիստական Համագումարը պէտք է յայտարարէ, որ Աւստրիայի մէջ, ինչպէս և բոլոր բազմալեզու երկիրներում, մենք պէտք է գործադրենք մէկ միասնակ միջազգային մեթոդ սինդիկային կազմակերպութեան»։

Հայվուդ (Ամեր. Միաց Նահանգներ).

„Մենք ևս անհրաժեշտ ենք համարում սինդիկային կազմակերպութեան միութիւնը։ Ինտերնացիոնալիզմի մեքենան չի ճանաչում ազգութիւն։ Ամերիկեան մէկ ածխահանքի աւազանում մենք գտնում ենք յաճախ 32 զանազան ազգութիւններ։ Այդ պատճառով մենք, ամերիկացի սոցիալիստներս, նոյնպէս կողմակից ենք սինդիկային մէկ միացեալ (կենտրոնական) կազմակերպութեան։ Բայց, տարաբախտաբար, մեր երկրում ևս սինդիկային շարժման միաւորումը չը պիտի կալ ողանայ շուտով կատարուել։ Լեզուական դժուարութիւնները, որոնց դուք հանդիպում էք Աւստրիայում, չնչին բան են հանդէպ համերաշխութեան այն պակասութեան, որ յատկանշում է կացութիւնը Միացեալ Նահանգներում»։

Ես դեռ երկար շարունակեց վիճաբանութիւնը չեխական „սեպարատիզմի“ շուրջը։ Մի այլ պատգամաւոր նկատում էր, որ „մէկ ճակատամարտի մէջ մի քանի ազգային բանակներ կարող են կռուի մտնել, բայց անհեթեթ բան կը լինէր միևնոյն բանակի համար հրամանատար նշանակել վեց զօրավարներ»։

Մի ուրիշը.

„Կապիտալիզմի դէմ կռուելու համար, մենք պէտք ունինք ոչ միայն կազմակերպութեան միութեան, այլ մեզ անհրաժեշտ է նաև ֆինանսական, գրամական միջոցների միութիւն, իսկ այդ ձեռք կը բերուի միմիայն կենտրոնացումով»։

***

Այժմ լսենք չեխ „անջատականների“ ինքնապաշտպանութիւնն ու արդարացումը։ Կուի տեղի մէջ, այնքան ծանր դիտողութիւնների ու ամբաստանութիւնների հանդէպ՝ նրանք ևս երբեմնապէս դիմում են ծայրայեղութեան և տալիս են հակառակորդներին այնպիսի հակահարուածներ, որոնք չէին լինի պաղ, օբ'եկտիվ վիճաբանութիւնների ընթացքում։

„Սեպարատիզմի“ կամ սինդիկաների ազգայնացման գլխաւոր ներկայացուցիչն է Անտոն Նեմեց, չեխ սոցիալիստների ամենաականաւոր առաջնորդը, որ մի քանի անգամ խօսք առաւ այդ չարատանջ խնդրի առթիւ, նոյն կոպենհագի Համագումարում։ Ականջ դնենք նեմեցին.

„Մեզ մեղադրում են, թէ իբր մենք կամենում ենք անջատական ոգով թուլացնել արհեստակցական շարժումը և ջնջել կազմակերպութեան միութեանը։ Այդ մեղադրանքը ճիշտ չէ։ Աւստրիայի մէջ շատ ազգեր կան և կազմակերպութեան զարգացումը այնպէս էր, որ Կուսակցութիւնը ժամանակով ստիպուած եղաւ հաշուի առնել ազգային խմբակցութիւնները։ Կուսակցութիւնը (այսինքն տմբողջ Աւստրիայի Սոցիալիստական Կուսակցութիւնը) բաժանուած է ազգային ավտոնոմ, ինքնօրէն ճիւղերի... Աւստրիական (Վիէննայի կենտրոնական) Սինդիկային Յանձնաժողովը երբէք չի կամեցել ի նկատի

առնել չեխ սոցիալ-դեմոկրատիայի desiderata-ները, իղձերը և այդ պատճառով մենք հիմնեցինք Պրագայում (Բոհեմիայի կամ չեխերի հայրենիքում) 1896—97-ին մեկ չեխ սինդիկային Ցանձնաժողով, որը տարիներ շարունակ աշխատել է համաշխարհ Վիեննայի սինդիկային Ցանձնաժողովի հետ։ 1900-ին, օրավարձն աւելացնելու համար մզուած կռիւի մէջ՝ Վիեննայի այդ Ցանձնաժողովը խոստովանեց, որ չեխ սինդիկային Ցանձնաժողովը լայնօրէն կատարել է իր պարտաւորութիւնը։ Ամբոխաբամում, միջազգային արհեստակցական Խորհրդաժողովին իրաւունք չուրին չեխ Ցանձնաժողովին իր ներկայացուցչութիւնն ունենալու, և Աւստրիայում ամէն մի թափեցին՝ ուժեղ կենտրոնացում ստեղծելու Վիեննայի մէջ։ Մենք փորձեցինք պահպանել չեխ սոցիալ-դեմոկրատիայի ազդեցութիւնը սինդիկաների վրայ, բայց մեր բոլոր խնդիրները մերժուեցին։ Եւ ահա այդ պատճառով կազմակերպութիւնները (չեխական), որ չէին կարող զարգանալ այդ զօրաւոր կենտրոնացման ռեժիմի տակ, խզեցին ամէն յարաբերութիւն Վիեննայի սինդիկային Ցանձնաժողովի հետ։ Այն ժամանակ փորձեցին դուրս վարել այդ կազմակերպութիւնները սինդիկային շարժումից և կուսակցութիւնից, նկարագրեցին նրանց անդամներին, որպէս վատ արհեստակիցներ և վատ սոցիալ-դեմոկրատներ, որովհետև նրանք չէին ուզում հպատակուել Վիեննայի սինդիկային Ցանձնաժողովի ձևակերպած սկզբունքներին։ Հնարաւո՞ր է արդեօք, որ մի մեծ քաղաքական կուսակցութիւն, որպիսին չեխականն է, կարողանայ յարատևել, բաժանուած երկու մասերի — մի կողմից քաղաքական շարժում, միւս կողմից՝ արհեստակցական, սինդիկային։ Այդ է, որ մենք չը կամցանք Շտուտգարտում։ Մենք այնտեղ քննեցինք Կուսակցութեան և սինդիկաների յարաբերութիւնները և հռչակեցինք, որ քանի աւելի փացած լինի Կուսակցութեան և սինդիկայի գործունեութիւնը, այնքան աւելի նա արդիւնաւոր կը լինի իր հետևանքներով։ Պէտք չէ, որ անհնարին դարձնենք այդ սկզբունքի գործադրութիւնը։ Պէտք է, որ ազատ թողնեն մեզ՝ զեկավարելու մեր կուսակցութիւնը և մեր սինդիկաները, առանց չափազանցուած կենտրոնացման։ Այդ պայմաններում մենք միշտ պատրաստ ենք կուռելու համաշխարհ գերմանացի ընկերների հետ։ Եւ մենք երբէք էլ դիտաւորութիւն չենք ունեցել որևէ բան նրանց դէմ ձեռնարկելու։ Անկարելի է յիշել գործադուլի կամ սինդիկային պրոպագանդի որևէ դեպք, ուր մենք լիովին կատարած չը լինենք մեր պարտաւորութիւնը գերմանացի ընկերների վերաբերմամբ։ Վերջապէս չեխ աշխատաւորների մեծամասնութիւնը այլ ևս չի պատկանում Վիեննայի (կենտրոնական, համապետական) սինդիկային Ցանձնաժողովին, այլ պատկանում է Պրագայի կենտրոնին։ Եթէ դուք ուզում էք բացարձակ կիրառութիւն տալ միութեան սկզբունքին, ինչո՞ւ չէք անում այդ Բելգիայում, ուր սոցիալիստ աշխատաւորների փոքրամասնութիւնը միայն պատկանում է կենտրոնական սինդիկային կազմակերպութեան։ Դժուարապէս Ֆրանսիայում, Իտալիայում, Անգլիայում արհեստակցական կազմակերպութիւնը այն պատիճան կենտրոնացած չէ, ինչպէս մեզ մօտ։ Եւ սակայն այդ կենտրոնացումը շատ աւելի դիւրին կը լինէր այնտեղ, քան մեզ մօտ։

„Պէտք է ի նկատի առնել մեր կացութիւնը։ Քաղաքական կազմակերպութիւնը (այսինքն իսկական չեխ կուսակցութիւնը) դրամական ֆոնդ չունի... Գերման ընկերները պէտք է հաշի առնեն չեխ սոցիալ-դեմոկրատիայի յուսահատ վիճակը։ Պրոլետարիատի կռիւը կապիտալիզմի դէմ կարող է զեկավարուել միայն մի այնպիսի կազմակերպութեան ձեռքով, որը թոյլ կը տայ շարժման բոլոր ճիւղերին զարգանալու ազատօրէն... Վիեննայի սինդիկային Ցանձնաժողովը անունով է միայն միջազգային, բայց նա շարունակական յարաբերութիւն է պահպանում գերման կուսակցութեան հետ... Պէտք է, որ այդ կացութիւնը փոխուի վաղ թէ ուշ։ Պէտք է գտնել սինդիկային կազմակերպութեան մի նոր ձև։ Չեխ աշխատաւորների մեծամասնութիւնը ասում է.

— „Գործերը կարգադրւում են Վիեննայում, գուցէ և լաւ են կարգադրւում, բայց — միայն Վիեննայում“։

Չի կարելի գրա համար մեղադրել չեխերին, քանի որ նրանցից առաջ Բոհեմիայի գերման ընկերները ասում էին.

— „Ամէն բան կարգադրւում է Պրագայում, իսկ ինչ որ Պրագայում է կարգադրւում, մենք նրա համար մի սանտիմ էլ չենք տայ։ Մենք ունինք մեր Վիեննան և մեր Վիեննան բաւական է մեզ“։

Ահա այսպէս է, որ զարգացել է, բնականաբար, ազգային հակամարտութիւնը։ Եւ նրանից խոյս տալ կարելի է միայն մեկ ձևով. պէտք է ստեղծել կազմակերպութեան մի այնպիսի ձև, որը համապատասխանէ բոլոր շահագրգռուածների պահանջներին և նպաստաւոր է բոլոր ազգերի լիակատար զարգացման։ Եթէ այդ չ՝անենք, բոլոր ընդունելիք որոշումները ոչինչ բանի պէտք չեն գայ...

Ներկայ պարագայում մի աւելի ուժեղ կազմակերպութիւն չէ, որ պիտի զեկավարէ ուրիշ աւելի մանրները, այլ երկու կազմակերպութիւններ են հրապարակի վրայ (գերման և չեխ), հաւասարապէս ուժեղ և հաւասարապէս զարգացած, որոնց միջև պէտք է հաստատել օրգանական յարաբերութիւններ, առանց որ մէկը ստորադրւի միւսին... Ի՞նչ է ինտերնացիոնալիզմը, միջազգայնութիւնը։ Մի՞թէ նա բացասումն է ազգայնութեան։ Մի՞թէ դա հակազգայնութիւն է։ Չեխերի ինտերնացիոնալիզմը չի կարող այնքան հեռու երթալ,

որ դրժէ իրենց սեփական ազգայնութիւնը։ Ինտերնացիոնալիզմը նշանակում է՝ որ երկու կողմերը, իրրև իրաւահաւասար մարտնչողներ պատրաստ են մասնակցելու ընդհանուր կռուին՝ ազատագրելու համար աշխատաւորութիւնը տնտեսական գերութիւնից և քաղաքական ստրկացումից։

„Այդպէս ենք մենք ըմբռնում ինտերնացիոնալիզմը։ Ընկերներ, լաւ պատկերացրէք ձեզ կացութիւնը։ Ընկեր Ադլերը ասաց այստեղ բացայայտ կերպով, որ Վիէննայի համապետական Ցանձնաժողովը (Կենտրոնը) գերմանական մի հիմնարկութիւն չէ, այլ միջազգային։ Իրաւ է, որ նա ունի, իրրև կցորդ, ուրիշ ազգեր ևս, բայց նա ունի տարամերժօրէն գերմանական ընաւորութիւն, գէթ մի յայտնի չափով. և չեխերի համար անհնարին է աւելի երկար հանդուրժելու այդ մարմնի տարամերժ տիրապետութիւնը... Բայց բոլոր մեծ քաղաքական կամ սինդիկային պայքարների մէջ չեխերը տալիս են իրենց գերմանացի ընկերներին ամենալայն համերաշխութեան հաւաստիքներ... Սկզբունքի խնդիր չը կայ այստեղ, այլ զուտ գործնական մի հարց է, որ վերաբերում է կազմակերպութեան լաւագոյն ձևին։ Եթէ այդ պատճառով սպառնան հեռացնել չեխերին Ինտերնացիոնալից, նրանք ստիպուած են պաշտպանել իրենց՝ ամենակորովի կերպով... Մենք միայն հաւասարութիւն ենք պահանջում։ Երբ երեք հոգի ապրում են միևնոյն սենեակում և չեն կարող համաձայնուիլ, նրանց անջատում են միջնացանկերով... Մենք պահանջում ենք, որ Ինտերնացիոնալը խնդրին տեղեկանայ օբ'եկտիվ կերպով, անաչառօրէն... Չեխերը ուզում են լինել գերմանացիների հետ, որպէս հաւասարը հաւասարի հանդէպ։ Երբ մենք կազմակերպեցինք մեր կուսակցութիւնը (քաղաքական մարմինը) ֆէդերատիվ, դաշնակցական ձևով, մեզ այն ժամանակ ևս մեղադրեցին շովինիզմի մէջ։ Եւ սակայն, առանց այդ բաժանումի *) մենք չէինք ունենայ 1905-ի շարժումը և չէինք նուաճի ընդհանուր ընտրողական իրաւունքը։ Զատ-զատ ընթանալ և միասեղ կռուել—այդպէս է եղել մեր նշանաբանը։ Մենք չենք էլ ուզում որսալ աշխատաւորներին ամենայետին համայնքների մէջ մինչև վերջին մարդը, բայց մենք ուզում ենք ստեղծել կենտրոններ, ըստ այբազան լեզուների։ Մի քիչ բարի կամեցողութեամբ՝ մենք կը գտնենք մի ձև, որ համապատասխան կը լինի բոլոր դաշնակից ազգութիւնների շահերին, մի ձև, որ պիտի աճեցնէ աւստրիական աշխատաւորական շարժման ներթափանցման ուժը...

„Այժմ, երբ Ֆինլանդիան կորցրել է իր ինքնօրինութիւնը, դուք տրամաբանօրէն պէտք է ստիպէք Ֆինլանդացի սոցիալիստներին ևս՝ միանալ ռուսական սինդիկային շարժման... Փոքրիկ ազգերը պէտք է գտնեն արդարութիւն Ինտերնացիոնալի ծոցում“։

Ցուսար (մի այլ չեխ անջատական).

„Բացարձակ անհեթեթութիւն է մեղադրել մեզ նացիոնալիզմի մէջ։ Իրրև աշխատաւորներ, մենք երբէք չենք մեղանչել մեր միջազգային պարտաւորութիւնների դէմ։ Բայց մեր բոլոր խնդիրքները՝ ի նկատի առնելու մեր չեխական օրինաւոր պահանջները՝ վայրագաբար մերժուել են Վիէննայի համապետական Ցանձնաժողովի կողմից։ Չը նայած դրան՝ մենք դարձեալ պաշտպանում ենք պրոլետարական կռուի միութիւնը։ Բայց ըստ մեզ անհրաժեշտ չէ, որ ամեն բան կատարուի Վիէննայի կենտրոնական Ցանձնաժողովի հրամանով։ Մենք չեխերս պակաս ուժեղ չենք, քան Աւստրիայի գերման սոցիալ-դեմոկրատիան։ Աշխատաւորների թուով մենք, ընդհակառակը, աւելի ուժեղ ենք։ Մենք ունինք 24 պատգամաւոր Ռայխսրատի (պարլամենտի) մէջ։ Ունինք աւելի հարուստ և ուժեղ մամուլ, քան Աւստրիայի գերման ս.-դ.-ները։ Ո՞ւր կը տեսնէք աշխարհի երեսին, որ մի ուժեղ քաղաքական կուսակցութիւն կառավարել տայ իր դրամական հասոյթները մի ուրիշ կուսակցութեան պատկանող ընկերների ձեռքով։ Մենք պահանջում ենք և իրաւունք ունինք պահանջելու, որ մեզ իրաւունք տան տնօրինելու մեր դրամագլուխները։ Մենք ուզում ենք ունենալ անկախ, ավտոնոմ մարմին (սինդիկային, արհեստակցական), որպէս զի կարողանանք լաւագոյն ձևով կազմակերպել չեխ աշխատաւորներին և աւելի լաւ պատրաստել նրանց դասակարգային կռուի համար.. Սպառնալիքները և ծանր խօսքերը չեն կարող վախեցնել մեզ“։

***

Ի՞նչ է մեր եզրակացութիւնը, այժմ, երբ լիակատար ձևով ի ցոյց դրինք այդ նոր հոսանքի թեր ու դէմ ձայները։

Դժուարանում ենք ձևակերպել որոշ կարծիք։ Թուում է, թէ սա այն փափուկ և կնճռոտ խնդիրներից է, որոնք չեն կարող բաւարար լուծումն ստանալ Ինտերնացիոնալի մի հաւաքական բէ՛ռկութեամբ և որ ի վերջոյ պիտի թողնուի ամեն մի երկրի սոցիալիստներին՝ ազատօրէն տնօրինելու իրենց ընթացքը, ինչպէս սոցիալիզմի շատ ուրիշ խնդիրներում։ Անտարակոյս, անջատականութիւնը—կամ գործածենք աւելի լաւ բառ—ազգային ինքնօրինութիւնը (ավտոնոմիան) արհեստակցական կազմակերպութեան մէջ ունի իր խոշոր անպատեհութիւնը, նա կարող է, յիրաւի, երբեմն կտրատել, թուլացնել աշխատաւորական ընդհանուր շարժումը կապիտալի դէմ

*) Ինչպէս ասացինք „Դրօշակ“ի անցեալ համարի մէջ, աւստրիական ազգերի սոցիալիստ կուսակցութիւնները (ոչ սինդիկային, այլ քաղաքական) կազմակերպուած են իւրաքանչիւրը ինքնավար ձևով, իր ազգային սահմաններում՝ և բոլորը միացած դաշնակցական կապերով, կազմում են համաաւստրիական Սոց. Կուսակցութիւնը։

(այդպէս, օրինակ, արևմտեան քաղաքակիրթ երկրների մէջ), բայց մ է կ կենտրոնի միահեծան ղեկավարութիւնն ևս իր ոչ նուազ անհանգստացուցիչ անպատեհութիւններն ունի, ինչպէս այդ մասամբ ցոյց է տալիս չեխական օրինակը, ինչպէս, մանաւանդ, ներշնչում է մեզ՝ մեր բազմացեղ, բազմալեզու Բաբելոնների — Ռուսաստանի, Թիւրքիայի — կացութիւնը։

Արդարև հնարաւո՞ր է արդեօք Ֆինլանդացի սոցիալիստներին կապել, միացնել համառուսական արհեստակցական մի կենտրոնի հետ, դնել նրա ղեկավարութեան տակ։ Ոչ, ի հարկէ և Ֆինլանդացիք արտայայտեցին այդ ոչ-ը իրենց ձեռնպահութեամբ կոպենհագի համագումարում։ Հնարաւո՞ր է առհասարակ Պետերբուրգ նստող մի կենտրոնական մարմնի միջոցով վարել համայն Ռուսաստանի աշխատաւորական, արհեստակցական շարժումը...

Դրական պատասխան չենք կարող տալ հակառակ պլեխանովների և բոլոր ռուս ս.-դ.-ների լաւատես պահանջին։

Հնարաւո՞ր է, մանաւանդ, կիրառել Ինտերնացիոնալի վճիռը—սինդիկային կազմակերպութեան միացման մասին — Թիւրքիայում։ Հնարաւո՞ր է մի կենտրոնական դրամարկղի ու Բիւրոյի միջոցով տնօրինել և ղեկավարել արհեստակցական շարժման ճակատագիրը հայ, Թիւրք, քիւրդ, յոյն, բուլգար, հրէա և այլ աշխատաւորների մէջ...

Մեր վերջին Ընդհանուր Ժողովի մէջ ևս կային սակաւաթիւ ընկերներ, որ հնարաւոր էին ընդունում այդ միութիւնն ու կենտրոնացումը։ Սակայն, Ընդհանուր Ժողովը, յարգելով հանդերձ մեր երիտասարդ ընկերների գաղափարային և օպտիմիստ յափշտակութիւնը, գիտակցելով, սակայն, թէ որքան տակաւին քէն ու աւանդական թշնամութիւն է ամբարուած ազգերի նոյնիսկ աշխատաւոր հատուածների մէջ, թէ որքան վտանգաւոր ու ապարդիւն է մինչև իսկ սահմանել արհեստակցական կազմակերպութիւններ միջկուսակցային գետնի վրայ (հայ ազգային շրջանակներում), ուր նոյնպէս, պէտք է անպակաս լինին հակամարտութիւններն ու գժտութիւնները—Ընդհանուր Ժողովը ընդունեց հետևեալ որոշումը.

Նկատելով՝

Որ պրոպագանդը՝ թէ բանաւոր թէ գրաւոր, պէտք է որ կատարուի հնարաւոր եղածին չափ ուժերու խնայող տնտեսութեամբ, իսկ այդ տնտեսութեան ամենէն բարձր աստիճանին կարելի է հասնիլ ազգային միջավայրի մէջ, ուր կը տիրէ համամտութիւն մը լեզուի, հոգեբանութեան և զարգացման աստիճաններու։

Որ հայերուն բնական բազմացեղ և բազմալեզու միջավայրերուն մէջ տակաւին կը տիրեն ազգային խոր հակամարտութիւններ և փոխադարձ անվստահութիւններ—երևոյթ մը, որ կազմակերպութիւններու ներսը կը ստեղծէ անխուսափելի ընդհարումներ՝ փոքրամասնութիւններու և մեծամասնութիւններու միջև, կազմալուծելով վարչական մարմինները նորածիլ միութիւններուն։

Որ նման բաղխումներ անվրէպ տեղի պիտի ունենան այն պարագային, երբ հայ աշխատաւորութեան մէջ ևս առաջ գան կուսակցական բաժանումներ։

Որ հայ աշխատաւորութեան շահերը կրնան իրապէս բարգաւաճիլ այն պարագային միայն՝ երբ դրացի ժողովուրդներու մէջ ևս կազմակերպուած կ'ըլլան աշխատաւորական տարրերը ու երբ միջազգային բովանդակ աշխատաւորութիւնը իր համերաշխ ճիգերը կ'ուղղէ ընդհանուր թշնամիներուն՝ աւատականութեան և կապիտալիզմին դէմ։

Որ հայ ընկերվարական մտաւորականութիւնը, իբր աւելի գիտակից և պատրաստուած տարր մը Թիւրքիոյ մէջ, պարտի իր ուժերուն ներած չափով ղեկավար հանդիսանալ բնակակից ազգերու աշխատաւորութեան.

Կ'որոշէ.

1) Աշխատաւորական կազմակերպութիւնները դնել ազգային և կուսակցական գետնի վրայ, իսկ ուր անհնարին է ատ, առժամապէս կանգնիլ միջազգային՝ միակուսակցական տեսակէտի վրայ։ Բոլոր աշխատաւորական կազմակերպութիւնները անպայման պարտին համերաշխօրէն և միջազգայնաբար գործել տնտեսական ծեռնարկներու մէջ (գործադուլ, պոյքոտ և այլն)։

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՆՑԵԱԼԻ ԱՐՇԻՎՆԵՐՈՒՄ

(ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ)

Per me si va nella citta dolente
Per me si va nell'eterno dolore
Per me si va tra la perduta gente
Lasciate ogni speranza, voi ch'entrate *).

Dante

„Բազմահոյլ դարեր սուր և հուր կը բերեն ի Հայաստան. հզօր ազգեր կը խուժեն, բանակներ կ'որոտան, կը գոռան, արեամբ կը ներկեն, աւերակով կը լեցնեն դայն։ Բայց նա միշտ անմեռ կը մնայ, նա միշտ կը վերականգնի, նա միշտ կը սպասէ, որ օր մը իր դերը լեցնէ աշխարհի մէջ, այն դերը, որ իրեն ճակատագրեալ է։ Վերին Ասիոյ սէգ բարձրաւանդակին տէր և Եփրատայ արգասաբեր հովտին բնական ժառանգ՝ հայը դեռ ևս ստանձնած, կատարած չէ այն դերը, զոր կը սպասեն իրմէն քաղաքագիտութիւն և քաղաքակրթութիւն“։

(Խորէն Նարբէյ Լուսինեան, Բերլինի վեհաժողովի առթիւ Ազգային Ժողովի մէջ արտասանած իր ճառում, 1878 թ. 10 նոյեմբեր)։

Իջնենք Դանտէի դժոխքը — և չ'ողբանք, չ'անիծենք, այլ ձգտենք հասկանալ։ Մօտենանք իրերին՝ պաղարիւն և վեհանձն առարկայականութեամբ, ինչպէս որ

*) Այստեղից կ'ընթանան դէպի ցաւոտ մայր-քաղաք,
Այստեղից կ'ընթանան դէպի վիշտ յաւերժական,
Այստեղից կը քայլեն դէպի կորուած մարդիկներ,
Թողէ՛ք այստեղ ամեն յոյս, դուք բոլոր անցորդներ։
(Դանտէի խօսքերը՝ դժոխք իջնելիս)

կը վայելէ մեծ, հպարտ սգաւորներին, վշտատանջ, բայց և զգաստ, գիտակից ազգերին։ Մօտենանք՝ գիտակցելով, որ համաշխարհային պատմութեան մի արարուածն ենք ապրել մեր վտիտ ուսերի վրայ—թեկուզ և ամենատխուր, ամենահեղ արարուածը—մի պատմութեան, որ նոյնպէս իր երկաթէ օրէնքներն ունի, որ նոյնպէս թաւալւում է պաղ, անողոմ, քարասիրտ տրամաբանութեամբ, ինչպէս ամբողջ շնչաւոր և անշունչ տիեզերքը...

Եւ երբ մենք մօտենում ենք այդ արիւնոտ քաոսին—որ կոչւում է հայկական պատմութիւն—երբ սկսում ենք փորփորել հայրենի և օտար գրականութեան արշիվները, երբ թեկուզ հարևանցօրէն գիտում ենք այդ պատմութեան պղտոր, արտասուախառն հոսանքը, թշնամի հօրդաների խօլական գահավիժումները, լքումի և օրհասի վիթխարի գալարումները, երբ զարհուրած անցքերի գաժանութիւնից, ընթերցողը մի վայրկեան կանգ է առնում և փորձում է հաշիւ տալ ինքնիրեն այդ հսկայ, անօրինակ դրամայի վերաբերմամբ,—մի հարց, անխուսափելի և տանջալի, ցցւում է նրա խռովեալ գիտակցութեան մէջ.

„Ինչպէ՞ս կարողացանք ապրել“...

Ինչպէ՞ս այդ վտիտ, անզէն ժողովուրդը, որ բնաւ չէր կոչւած գոյութեան մարտի համար, որ վաղուց ի վեր, իբրև ճշմարիտ խաչակիր - քրիստոնեայ, մարզւել էր լոկ համակերպութեան ու կրաւորականութեան հաւատամքի մէջ,—ինչպէ՞ս նա կարողացաւ, այնուամենայնիւ, ապրել ու յարատևել այն աւերիչ ուրագանների միջոցին՝ բարբարոս արշաւանքների, բռնի կրօնափոխութեանց, մասսային բնաջնջման, բռնակալական անդադրում սարսափների մէջ, ինչպէ՞ս նա կարողացաւ ճողոպրել այդ անօրինակ նահատակութեան անդունդներից, ծածանեցնելով մշտապէս—չարչարանքի իր անեզր ովկիանի մէջ—ոչ միայն իր գոյութեան, այլ և համեստ, թանկարժէք քաղաքակրթութեան դրօշը. ինչպէ՞ս էր, որ այդ դրաւոր և անլուր տագնապներից դուրս լողալով, նա կարողացաւ — վերջին 20 տարւայ ընթացքում, թէև արդէն յօշոտւած, անդամալոյծ — ապրել մի այլ ճգնաժամ, ամենամեծը, ամենահարկուն, որ իր եզակի դժոխայնութեամբ կը գերազանցէ „Աստուածային Զաւեշտի“ *) սասանեցուցիչ յզացումն անգամ, ապրեց՝ և այսօր յոյսերի ու գրաւականների նոր պաշարով բեռնաւորւած, ճակատը միշտ հողմերին, գնում է թառելու քաղաքակրթութեան սանդուխի պատուաւոր աստիճանների վրայ, գնում է բազմելու լուսաւոր ժողովուրդների արէօպագում, իբրև օսմանեան, ռուսական, արևելեան պետականութեան մի ազգեցիկ գործօն, գնում է կատարելու այն դերը, որ 34 տարի առաջ, պատմական անմոռանալի թեականին, ծանուցանում էր տարտամ կերպով բերլինեան Վեհաժողովի հայկական պատգամաւորութեան մի անդամ։

Գրեթէ առեղծւած...

Փորձենք լուսաւորել գէթ մի քանի խորշերը այդ զարմանալի և զարհուրելի առեղծւածի։ Փորձենք առաջադրել ոչ միայն հայկական այդ դարաւոր նահատակութեան հակիրճ ուրուագիծը իր էական պատճառների ու հետևանքների թափօրով, այլ և ըմբոստմաքու գործի հազւադէպ և հրապուրիչ ցոլքերը, մասնաւորապէս վերջին դարում, ի դէմս հայկական վեհափառ պէտքերի՝ Ալիշաններ ու Խրիմեաններ, Ռուսինեաններ ու Պալեաններ, Նալբանդեաններ ու Բաֆֆիներ, որոնք մի հզօր և մարտաշունչ հայրենասիրութեամբ տոգորւած, ձգտեցին խորտակել քրիստոնէական աղէտաբեր համակերպութեան գոգմը, փարատել ագիտութեան և բռնութեան ձմեռը ազատատենչ գարունի հմայիչ գեղգեղներով, ձգտեցին առաջ մղել հայրենի ժողովուրդը Արևմուտքից ղօղանջող կոչերի ուղեկցութեամբ, և իրենց անդուլ ճիգերով—մերթ խաղաղ, օրինական, մերթ գոռ և ապըստամբ—պատրաստեցին ըմբոստացման այն անհրաժեշտ փոթորիկը, որին մենք ականատես եղանք վերջին քառորդ դարի ընթացքում, Թիւրքաց Հայաստանի մէջ, որին դեռ ականատես ենք Հայրենիքի երկու միւս հատւածներում, Կովկաս և Պարսկաստան։

Առեղծւած—այո՛։ Հայ ճակատագիրը ըմբռնելու համար անհրաժեշտ է մտքի մեծ ու հուժկու ճիգ. հայ իրականութեան արիւնլայ խորշերը թափանցելու և պաղօրէն, առարկայօրէն ցուցադրելու համար՝ անհրաժեշտ է նաև կամքի ու նիարդերի ծայրագոյն լարումն և մի տեսակ անզգածութեան, հանդարտ, փիլիսոփայական ինքնատիրապետման խոշոր դոզ — մարդկայնօրէն գրեթէ անհնարին...

Առեղծւածային էութիւնների մէջ՝ միշտ մի յայանի ուժ է թագնւած—ասում է փիլիսոփայական տարրական իմաստութիւնը։ Գիտակցե՞նք այդ ուժը—և թո՛ղ նա հայ-ժողովրդական սերունդների մէջ նոր կորով ներշնչէ, սաեղծագործ, հայրենաշէն նոր եռանդ՝ ոչ միայն պրպտելու, ուշիուշով ուսումնասիրելու հայրենի պատմութեան արիւնազանգ արշիվները — մտքի և հոգու լիակատար անդորրութեամբ—այլ և հզօր ու գիտակից ներազդակ լինելու այդ պատմութեան խորհրդաւոր յեղյեղումների...

I

ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Նահատակութիւնը սկսւում է կրօնի նշանակի տակ։ Նրա հակազդակ—ըմբոստացումը՝ նմանապէս։ Ո՞րն է, որին յաջորդում, ո՞րն է պատճառ,

*) *La Divina Commedia.*

ՈՐԸ ՀԵՏԵԱՆՔ։ Դիւրին չէ պատասխանել։ Մի բան միայն բացայայտ է. — անհատական նահատակութիւնների երկայնաձիգ շարանը, որ կարմրագոյն ժապաւէնով ձգւում է հայկական տարեգրութիւնների միջից, հիւսւած է ըմբոստացման անհաշիւ ու մոլեռանդ, բայց և վսեմ, խօլական արտայայտութիւնների հետ. ըմբոստացում՝ յանուն կրօնի ու եկեղեցու, յանուն խղճի ազատութեան։

Կրօնի, խղճի ազատութեան պատերազմը նախորդել է ամենուրեք արևմտեան աշխարհի մէջ՝ բոլոր միւս ազատութիւնների պատերազմներին։ Կ ր օ ն ա կ ա ն պ այ ք ա ր ի ձևը, իբրև տիրող և ծաւալուն, զանգւածային մի երևոյթ, կարելի է ասել, առաջինն է, սկզբնականը՝ քաղաքակիրթ մարդկութեան մրրկածուփ կրկէսներում։ Մարդկութիւնը նախ և առաջ խորտակել է խղճի վրայ ծանրացած կապանքները, ապա նա փշրել է քաղաքական-բռնապետական շղթաները, ապա և դիմել է ամենածանր, ամենակնճռոտ պրոբլէմին — տնտեսական ազատութեան և հաւասարութեան պատերազմին։

Հեռու ասիական լեռնագաշտում թաւած փոքրիկ հայ ազգը բացառութիւն չկազմեց համաշխարհային օրէնքից. նա էլ ապրեց — մանրանկար ծաւալով, բայց աւելի արհաւրոտ ու արիւնոտ ելևէջներով—քաղաքակիրթ մարդկութեան բազմերանգ ճակատագիրը. նա էլ անցաւ պրոբլեմների ու պայքարների նոյն էական հանգրւանները, և նախ քան ծածանեցնել քաղաքական ազատութեան դրօշակը իր անհամբոյր լեռների մէջ, նախ քան փարել ժողովրդապետութեան ու „աշխարհիկ“ յեղափոխութեան համամարդկային աւետարանին՝ նա պայքարեց երկար դարեր յանուն պաշտած իր հաւատի ու եկեղեցու, սրբազնագոյն հռչակւած աւանդների, տւեց անթիւ ողջակէզներ, տեսաւ անթիւ նահատակութեան խաչեր ու գերաններ, հեծկլտաց, արտասւեց իր „սրբերի“, „զինւորների“ *) շիրիմներին, և իր արեան թանկագին գոլորշիների հետ դէպի երկինք առաքեց— ամբողջ դարեր շարունակ—իր լռիկ, կրաւորական „ըմբոստացման“ սրտաճմլիկ աղօթքները...

Կրօնը, այո, նախնական սրբութիւնն է, նա մարդկային համայնքների առաջնագոյն իրողութիւններից է։ Ազգը, Հայրենիքը, Հայրենասիրութիւնը — յետագայ, աւելի անագան գոյացումներ են... Հայրենիքը կարելի էր ոտնահարել, ազգութիւնը կարելի էր յօշոտել, ցիրցան անել, տնտեսապէս ստրկացնել, հարստահարել և տանջել, մարդկանց կեանքն իսկ տրորել, ոչնչացնել — Հայ մարդը, այնուամենայնիւ, կը տոկար, կը համբերէր։ Բայց կար մի բան, որ նրա աչքում գերագոյն, անբռնաբարելի սրբութիւն էր — իր հ ա ւ ա տ ը. և նրա համար, յանուն նրա՝ կ'ապստամբէին ու արիւնով իսկ կը բողոքէին ազգի ընտիր, զգայուն, գաղափարական տարրերը... եթէ կարելի է „գաղափարական“ յորջորջումը տալ այդ կոյր, մոլեռանդ, տարերային ընդվզումներին։

„Թէև տգէտ և վատ տեղեակ իրենց կրօնին՝ այնուամենայնիւ, երբ պէտք է մեռնել հաւատի համար, նրանք (հայերը) գնում են զւարթ և քաջաբար դէպի շարչարանք“.—այսպէս է վկայում Տ ա վ ե ր ն ի է, հռչակաւոր ֆրանսիացի ճանապարհորդը, որ 17-րդ դարում վեց անգամ պտոյտ է արել մահմեդական Արևելքի մէջ, տեղն ու տեղը ծանօթանալով նաև հայոց կացութեան ու բարքերի հետ։

Ինչքա՜ն սրտագրաւ էջեր ունի այդ զարմանալի, արկածախնդիր ուղևորի մեծահատոր աշխատութիւնը *)։

Ահա նա Տիգրանակերտում։ Հայկական մարտիրոսութեան ցնցող իրողութիւնները շանթում են նրա հարուստ, ֆրանսիական երևակայութիւնը, և նա յուզիչ գոյներով նկարագրում է՝ այնտեղ, Տիգրանակերտում, կատարւած (1651 թ-ին) արևելեան բարբարոսութեան մի տեսարանը։ Պատմենք այն՝ հեղինակի խօսքերով—և կը տեսնենք մէկ-երկու սոսկումնալի դէպքերի մէջ ցոլացող մեր վաղեմի իրականութիւնը։

Հարսանիք էր, ասում է Տավերնիէ, մի թիւրք երիտասարդի և իր ցեղակից մի աղջկայ։ Տղայի մայրը հրաւիրում է ի միջի այլոց իր մտերիմ ընկերակից մի ունևոր հայ տիկնոջ, որ ունէր մի մատաղահաս որու զաւակ։ Այդ վերջինը ցանկանում է ուղեկցել իր մայրիկին, նոյնպէս լինել հարսանիքում։ Բայց թիւրքական օրէնքը կար, որ արգելում էր վեց տարեկանից բարձր քրիստոնեայ մանուկներին՝ խառնւել թիւրք կանանց ու աղջկանց հետ։ Տղայի խնդիրքը այդ պատճառով մերժւում է։ Բայց նա դարձեալ շարունակում է աղերսել։ Միջամտում է հօրաքոյրը և տանում են տղային թիւրքական հարսանիքը, բայց ծպտեալ, զգեստաւորւած, որպէս աղջիկ։ Սկսւում է պարը։ Եւ այդ պարի միջոցին հայ տղան իր անսովոր շարժումներով մատնում է անմիջապէս իր սեռը։ Մի պառաւ թրքուհի զարկում է ահազանգը... Շփոթութիւն, իրարանցում և յասկոտ աղաղակներ։

„Սա գիտութեա՜մբ է կատարւած, սրանք ուզում են ծաղրել մեր օրէնքը և հաւատը“... ոռնում է խուժանը և պահանջում վրէ՜ժ, պատիժ։ Տղայի հայրը միջամտում է, խոստանում իր հարստութեան կէսը. ապարդիւն։ Եւ կատարւում է մի ճշմարիտ Գողգոթայ, սկսւում են անլուր չարչարանքներ։ Կանգնեցնում են հայ տղային քաղաքի մեծ հրապարակում, մերկացնում են և կաշին սկսում են քերթել... Մոլլան, քաղաքի այլ իսլամ կղերականները համախմբւում են և պահանջում, որ տղան գրկէ մահմեդական հաւատը։ Մերժում... Սոսկալի տանջանքների մէջ զոհը մեռնում է, և ապա փաշան վրայ է հասնում ու կտրել տալիս գլուխը։

Մի այլ օրինակ, ոչ պակաս հիացուցիչ — ասում է Տա-

*) Այդպէս է որակում հայ ժողովուրդը իր սրբերին, դէթ մեզ մօտ, Անդրկովկասում. „Զինաւոր“ կամ զինւոր— ասել է մարտնչող և միանգամայն նահատակ յանուն կրօնի ու եկեղեցու։

*) *Tavernier: Les six voyages en Turquie, en Perse et aux Indes, pendant 40 ans.*

վերնիէ։ Նահատակութեան թատերաբեմը Վանն է։ Հայ և Թիւրք մանուկները, դպրոցներից դուրս գալով, երբեմն սովորութիւն ունին իրարու վրայ քարեր նետել։ Մի օր այնպէս եղաւ, որ կուռի միջոցին մի հայ մանուկ գետին գլորեց մի Թիւրքի և մեռցրեց։ Անմիջապէս վրայ Թափուեցին միւթեսարիֆը և խուժանը. պահանջեցին, որ սպանողը փոխէ հաւատը, գառնայ իսլամ՝ իր ոճիրը քաւելու համար։ Եւ մերժումի հանդիպելով՝ որոշեցին մահով պատժել։ Տարան մանկան իր կատարած սպանութեան տեղը։ Առաջին հարուածը հասցրին սպանուածի ծնողները, ապա տեղաց քարերի տարափը խուժանի կողմից։ Մանուկը մեռաւ։

Առաքել վ. Դավրիժեցու պատմութեան մէջ գտնում ենք նոյն դէպքերը, փոքր ինչ տարբեր նկարագրութեամբ։ Այդտեղ սրբերի շարքում գտնում ենք Խաչատուր Տիգրանակերտցի անունով քսանամեայ երիտասարդին (նահատակուած 1652-ին), որ Թերևս նոյն Տավերնիէի յիշատակածն է, միայն տարբեր պատճառների ցուցադրութեամբ։

Դատը և պատիժը այսպէս են պատմուած.

... Եւ ժողովեցան բազում մահմեդականք... և յափըշտակեցին զխաչատուրն և տարան առ դատաւորն։ Եւ դատէին ի մահ զխաչատուր... Եւ Մուֆթին ետ ֆաթվայ.

„Պէ՞տք է զնա քերթել“։

Եւ ապա առեալ զխաչատուրն՝ տարան առ փաշայն։ Իսկ փաշայն... ասաց. „տամ քեզ բազում գանձս և զպատուական ստացուածս... և կին գեղեցիկ, եթէ ուրանաս զքրիստոնէական հաւատն և ընդունիս զհաւատն Մահմեդի“։ Եւ Խաչատուր ոչ ուրացաւ։ Յայնժամ եկեալ դահճայն՝ իբրև զգազան արիւնախանձ, պատեցան շուրջ զնովաւ և մերկացուցին զնա և կապեցին ձեռս ի յետս և առեալ տանէին ի տեղի սպանման... Եւ ժողովեցան ի վերայ նորա բազմութիւնք մահմետականաց, իբրև զաւազ ծովու անթուելի և իբրև զգազան կատաղի կրճտէին զատամունս իւրեանց ի վերայ նորա, հարկանէին, խփահարէին և ընդ քարշս տանէին... Եւ ապա գազան դահիճքն պատառեցին զմորթ մարմնոյ նորա յաջոյ ուսէն մինչև զձախոյ ուսն և քերթեցին զկաշին թիկանցն և իջուցին մինչև զքամակն և շրջեցին զկաշին ի վերայ միջոցն. այլ և յառաջուստ կողմանէ քերթեցին զմորթ լանջացն՝ մինչ ի ներքոյ ստեանցն և շրջեցին զմորթն ի վերայ փորին։ Եւ ապա տարեալ շրջեցուցանէին ի մէջ քաղաքին... և ամենայն տեսողք մարմնոյն սոսկացեալ սարսռէին։

Եւ ապա... ասացին դահիճքն ցխաչատուր. „Որովհետև յամառիս և ոչ լսես մեզ, արդ՝ տարածեա զձեռս քո ի վերայ վիմիդ՝ զի խորտակեսցուք“։ Եւ նա յօժար կամաւ իւրումն տարածեաց զձեռսն ի վերայ վիմին և դահիճքն հարին կացնաւ և խորտակեցին զբազուկն երկոցունց ձեռացն։ Ապա խնդրեցին զոտսն և նա տարածեաց զերկոսին ոտսն և դահիճքն խորտակեցին զոլորս երկոցունց ոտացն...

Եւ յետ աւանդելոյ հոգւոյն սրբոյ, փառաւորեաց զնա Տէրն Քրիստոս, զի լոյս պայծառ էջ յերկնից ի վերայ նորա...

Վանի դէպքը (1655 թ.) Առաքել Դավրիժեցու պատմութեան մէջ այսպէս է նկարագրուած.

Այր ոմն՝ որուն անունն էր Սիրուն և էր սա յաշխարհէն Վասպուրականի... Ցաւուրս գարնանոյ գնացեալ ի Ղլաթ, էառ կեռաս, երարձ ձիոյն և երեր ի Վան քաղաք։ Եւ եկին ժողովեցան ի վերայ նորա մանկունք մահմեդականաց և իւրաքանչիւր ոք ընթացեալ յափշտակէր կեռաս ի բեռանէ անտի, իսկ Սիրուն ոչ թողոյր յափշտակել, այլ հալածէր զմանկունսն։ Եւ ոմն ի մահմեդականաց մանկանոյն առեալ բռնաքար և եհար զՍիրուն քարիւն. իսկ Սիրուն առեալ զքարն ձգեաց առ ձգօղն, և դիպեցաւ քարն ի գլուխ տղային և վիրաւորեաց և... սատակեցաւ տղայն ի պատճառէ վիրացն։

Եւ սուխտէք քաղաքին գումարեալք ի միասին, երկու և երեք հարիւր սուխտայք գրոհ ուեալ ժողովեցան ի վերայ անպարտ երիտասարդ Սիրունին, ամենեքեան մերկացուցեալ զսուրս իւրեանց, թուր և խանջալ, մեծաբան խրոխտանօք ահայուցանէին զնա՝ թէ „Դարձի՛ր ի հաւատս Մահմեդի և տաճկացիր, ապա թէ ոչ սրախողխող և քարկոծ լեալ մեռանիս ի ձեռաց մերոց“։ Իսկ Սիրունն ոչ հաւանէր. „Զլոյս հաւատս իմ ոչ թողում“...

Եւ... մարդադէմ գազանք սուխտայքն յաւուրս քսան կապեալ զձեռս ի յետս, գլուխ ի բաց շրջեցուցանէին ի մէջ քաղաքին Վանայ և... ի գլխոյ մինարէին կանչեն ի ժամ աղօթիցն իւրեանց, ասելով թէ „Խանգարեալ խափանեցաւ և յերկիր սուզաւ հաւատս մահմեդական, զի անհաւատ հայ զմուսուլման սպանեալ է“։

Եւ... բերեալ հասուցին ի Նայբռնդանոցի շուկայն և անդէն ի սուխտայիցն ոմն չարագոյն, որ ի ձեռին իւրում ունէր մերկ զխանջալն, ուժգին բազմամբ եհար ի թուլակուշտ Սիրունին, և նա անկաւ ի վերայ երեսացն. և այլ ոմն սուխտայ առեալ ծանր վէմ մի՝ եզարկ ի վերայ գլխոյ Սիրունին և ջարդեաց զգլուխն և ի բաց ցնտեցաւ ուղեղ գլխոյն... Եւ ապա եդին պարան յոտսն և քաշեցին տարան արտաքոյ քաղաքին... և անդէն զմեռեալ մարմինն քարկոծեցին, այնքան՝ մինչ որ ծածկեցաւ ի քարանցն և ապա թողեալ ի բաց գնացին արիւնարբու գազան սուխտէքն։

Լեգենդականը, հիպերբոլիկը, չափազանցութիւնը, անտարակոյս, իրենց որոշ բաժինն ունին այդ արտառուչ պատմութիւնների մէջ, բայց և, անշուշտ, պատմական եղելութիւններ են այդ դէպքերը, ցնցող ու արտասուաշարժ՝ անգամ իրենց մերկ պարզութեան մէջ։

Ժողովրդական երևակայութիւնը ամենուրեք աւելի ևս գեղեցկացնում, զարդարում է այդ դէպքերի հերոսներին արտասովոր յատկանիշներով, տալիս է նրանց հրաշքի բնոյթ և „սուրբերը“, նահատակները դառնում են մի մի գերմարդ։

Ժողովուրդը պաշտում է նրանց, իր հաւատի „զինաւորներին“, երգւում է նրանց անունով, առասպելներ և երգեր է հիւսում նրանց շուրջը... Ժողովուրդը պաշտում է նրանց մօտաւորապէս նոյն եղանակով, ինչպէս այսօր մի Գէորգ Չաւուշ պաշտամունքի առարկայ է Տարօնի հայութեան շատ զգայուն ու բարեպաշտ սրտերի համար։ Ահա մի երգ, ոտանաւոր, որ յօրինուել է 1784-ին նահատակուած Թուխման Տիգրանակերտցու, որ մահմեդական կրօնը արհամարհած լինելու համար պատժուել էր կախաղանով.

Մանուկ անուն ոմն Թ ո ւ խ մ ա ն,
Որ էր երկրէս նա Տիգրանեան,

Աւուր միում յանկարծական
Փայլեաց իբր աստղ առաւօտեան։

Կացեալ ընդդէմ բռնաւորաց,
Մեծամեծաց, դատաւորաց,
Զօրէնս նոցա արհամարհեաց,
Դաւանելով զՔրիստոս Աստուած։
. . . . . .

Ցայնժամ ցասեալ բռնաւորին
Եւ ետ հրաման մահու նորին.
Առեալ և դուռ ժամու բերին
Զնա անդէն գլխատեցին։

Արիական քաջ նահատակ,
Հեղեր զարիւնս իբր վտակ,
Սիրով արբեր զմահու բաժակ
Ի հանդէս քո հրճւին հրեշտակք։

Այլ երգ *), հիւսուած ի յիշատակ մի երիտասարդ հայ նահատակի.

Եւ յարձակին փոյթ ընդ փոյթ
Դահիճք վառեալ ի զէնս ահեղ
Իբրև ի դաշտ մարտի դռոյթ
Ցալով յանզէն մարմինն անմեղ
Անզէ՞ն... ոչ։ Այս չէր անզէն,
Սուր և ասպար ունի նա խաչ
Ցոր պատսպար հոգեղէն
Ի մենամարտ մատչէր յառաջ,
Զայս մի տալով պատասխան.
„Ես Քրիստոսի եմ զօրական...

Կախաղանները, „մարտիրոսութեան խարոյկները“ բարձրացել են Թիւրքիոյ մէջ՝ նաև 19-րդ դարում, միշտ դարձեալ իբրև ծնունդ նոյն կրօնական հակամարտութեան։ 1843 թուականումն ենք. Յովակիմ Սամաթիացի անունով մի հայ, մահմեդականութիւն ընդունած լինելով, մի քանի տարի յետոյ զղջում է և խոստովանւում մի քահանայի։ Բայց մատնութեամբ բանտարկւում է և ենթարկւում չարչարանքի։ Ծնողները անգլիական դեսպանի, լորդ Քանինկի, միջամտութիւն են աղերսում։ Դեսպանը միջամտում է, մեծ վեզիրը մինիստրական խորհրդի մէջ կարդում է նրա դիմումը, սակայն դեսպանը (Շէյխ Ուլ Իսլա՞մը) և մի քանի մոլեռանդ նախարարներ արհամարում են դեսպանի խնդիրքը և գլխատել տալիս հային „ի Պալըգ բազար, դուռն Կոնստանդնուպօլսոյ“ **)։

Անգլ. դեսպանը զայրացած և միւս պետութիւնների դեսպաններն ևս՝ գրեցին իրենց կառավարութիւններին, Եւ „թագաւորք եւրոպացւոց համաձայնութեամբ և խորհրդով միմեանց հետ գրեցին առ օսմանեան կառավարութիւն, խստիւ պահանջելով ղազատութիւն կրօնի ամենայն ազգաց... Թող տացի ամենայն ումէք պաշտել զոր կրն և ինքն կամիցի“։

*) Մանանդեան և Աճառեան, „Հայ նոր վկաներ“, եր. 731։

**) Դէպքը նկարագրւած է Աւետիս վարժապետ Պէրպէրեանի „Պատմութիւն հայոց“ի մէջ, հրատ. 1871-ին։

Բ. Դուռը իբր թէ զիջեց. „Այս մահ և նահատակութիւն Յովակիմայ եղև սկզբնապատճառ ազատութեան կրօնի“։

Այնուհետև իբր թէ քրիստոնեայ ազգերը „թոյլտուութիւն ստացան շինել և նորոգել զեկեղեցիս, առաւել վայելուչ և պայծառ, քան զառաջինն“։

Եւ նոյնիսկ „եդար զանգակատուն յեկեղեցիս Հայոց և Յունաց՝ փոխանակ անախորժ ձայնից ժամակոչաց“...

Իսլամական մոլեռանդութեան և բարբարոս չարչարանքի դէպքեր է պատմում նաև Էրզրումի անգլիական հիւպատոս Ռօբերտ Կրզըն (*Ropert Curzon*), իր կարևոր աշխատութեան մէջ՝ *Armenia. A year at Erzeroom, and on the frontiers of Russia, Turkey and Persia* (հրատ. 1854 թ. Լօնդօնում)։

Դէպքը տեղի է ունենում 1843-ի օգոստոսին։ Պատմենք Կրզընի խօսքերով.

Մեհմեդ անուն մի թիւրք վաճառական բերում է իր ապրանքը Գենջէ աղայի խանը (պանդոկը) և այնտեղ քնանում։ Երկու թիւրք զինուորներ պառկում են քովը։ Յաջորդ առաւօտը ապրանքը չկայ։ Մեհմեդը մեղադրում է զինուորներին։ Երկար ուրանալուց յետոյ, սրանք վերադարձնում են վաճառականից գողցած ապրանքի կէսը և յայտնում են, որ միւս կէսը գողցել է օդաբաշին, Արթին անուն հայը։ Արթինը քաշւում է դատարան։ Փաշան հրամայում է „տանջել“ նրան, երբ նա յայտնում է, որ բոլորովին անտեղեակ է գործից։

Գլխին դնում են պղնձէ այրող մի թաս և վիզը չեան են կապում։ Զգում են չեանը, մինչև որ աչքերը համարեա դուրս են ցցւում ողորտոյթից։ Մարդը շարունակում է ժխտել։ Սկսում են ունելիքով դուրս քաշել ատամները, եղունգները։ Ամբողջ 12 օր այդպէս տանջում են այլ և այլ ձևերով, ապա բանտ նետում։

Օդաբաշին տանջւել ու բանտարկւել է փաշայի մի կամայական կարգադրութեամբ, ասում է Կրզը։ Գնում են պայտ վալիի, Քիամիլ փաշայի մօտ։ Նա յայտնում է, որ մարդը յանցաւոր է, իր սեփական վկայութեամբ իսկ... „Եւ քանի որ Դուք այդպէս կարեկցութեամբ հոգում էք նրա վիճակի մասին, ես ազատել կը տամ նրան և կը յանձնեմ Ձեզ“։

Ես պատասխանեցի. „ուրախ եմ լսել, որ մարդը չի չարչարւել, որովհետև մեզ մօտ Անգլիայում չարչարանքը համարւում է ոչ-անհրաժեշտ մի անգթութիւն, սակայն Ձեր պատմածը փոխում է խնդիրը. մարդը, անտարակոյս, յանցաւոր է, և ես կուզէի, որ արդարութիւնն ի գործ դրւէր. մի՛ յանձնէք ինձ այդ մարդուն, այլ պատժեցէք ըստ օրէնքի, միայն մի՛ տանջէք։ Եւ մեկնեցի։ Երեկոյեան, լսելով, որ օդաբաշիի կինը տուն է եկել, ես ասացի ծառային, Պաղլօ Կապելլին, որ Հայուն ազատելու իմ ցանկութիւնը փոխւեց, որ նա տանջանքի չի ենթարկւել և որ նա յիրաւի գող է։

Ինչպէ՞ս, բացականչեց Պաղլօ, սաստիկ վրդովւած. գող նա կարող է լինել, բայց տանջանքի նա, անկասկած, ենթարկւել է, ես ինքս տեսել եմ սեփական աչքով փաշայական պալատի բակում։ Տեսայ այդ խեղճ ողորմելի հային ոչխարի պէս գետին գլորւած և բոլորովին ապշած սարսափից ու տանջանքից։ Ատամները, եղունգները քաշում էին, երանքները՝ պատռտում ունելիքով, նա կիսամեռ վիճակի մէջ էր... Եւ

ճչում էր իր շրջապատողներին. „ի՞նչ կարող եմ անել, ես անմեղ եմ, սպանեցէք ինձ, բայց ես չեմ կարող վերադարձնել այն երերը, որ չեմ վերցրել“... Ա՜հ, նա քրիստոնիայ է, չէ՞, հայը քրիստոնիայ է։ Թիւրքերը չտանջեցին զինուորներին, որոնք յանցաւոր են, բայց այս մարդը տանջուեց, որովհետև հայ է“։

Ինձ համար անակնկալ էր այդ—շարունակում է հիւպատոսը։ Երեկ փաշան եկաւ նախաճաշի և ես նրան խնդրեցի ի յայտ բերել ճշմարտութիւնը։ Փաշան խոստացաւ բերել ինձ օտաբաշխին։ Եւ ես ստուգեցի, որ յիրաւի տանջել են... ամեն բան ճշտուեց... Մարմնի վրայ երևում էին ունելիքի հետքերը և ուրիշ սպիացած վերքեր։ Ականներև ապացոյցներ էին դրանք“...

Մէկուսացած, սպօրատիկ դէպքեր չեն սրանք մեր *ancein régime*-ի տակ, նախայեղափոխական վիճակի մէջ, որի „բարիքները“ յաճախ են շեշտել և դրատել մեր մի կարգ հակայեղափոխական հրապարակագիրները։ Քանի՞ նոյնանման իրողութիւններ են արձանագրուած հայոց տխուր մարտիրոսութեան արշիւներում և քանի՞սը չեն արձանագրուած. Թէ նորագոյն ժամանակներում, երբ քիչ թէ շատ գործադրել է քրիստոնեայ Եւրոպայի բարոյական հսկողութիւնը, թէ մանաւանդ նախնի դարերի մէջ, երբ բնաւ չկար հսկողութիւն, հայ տարրը մշտնջենապէս ենթակայ է եղել մի բացառիկ ռէժիմի, մի բացառիկ օրէնսդրութեան, նա չի վայելել անգամ այն խղճուկ հաւասարութիւնը, որ տիրել է միշտ միևնոյն անծայր բռնապետութեան ենթարկուած ստրուկների մարդկային նախիրների մէջ։ Մենք դեռ յետոյ կը բնորոշենք նախայեղափոխական այդ կացութեան անօրինակ սարսափները, հայ մարդու, „հայքաղաքացու“ կրած բոլոր գերմարդկային տանջանքները. առայժմ մեզ պէտք է ի յայտ բերել այն խորունկ, արտասովոր տարկանոնութիւնները, որ ծնունդ է տուել կրօնների, դաւանանքների անհաշտ հակամարտութիւնը, երկու տարբեր քաղաքակրթական ուղղութիւնների միջև ձգուած խրամատը։ „Մահմեդական օրէնքներին ենթարկուած քրիստոնեաների պատմութիւնը — ասում է Ֆոն Համմեր—մի մշանջենաւոր, անհատնում տեսարան է վայրագութեան ու բռնակալութեան“։ Արաբ, թաթար, սելջիւկ, օսման և այլն—բոլորն էլ թողել են այդ երկրի մէջ աշխարհասասան գազանութիւնների իրենց հետքերը։ Լանկ-Թամուր և Համիդ տարբեր չեն իրենց աւերի ու բնաջնջման մեթոդներով... Եւ Թոմա Մեծոփացու աչքով տեսած ու նկարագրած 1424-ի արեան բաղանիքները տարբեր չեն Դիլլոնների ու Լեպցիուսների պատկերացրած հայկական նորագոյն զուլումներից։ Այն ժամանակ ևս — թաթարական, ժենղոլական հօրդաների օրով—նոյն մասսային խուճապները, նոյն յուսահատ լացն ու փախը, կանանց ու երեխաների սրածութիւնը, նոյն խօլական գահավիժումները ժայռերից, նոյն աղէկաւոր հաւ՞ը, նոյն ծանօթ պատկերները. ջարդ, թալան, աւերած, բռնաբարում և սրբապղծում, բարբարոսութեան մի վիթխարի, համայնաջինջ հեղեղատ, մի հսկայական զարհուրանք...

Թւում է թէ օսմանեան արքայատոհմի հաստատութեամբ՝ մեր երկրի մէջ թագաւորում է համեմատական անդորրութիւն—մի տեսակ „պրօգրէս“, հանդէպ նախկին արհաւրալի քաօսի։ Թւում է թէ օսմանցիների տիրապետութիւնը բերեց այդտեղ մօտաւորապէս նոյն կայուն, յարաբերաբար խաղաղ և հանդուրժելի կացութիւնը, որ տիրել էր արևմտեան Եւրոպայում ֆէօդալիզմի արիւնոտ քաօսից յետոյ, բացարձակ միապետութեան յաղթանակով։ Փոքր ինչ աւելի ապահովութիւն, փոքր ինչ նեազ ցնցումներ ու կատակլիզմներ, սրածութիւններ ու աւերումներ։

Սակայն ոչ մի համեմատութիւն չկայ, ի հարկէ, ֆրանսիական Արև-Արքայի կառավարութեան (*Le roi-soleil*, Լուդովիկոս XIV-ի մակդիրը) և օսմանեան սուլթանների հաստատած ռէժիմի միջև...

Յարաբերաբար—պրօգրէս, այո, բայց անդունդ կայ յարաբերականի և բացարձակի մէջ։ Պրօգրէս էր դա, համեմատած նախկին կացութեան հետ,—այն կացութեան՝ որ յաջորդել էր ազգային քաղաքական անկախութիւնը կորցնելուն։ Փոքրագոյն չարիք էր դա—բայց դարձեալ հսկայական։

„Քրիստոնեաների պատմութիւնը մահմեդական օրէնքների տակ—մի անհատնում տեսարան վայրագութեան ու բռնութեան“...

Ճիշտ է ասում Ֆոն Համմեր։ Եւ հայոց կրած մարտիրոսութիւնը չունի իր նմանը համաշխարհային տարեգրութեան մէջ։ Հեռու ենք աչառոտ նախապաշարումով խտացնելու գոյները և պատմական տխուր յուշերով ստեր ձգելու հայ-մահմեդական յարաբերութիւնների վրայ, որոնք այսօր սկսում են մտնել նոր, յուսալի շրջանի մէջ։ Հեռու ենք նաև մահմեդական կրօնին յատկացնելու տիրական միահեծան դեր այդ անօրինակ բազմադարեայ սոսկումների մէջ։ Լանկ-թամուրները չեն խնայել նաև իրենց հաւատակիցներին, չեն խնայել յաճախ և սելջիւկները, տաճիկները, քըրդերը։

„Կրօնական հակամարտութիւն“ անունը տալով ներկայ գլխին, մենք չենք էլ հակուած իսլամի հանդէպ ներբողելու քրիստոնէութիւնը, իբրև դոգմ և իբրև մորալ, բարոյախօսութիւն։

Սակայն պատմութիւնն էլ փոխել չի լինի և մենք պէտք է տանք անաչառօրէն մեր տուրքը պատմական ճշմարտութեանը։ Եթէ կրօնները ընդհանրապէս—նաև Քրիստոսի կրօնը—իրենց տարամերժ բնաւորութեամբ և դարերով արծարծած կոյր, էգոյիստ մոլեռանդութեամբ յաճախ աղէտալի, բթացուցիչ և պառակտիչ դեր են խաղացել մարդկային պատմութեան մէջ, ապա այդ դերը մասնաւորապէս աղէտալի է իսլամ աշխարհում։ Եթէ

կրօնական հակամարտութիւնը ընդհանրապէս ահեղ թափով ծանրացել է համաշխարհային պատմական զարգացման վրայ, ապա աւելի ծանր է եղել և չարաշուք՝ նրա թափը իսլամահպատակ քրիստոնեայ ազգութիւնների ճակատագրի վրայ։

Որքա՞ն բան կայ ասելու այդտեղ։ Որքա՞ն հարուստ ու արգասաւոր է հասարակական էւոլիւցիայի մէջ, կրօնի ալեւոր մոգաւանքը իր այլազան արտայայտութիւններով ու ազդեցութիւններով։ Նա միահեծան տնօրինողը չէ այդ էւոլիւցիայի, ինչպէս երբեմն ծանուցում էին աստուածաբան սոցիօլօգները. նա այն հզօր խթան-պատճառը չէ, պատմական վերիվայրումների, ինչպէս ընդունում են դեռ այսօր ևս շատ բարեպաշտ մտածողներ։ Նա յաճախ իսպառ նսեմանում է տնտեսական պատճառների զօրաւոր ճնշումի տակ, յաճախ իսպառ հալւում է, շոգիանում — իբրև „խթան“ և „ազդակ“ — դասակարգերի խօլական բաղխումների, նրանց նիւթական ախորժակների յորձանքի մէջ։

Սակայն, այդտեղից մինչև „տնտեսական մատերիալիզմի“ պնդումները՝ դեռ հեռ ու է։ Կրօնը մ ի շ տ չի հպատակւում նիւթական և նիւթապաշտական ժողումներին, դասակարգային անձուկ մտահոգութիւններին. նա գործում է երբեմն նաև իբրև ուրոյն, անկախ մի ուժ, որ իր խոշոր տեղն ունի իդէօլօգիական, գաղափարաբանական ուժերի շարքում։ Կան վայրկեաններ և շրջաններ, կան ամբողջ ազգերի պատմութիւններ, ուր կրօնական ազդակը հանդիսանում է երկար ժամանակ, իբրև հրամանատար բոլոր այլազան գործօնների ու պատճառների վրայ, նսեմացնում է նրանց ուժը, ճնշում է, կաշկանդում տնտեսական ազդակների թռիչքն ևս, ձևաւորում է, մի խօսքով կեանքի այլազան հիւսւածքը իր տարամերժ պատգամներով, պահպանում է իր յարատև բռնակալութեան տակ քաղաքականութիւնը, իրաւունքը, օրէնսդրական և դատական հաստատութիւնները, ժողովրդի, զանգւածների մտածողութիւնն ու կամեցողութիւնը և այլն։ Այդպիսի իշխող դեր է ունեցել Իսլամը, մահմեդական հաւատամքը մինչայսօրեայ պատմութեան մէջ, այդ դերը նա շարունակում է մասամբ նաև մեր օրերում, Սահմանադրութեան յաղթանակից յետոյ։

Ոչ մի այլ տեղ, գուցէ ոչ մի այլ պատմական ժամանակաշրջանում կրօնական իդէօլօգիայի (*idéologie*) բռնաւոր տիրապետութիւնը չի շեշտւում այնքան ուժով, այնքան գոռոզ յաւակնութիւններով, ինչպէս այնտեղ, մահմեդական երկիրներում։ Այդտեղ ևս, անտարակոյս — ինչպէս կը տեսնենք յետագայում — պետական կնճիռների միջոցին՝ կրօնը երբեմն յետ էնահանջում քաղաքական և տնտեսական անհրաժեշտութիւնների առջև, — անհրաժեշտութիւններ, որոնք ստիպում են սուլթաններին և հոգևոր պետերին՝ փոխել իրենց սրբազնագոյն օրէնքի բառը, փոխել նրա մեկնաբանութիւնը, դիմել անարժան կազուիստիկի, յարմարեցնել ղուրանի պատգամները նոր կացութեան պայմաններին ու պահանջներին։ Սակայն, ընդհանրապէս կրօնական ֆէտիշը իշխում է տիրականօրէն, երկրաւոր հեղինակութիւնները հպատակւում են երկնաւորին, Ղուրանը տօն է տալիս ամբողջ պետական պաշտօնավարութեան, նա տոն է տալիս — որ ամենից սարսափելին է — մահմեդական միլիօնաւոր զանգւածներին։

Առ ի չգոյէ ուրիշ, աշխարհիկ ուժերի՝ իսլամը այդտեղ, կարելի է ասել, դարբնում է ազգի ամբողջ ներքին կեանքը, նա դարբնում է և միջազգային յարաբերութիւնները, աւելի ճիշտ՝ յարաբերութիւնները իսլամ ցեղերի և նրանց հպատակ ազգերի միջև։

Թողնենք առայժմ „ներքին“ անդրադարձումները և քննենք իսլամ կրօնի ազդեցութիւնը մ ի ջ ազ գ ա յ ի ն կամ աւելի ճիշտ՝ տիրող ու հպատակի դարաւոր յարաբերութիւնների վրայ։

***

Եւրոպացի մի շարք ճանապարհորդներ և գրողներ բազմիցս հնչակել են օսմանեան և ընդհանրապէս մահմեդական հ ա մ բ ե ր ո ղ ո ւ թ ի ւ ն (*totérance*) քրիստոնիայ հպատակների վերաբերմամբ։ Ուրիշները կան նոյն եւրոպական շրջաններում, որ բռնել են տրամագծօրէն հակառակ դիրք։ Կարծիքները խորապէս բաժանւում են այդ հարցի մէջ, ինչպէս որ նրանք բաժանւում են և իսլամի ամբողջ կրօնական դօքտրինի ու աշխարհահայեացքի գնահատութեան մէջ։

„Համբերողութեան“ պատրանքը ստեղծւել է թերևս գլխաւորապէս շնորհիւ այն հանգամանքի, որ այլացեղ ու այլադաւան տարրերը օսմանեան կայսրութեան մէջ — քրիստոնեայ հայեր, յոյներ, սլաւներ, կիսակռապաշտ ասորիներ, սատանայապաշտ եզիդիներ, մովսիսապաշտ հրէաներ, ապա դրուզներ, ղզըլբաշներ և այլն — պահպանել են դարերի ընթացքում իրենց գոյնն ու դաւանանքը, իրենց լեզուն և հաւատը, որ մուսուլման պետութիւնը չի աշխատել ձ ո ւ լ ե լ ու նրանց (թէև կարող էր գուցէ ձուլել), մինչդեռ աւելի քաղաքակիրթ, նոյնիսկ արևմտեան պետութիւններից ոմանք մեծ եռանդով ու սիստեմով հետապնդել են „այլազգիներին“ կլլելու և „մարսելու“ նպատակին։

Պատրանքը, յիրաւի, բաւական ուժեղ է։ Թւում է թէ դժւար չէր օսմանեան պետութեան համար՝ մահմեդականութեան գիրկը նետել — մի ամբողջ շարք դարերի ընթացքում — մի բուռն հայ ժողովրդին։ Եւրոպական միջամտութիւնը չ'օգնեց այդ վերջինին՝ անգամ 20-րդ դարու մէջ, սպառազինւած միջազգային դաշնագիրներով, — ո՞ւր մնաց թէ նա օգնութեան գար փոքր Ասիայի մի բուռն անյայտ „ռայա“ներին 15-րդ, 16-րդ, 17-րդ

դարերում... Եթէ անողորմ հետևողականութեամբ սկզբից ի վեր հնչէր ծանօթ դելեմմը՝ „մահմեդականացում կամ մահ“, եթէ սուլթանները փորձէին յարատև ճիգերով և խմբական սրածութիւնների սպառնալիքով կրօնափոխ անել իրենց հպատակ „ռայեա“ներին, թւում է թէ այդ փորձերը չէին վիժի... Հազիւ թէ հայ ժողովուրդը զանգւածօրէն ընտրէր մահը, իսլամացման վտանգի դիմաց... Անշուշտ, քրիստոնեաների մի ընդհանուր ըմբոստացման հեռանկարը—նոյնիսկ բիրտ, անասնական ստրկութեան այն խաւար ժամանակներում—որոշ չափով մնում էր սուլթանական հաշիւների մէջ. այնուամենայնիւ, այդ տարտամ հնարաւորութիւնը չէր, որ պիտի կանգնեցնէր խալիֆներին։ Եղել են, հարկաւ, ուրիշ կարգի „զսպանակներ“։ Եղել է մասամբ տնտեսական պատճառը, որ քիչ առաջ յիշատակեցինք։

Օսմանեան քաղաքական սիստեմը իր հիմնադրութեան օրերից ի վեր որոշել է, ի տեղի ունենալու կամ բռնի իսլամացնելու նւաճւած աշխատաւոր քրիստոնեայ ազգաբնակութիւնը, պահպանել յայտնի սահմաններում նրա ուրոյն դէմքը, խնայել նրա հնաւանդ ստացւածքները—լեզուն, կրօնը, ազգայնական առանձնայատկութիւնները—խնայել, մի խօսքով, այդ աշխատող և արտադրող տարրը, իբրև մի տեսակ յաւիտենական կթան կով, որ կարող է իր կուլտուրական աշխատանքի ու ձեռնէրեցութեան իր ուժով, երկրագործութեան, առևտրի, ճարտարարուեստի իր բնածին և հնածին ընդունակութիւններով՝ սնուցանել ու պահպանել իշխող տարրը, որ ներկայանում էր, իբրև աւելի ստորին տիպ քաղաքակրթութեան, որ վարժւել էր դարերից ի վեր գլխաւորապէս ռազմական արւեստի մէջ—թալանի ու սպանութեան, սանձարձակ ասպատակութեան և կոպիտ շահագործման—որ տակաւին չէր դուրս եկել նահապետական, խաշնարած համայնքների շրջանակներից, չէր ընտելացել աշխատանքի աւելի բարձր, արգիւնաբար ձևերի և այդ պատճառով դեռ երկար ժամանակ պիտի քարշ տար մի տեսակ մակաբուծային գոյութիւն, թարգմանելով ու արդարացնելով այն ուշագրաւ, Արևելքում բաւականաչափ տարածւած երևոյթը, որ կոչւում է գիտութեան մէջ՝ սոցիալական զանգւածային պարազիտիզմ։

Ապրել քրիստոնեայ ժողովուրդների հաշւին, ստիպել նրանց՝ վճարել գլխահարկ, անխախտ պահպանել նրանց ցեղային կերպարանքը — որից առանձին երկիւղ չունէր տիրապետող, զինւորական տարրը — և միաժամանակ ճնշել ու սխմել նոյն այդ տարրը, թոյլ չտալ, որ նա զարգանայ „չափից դուրս“, որ նա անցնէ յայտնի սահմաններէն, թոյլ չտալ, որ նրա մէջ բողբոջեն ըմբոստացումի սաղմեր, վտանգաւոր Իսլամի տիրապետութեան համար, ահաւասիկ այդ քաղաքական սիստեմի իմաստը և գաղտնիքը... մի գաղտնիք, որ, աւա՜ղ, հզօրապէս շեշտւում է անգամ այսօր, օսմանեան սահմանադրական ռէժիմի տակ...

Օսման, Մահմեդ II, Սուլէյման, Ահմեդ, Մահմուդ, Աբդիւլ Մեջիդ, Աբդիւլ Ազիզ—ամենքն էլ որոշ չափով հետևող են եղել այդ սիստեմի, խրախուսելով—մինչև մի յայտնի աստիճան — քրիստոնեայ համայնքներին, տալով նրանց առաջաւոր տարրերին—կղերին, ամիրաներին, վաճառականներին — յայտնի դիրք, առանձնաշնորհումներ պետական կեանքի մէջ, յաճախ նոյնիսկ յանձնելով քրիստոնեաներին կարևոր, պատասխանատու պաշտօններ։ Կարմիր Գազանը միայն շեղւեց այդ սիստեմի հրամայականներից և հակառակ իր թափանցող իմացականութեան ու գործնական մտակալմին, տաւելով բնազդային, անասնական վրէժխնդրութեամբ, նետեց երկիրը աւերածի անդունդի մէջ, չորցնելով արգասաւոր աշխատանքի աղբիւրները, անդամալուծելով տնտեսական կեանքը հսկայական տարածութիւնների վրայ, շղթայազերծելով անօրինակ, լանկ-թամուրեան ուրագաններ...

Կամ գլխահարկ — մի շարք ուրիշ „իլլօտային“ տուրքերի հետ — կամ խմբովին իսլամացում... Դիլեմմը այսպէս է դրւել այն ահաւոր օրերի մէջ, երբ դաժան մահիկը ստորադրել էր խաչը ահագին տարածութեան վրայ։ Քրիստոնեաները նախընտրել են տուրքերը—մի շարք ուրիշ նւաստացուցիչ պահանջների հետ — և սուլթաններն էլ գոհ են մնացել դիլեմմի այդպիսի լուծմամբ, ևս առաւել, որ իսլամական վարդապետութիւնն ևս իր մի յօդւածով այդպէս էր թելադրում։

Երբ — ասում է Արմինիօն *) — սուլթան Մահմեդ II-ը դրաւեց Կ. Պոլիսը, նա ձեռնարկեց անմիջապէս նւաճւած երկրի կազմակերպման։ Այդ նպատակով նրան մնում էր միայն հետևել քաղաքականութեան այն կանոնին, որ ներշնչած էին Մարգարէին և իր անմիջական աշակերտներին՝ միջավայրի պայմանները, այն միջավայրի՝ ուր սաղմնաւորւել էր իսլամական դօքտրինը. Պէտք էր պահպանել նւաճող բանակի տիրապետութիւնը՝ ցեղով, լեզուով, կրօնով ու բարքերով տարբեր ժողովուրդների վրայ...

1453 թ. մայիսի 29-ին սուլթանը հանդիսաւորապէս մուտք գործեց քաղաքի մէջ և յունիսի 1-ին մեծ շուքով ընդունեց տիեզերական պատրիարք Գեննադիոսին—որ ընտրւած էր իր, սուլթանի հրահանգով մի քանի ուղղափառ քահանաների ու սարկաւագների կողմից—և յանձնեց նրան, բիւզանդական թագաւորների ընդունած մեծարանքներով, գաւազանը, զարդարւած թանկագին քարերով, որ պատւանշան էր հայրապետական իշխանութեան։ Երկու օր յետոյ, Բրուսսայի հայ եպիսկոպոս Յովակիմ II հրաման ստացաւ գալ հաստատւելու նոր մայրաքաղաքում 200 հայ ընտանիքով։ Մօտ 30,000 հայեր միայն քիչ յետոյ այդ կարգին։ Յովակիմը ստացաւ պատրիարքական տիտղոս, վիզիրի ստորագրանով ու պատուներով։ Նոյն ժամանակներում, Կապալի

*) *P. Arminjon, La Protection religieuse dans l'Empire Ottoman, La Revue de Paris, 15 Avril 1903.*

անունով ուաբբին հռչակուեց առաջնորդ հրէաների, որ ունէր իր հաւատակիցների վրայ նոյն իշխանութիւնը, ինչ որ երկու պատրիարքները իրենց հօտերի վրայ. այն է՝ կառավարել իրենց կրօնների ռայեաներին, տուրք դնել նրանց վրայ, օրէնքներ սահմանել և դատել։

Երեք նուաճուած „ազգութիւնների"—յոյների, հայերի և հրէաների — առաջնորդներից իւրաքանչիւրը պատասխանատու էր — ի հարկին իր գլխով իսկ — թէ իր համայնքի անդամների տուրքերը վճարելու և թէ նրանց ներքին կարգի ու խաղաղութեան համար։ Նոյն պատասխանատուութիւնն ընկնում էր վիճակների առաջնորդների և ծխական քահանաների վրայ։ Այդ պատասխանատուութիւնը ունէր և համազօր իշխանութիւն։ Ցեղերական պատրիարքը, հաւաքիչ գլխահարկի, ունէր իբրև օժանդակ, մի մնայուն խորհուրդ, որ միանգամայն ազգային խորհուրդն էր և գերագոյն տեսան՝ անձնական կանոնադրութեան խնդիրներում։ Նա ունէր սուլթանի մօտ իր ներկայացուցիչ-գործակալը։ Նոր չէր այդ կազմակերպութիւնը, լրացուած տեղական լայն ինքնավարութեամբ։ Թիւրքերն արդէն Ասիոյ մէջ կիրառել էին, արաբներից ընդօրինակելով։ Նրա անմիջական առաւելութիւններն ակներև են.—հպատակութեան մէջ պահել նուաճուած ազգաբնակութիւնները, նրանց ծոցից իսկ ընտրուած առաջնորդների միջոցով և առանց ծախքի հաւաքել տուրքը, գլխահարկը։ Թիւրք իշխանութիւնները, իրենք բնաւ չխրախուսելով ռայեաների իսլամացումը, ծուռ աչքով էին դիտում կրօնափոխութիւնը, որը եթէ ընդհանրանար, կարող էր յամաքեցնել տուրքի աղբիւրը։

Ահաւասիկ „համբերողութեան" պատրանքի տնտեսական աստառը։

Թոյլատրելով հանդերձ հպատակ ռայեաներին, իբրև մի մի կրօնական համայնքների, պահպանելու իրենց ներքին կազմակերպութիւնը, օրէնքները, բարքերն ու սովորութիւնները, իսլամական դոքտրինը դնում էր նրանց ամենաանարգ, նուաստացուցիչ պայմանների մէջ, դիտում էր նրանց իբրև ստոր ցեղ՝ մահմեդական ցեղերի հանդէպ... Ռայեան պէտք է ոչ միայն վճարէր գլխահարկը և հողահարկը, այլ և պէտք է զանազանուէր մահմեդականից իր զգեստով, իր տների արտաքինով, պէտք է միշտ խոնարհագին մեծարանքի ցոյցեր անէր ի տես յետին մահմեդական ռամիկի։ Նա չէր կարող զէնք կրել, անարժան էր զինուորական արուեստի մէջ հաւասարուելու իսլամին. նա չէր կարող ձի հեծնել, նա պէտք է հրաժարուէր բոլոր առնական մարզանքներից և պէտք էր կնանար, մեղկանար, հաշմանդամուէր. նա չէր կարող իր ժամը, աղօթատեղին կառուցանել իր ցանկացած շքով ու ձևով, որոշ չափից աւելի բարձր, չէր կարող բարձրաձայն կատարել իր ժամերգութիւնը, երգել իր սաղմոսները, կազմակերպել կրօնական թափօրներ. նա չէր կարող հնչեցնել զանգակների զողանջն անգամ—ամեն ինչ պիտի կատարուէր գերեզմանային լռութեան մէջ, ամեն ձայն պիտի պապանձուէր... որպէս զի բնաւ չհասնէր „տէրերի" ականջներին, չվիրաւորէր իսլամ հաւատացեալի զգացումները և որպէս զի խաչն ու աւետարանը մնային յաւէտ մի անարգ ստորադասութեան, մի անպատիւ մոռացութեան մէջ... Հայաստանի հայ ժողովուրդը, ասում են, այն աստիճան մարզուել է, ընտելացել է այդ պապանձուն, մեռելային հոգեբանութեան, որ դեռ այսօր էլ շատ տեղերում հայ ժամերի մէջ չէք տեսնում զանգակատներ, չէք լսում զանգահարութիւն։

„Համբերողութիւնը" դառնում էր իրօք մի ծայրայեղ անյարգանք—ասենք աւելի պատշաճ խօսք — արհամարհանք դէպի ռայեան։ Փաստեր բերենք նաև օտար աղբիւրներից։ Նախ ամենից հները։ Ահա Տաւերնիէ և Տուրնը Ֆօր, ահա և Ռիկաֆտ։ Երեքն էլ՝ նշանաւոր, արկածասէր, իմացական տուրիստներ, որ տենդային հարցասիրութեամբ զինուած, գնացել են ուսումնասիրելու այն հեռաւոր ժողովուրդների կեանքն ու պատմութիւնը՝ 17-րդ և 18-րդ դարում։ Վատ չէ նրանց վերաբերումը դէպի Արևելքի տիրող տարրը. տեղ-տեղ խօսում են նոյնիսկ գովեստով օսմանցիների, մահմեդականութեան, Ղուրանի մասին։ Բայց երեքն էլ շեշտում են այն խորունկ անտագոնիզմը, որ եղել է մահմեդականի ու հայի միջև.

„Թիւրքերը արհամարում են հայերին՝ նրանց կրօնի համար"—ասում է Պիտոն Տուրնը-Ֆօր, որ խօսում է անսովոր յափշտակութեամբ այն ժամանակուայ հայերի մասին, համարում է նրանց „երկրագնդի ամենահռչակաւոր վաճառականներ"... և „աշխարհի լաւագոյն մարդիկ, ազնիւ, քաղաքավարի, օժտուած ողջմտութեամբ ու շիտակութեամբ" *)։

Աւելի խիստ է Ռիկաֆտի արտայայտութիւնը կրօնական այդ հակամարտութեան մասին.

„Դէպի քրիստոնեաները նրանք (օսմանցիք) տածում են մի սոսկալի գարշանք (*une aversion horrible*)—ասում է նա։

"Զկայ բռնութիւն, որ նրանք ի գործ չդնեն՝ քրիստոնեաներին ապքատացնելու, դժբախտացնելու համար... Դա համբերողութիւն չէ, այլ հալածանք և տառապանք...

„Ճիշտ է, մուսուլմանները հանդուրժում են, որ քրիստոնեանները ունենան իրենց եկեղեցիները, աղօթատեղերը, որոնք վաղուց շինուած են։ Սակայն նրանք թոյլ չեն տալիս նորերը շինելու։ Եկեղեցիների կամարները կարող էին շտկել տալ, բայց նրանց վրայ որևէ բան աւելացնել—չէին կարող։

1660 թ.-ին, ասում է Ռիկաֆտ, մեծ հրդեհի զոհ գնացին Ղալաթայի և Պոլսի մէջ մի շարք քրիստոնեայ եկեղեցիներ ու մատուռներ։ Բարեպաշտ քրիստոնեաները շուտով նորէն կառուցին։ Բայց հէնց որ շինուածքն աւարտուեց, եկան աւերեցին իշխանութեան հրամանով։ Արգելուած է, ասում են թիւրքերը, վերաշինել այն եկեղեցիները, որոնց միմիայն հիմերն են մնում" **)...

*) *Pitton de Tournefort, Relation d'un voyage du Levant* (Հրատ. Ամստերդամ, 1718 թ.), հատ *II*, էջ 158։

**) *Ricavt, Histoire de l'état présent de l'Empire Ottoman*. Հրատ. 1670 թ. (*trad. de l'anglais*)։

Մի այլ տեղ, նոյն գրքի մէջ, ասում է Ռիկաֆտ.

„Քրիստոնեաները ճնշուած են ամեն կերպ։ Այն գոյքերը, որ նրանք վաստակում են մեծամեծ դժուարութիւններով իրենց աշխատանքի ու ճարտարարուեստի շնորհիւ, ենթակայ են իշխող անձանց յափշտակութեան։ Ձեն հանդուրժում, որ նրանք — քրիստոնեաները — զէնք ունենան, պատերազմի էլ չեն տանում նրանց, որպէս զի վախկոտ դարձնեն, անընդունակ՝ ձեռնարկելու որևէ գործ՝ գայթակղութիւնների միջոցին“։

Գանք նորագոյն—նոյնպէս օտար—վկայութիւնների, հրատարակուած հայկական խնդրի բորբոքման շրջաններում, անցեալ դարու 80-ական և 90-ական թուերի մէջ։

Ճիշտ է, ասում է անգլիացի Ջէյմս Կրէէգ, թիւրքերի արհամարհանքը թոյլ տալիս էր յոյն ու հայ քրիստոնեաներին—որոնք դերադասում էին տուրք վճարել, քան կրօնափոխ լինել—ճիշտ է նրանց թոյլ էր տալիս կատարել իրենց ծէսերը և դաւանել իրենց կրօնը, սակայն նրանց ոչ միայն արգելում էր զանգակները հնչեցնել, թափօրներ կատարել, ձի հեծնել ու զէնք կրել, այլ և մինչդեռ թիւրքական ձևերն (manners) ու զգեստները տարածուում էին երկրի բոլոր անկիւնները, նրանց — հայերին ու յոյներին— ստիպում էին կրել այնպիսի զգեստներ, որ բոլորովին նմանուէին կանանց։

Տների ու եկեղեցիների հասակն ու լայնութիւնը նախորոշուած էին օրէնքով, հասցրուած նուազագոյն չափերի։ Եւ նրանք (քրիստոնեաները) հարկադրուած էին ցոյցերով ու մեծարանքով դիմաւորել իրենց հանդիպած ամենայետին մուսուլմանին անգամ։

Տիրող տարրը նայում էր քրիստոնեաների վրայ նոյն արհամարհանքով և զզուանքով, ինչպէս սպարդային՝ կաշտ ու ապուշ իլոտների վրայ... Մահմեդականի աչքում քրիստոնեան նոյնն էր, ինչ որ էր իր եզը կամ էշը, օգտակար սոսկ իբրև բեռնակիրներ... Զրկուած լինելով զէնք կրելու իրաւունքից, երբէք չմարզուելով պատերազմի մէջ՝ քրիստոնեաները այդպիսով կանացիացան (effeminate) և դարձան նուազ վտանգաւոր ապստամբութեան տեսակէտից *)։

Այսպէս է վկայում Ջէյմս Կրէէգ, որ ընդհանրապէս նպաստաւոր լեզու է գործածում մահմեդականների վերաբերմամբ։

Նոյն վկայութիւնները գտնում ենք մի այլ հետաքրքրական և անծանիմ աշխատութեան մէջ, *Armenia. A historical sketch, by an old Indian* (էջեր 87—90)։

Ասե՞լ արդեօք, թէ ինչ աւերիչ, այլասեռող ազդեցութիւն էին գործում հայ տարրի վրայ՝ կրօնական խտրութիւններից բղխող այդ դարաւոր անարգական յարաբերութիւնները։ Այլասեռում — ֆիզիկական, մասաւոր ու հոգեկան, այլասեռում — բարոյական։

Եւ այն հեռաւոր ժամանակներից, մեր զուլում-պատմութեան այն խորունկ ու ոճրանիւթ ծալքերից էր, որ ժառանգեցինք անասնական սերվիլիզմի և բարոյական ամեն տեսակ ախտերի այն զարհուրելի բեռը, որ այնքան ծանրացրեց մեր մանուկ յեղափոխութեան ընթացքը, որ այնքան թունաւորեց հայկական մթնոլորտը,— մատնութեան, լրտեսութեան, դաւաճանութեան համաճարակով—որ այնքան նսեմացրեց արտաքին աշխարհի մէջ մեր հոյակապ ռազմիկների դիւցազնական թռիչքները։

Այն մասայլ շրջաններից ժառանգուած յատկութիւններն են, որոնց վրայ ակնարկում է և Ս. Ղազարի հինաւուրց բանաստեղծ-հիւրը, Զայլդ-Հարօլդի վեհափառ երգիչը, որ ասում էր հայերի մասին, իր սրտառուչ նամակներում (1817 թ.).

... *Their virtues have been thouse of peace and their vices thouse of compulsion.*

„Նրանց առաքինութիւնները խաղաղութեան առաքինութիւններ են, իսկ արատները—արդիւնք են բռնութեան, բռնադատութեան“...

Եթէ լորդ Բայրընը ապրէր հարիւր տարի ևս, գուցէ չպիտի գրէր այդ նշանաւոր, հայերի կողմից այնքան անգամ հոլովուած նախադասութեան առջի մասը.

It would be difficult, perhaps, to find the annals of a nation less staiencd with crimes...

„Դժուար կը լինէր թերևս գտնել մի այլ ժողովրդի տարեգրութիւն, այնքան ազատ ոճիրներից, այնքան քիչ արբապղծուած ոճիրներով՝...

***

Ի՞նչ կարող էր լինել արհամարհուած և տրորուած, մշտնջենական անարգանքի ու բռնութեան տակ դեգերող մարդ-գրաստի վիճակը... Ստրուկ, տիրապաշտ, նենգաւոր և ծածկամիտ, խարդախ և խաբեբայ, կեղծ, քծնող ու շողոքորթող և երկչոտ, երկչոտ.. *Effeminate!* —Ամենից դաժան հնչում է մեր ակնջին անգլիացի ուսումնասիրողի այդ սարսափելի խօսքը։

„Կնացա՞ծ“—արդարև... Եւ իշխող տարրի նպատակն էլ հենց այդ էր.—առնել իր վրայ զինուորական մարզանքների մենաշնորհը և դաստիարակել բոլոր „գիաուրներին“ մի այնպիսի հեռատես և դիւային մեթոդով՝ որ նրանցից դուրս գան միայն հլու կին-քաղաքացիներ, անընդունակ՝ ըմբոստանալու, զէնքով դիմադրելու, ընդունակ՝ միայն լռելու և պարանոցը ճկելու...

Ահա թէ ինչ տուեց մեզ սուլթանների և փաշաների մեծահռչակ „համբերողութիւնը“։

Երևոյթը ունի, սակայն, իր դրական կողմերն ևս։ Կրօնական խտրութիւնը իր ձգած անջրպետներով, թուում է թէ մի յայտնի չափով նպաստել է քրիստոնեայ տարրերի ազգային պահպանութեանը։ Ո՞վ գիտէ... եթէ օսմանցիք չձգէին կրօնի այդ անանցանելի խրամատը խլամի ու „գիաուրի“ միջև, եթէ նրանք չխորշէին ու չգարշէին այդ վերջինից և փոքր ինչ աւելի յարգանք տածէին դէպի հպատակ ժողովուրդները, նրանց մարդկային ու ազգային արժանապատուութիւնը, եթէ տիրողի ու հպատակի միջև լինէին փոքր ինչ նմա-

*) *James Creagh, Armenians, Koords and Turks* (Լոնդոն, 1880 թ.). էջեր 41, 139, 140—143։

նութիւն կուլտուրական, քաղաքակրթական ձգտումների ու աշխատանքի տեսակէտից, եթէ հայ ազգը ունենար գէթ փոքրիկ հնարաւորութիւն մօտենալու տիրապետող ցեղին, ս՛րտ շփումն հաստատելու նրա հետ,—ո՞վ գիտէ... գուցէ նա ձուլուէր հետզհետէ բեկոր առ բեկոր, այդ իշխող, օսմանեան զանգուածի հետ, կը լուծուէր թերևս լեզուով ու բարքով, ինչպէս որ լուծուել է — իր խիստ շեշտուած օտարամոլ բնազդի շնորհիւ — Կեսարիայում, Կիլիկիայում, Թիւրքահայաստանի մի քանի այլ վայրերի մէջ, ինչպէս նաև Անդրկովկասի և Ռուսաստանի ռուսախօս և վրացախօս գաւառներում, Լեհաստանի, Ունգարիայի հայկական գաղթավայրերում։

Կրօնը միայն, հայ եկեղեցին կը մնար կանգուն, ինչպէս կանգուն է Բեսսարաբիայի, Գալիցիայի, Տրանսիլվանիայի կենտրոններում, իբրև տխուր խորհրդանշան երբեմն ազատ ու բարգաւաճ հայրենիքի...

Սակայն ձուլումը, բարեբախտաբար, դժուարանում էր մասամբ հէնց այն հանգամանքով՝ որ տիրող տարրը սկզբից ի վեր պահել է այլակրօններին մի յայտնի տարածութեան վրայ, համարել է մի տեսակ սրբապղծութիւն՝ սերտ շփումի մէջ մտնել „անմաքուր“ և „նզովեալ“ ցեղերի հետ, ձգել է նրանց, այսպէս ասած, իրենց ճակատագրին, տալով նոյնիսկ ինքնօրինութեան մի քանի փշրանք և հետաքրքրելով լոկ նրանց գրաստի աշխատանքով, նրանց արիւն-քրտինքով արտաբերած հարստութեամբ։

Մի հարց ևս։ Արդեօք իսլամի և քրիստոնէութեան միջև գիտակցաբար ձգուած անջրպետների և խրամատների մէջ որևէ դեր չի՞ ունեցել իշխող տարրի, այսպէս ասած, ինքնապաշտպանութեան մտահոգութիւնը։ Արդեօք չի՞ վախեցել նա—այդ կղերա-զինուորական թէօկրատիկ դասակարգը—թէ քրիստոնեայ աւելի բարձր, կուլտուրական տարրերը իսլամացնելով՝ կարող է մտցնել վտանգաւոր մի intrus, մի „ինքնակոչ“, ղեկավարող կորիզ այդ տիրական, առանձնաշնորհեալ, ի ծնէ և ի պաշտօնէ իսլամ, ուղղափառ դասակարգի մէջ և այդպիսով խախտել նոյն այդ դասակարգի միահեծան տիրապետութիւնը, հեգեմոնիան։

Հարցը դնում ենք միայն... առանց որոշակի պատասխանել կարողանալու։

Մի անլուծելի առեղծուած է թւում մեր տեսութեան այս նշանաւոր կէտը, որ վերաբերում է կրօնական հակամարտութեան և իսլամհպատակ քրիստոնեաների տարապայման ճակատագրին։ Մէկը բազմաթիւ հակասութիւններից՝ որոնցով այնքան փայլում է օսմանեան ինքնատիպ քաղաքական սիստեմը։ Հակասութիւններ—մերթ գիտակից, նպատակաւոր, մակկեավելիկ, որոշ շահերի հետապնդող, մերթ—անգիտակից, անհեթեթ ու տարրալուծող... Այդպէս, օրինակ, XIX դարի 60-ական թւականներին այդ սիստեմը տալիս էր մեզ կուլտուրական ներքին ինքնօրինութիւն, որ այն ժամանակւայ պայմանների մէջ հսկայական վաստակ էր մի տրորուած, գրեթէ իսպառ առնազուրկ եղած ցեղի համար. օսմանեան պետութիւնը, առանց լինելու հարկադրուած, բռնագատուած, առանց լսելու հայերի կողմից զէնքի շառաչ ու ռազմի որոտ (Զէյթունը դեռ բաւական չէր), տալիս էր նրանց իրաւունք ու հնարաւորութիւն՝ հիմնելու ազգային-հասարակական պէս-պէս հաստատութիւններ, պատելու Հայաստանը դպրոցների ցանցով, զարկ տալու, մի խօսքով, ազգային վերածնութեան և աղատութեան,—հապա միւս կողմից՝ նոյն քաղաքական սիստեմը յամառաբար ջնջում էր մեզ գաւառներում, գաղտնօրէն ու յայտնօրէն ճարակում էր յաչս ամբողջ Եւրոպայի, ճարակում էր սովով, գաղթով, հողային գրաւումներով, տուրքերով, քրդերով ու չէրքէզներով...

Եօթանասնական թւականների պատմական օրերում—նոյն ճչացող հակասութիւնը։ Մի կողմից սուլթանական կամարիլլան ափաշկարայ խրախուսում էր հայկական ինքնավարութեան ծրագիրները, թոյլատրում էր նոյնիսկ յատուկ պատգամաւորութիւն առաքել ի Բերլին և ամեն տեսակ դիւրութիւններ էր ընծայում պատրիարքին ու պատգամաւորութեան,—հապա միւս կողմից՝ նոյն կամարիլլան թալանի ու սպանութեան, արեան և արտասուքի թատր էր դարձնում օսմանեան Հայաստանը...

Հակասութիւն—թէպէտ և ոչ նոյնանման—տեսնում ենք և այն հեռաւոր ժամանակներում։ Մի կողմից „քաղաքական սիստեմը“, իր գոյութեան շահերից իսկ հրահանգուած՝ հրաժարւում էր քրիստոնեաներին իսլամացնելուց—հապա միւս կողմից մենք տեսնում ենք նոյն այդ վաղեմի դարերում կրօնական հալածանքների, բռնի իսլամացման և հայկական նահատակութիւնների մի անվերջ շարան, որոնք յաճախ կատարւել են իսլամ խուժանի ձեռքով և որոնց գրեթէ միշտ նախագահել են գաւառական իշխանութիւնները, ի դէմս վալիների, փաշաների, գայմագամների... Կարծես թէ կենտրոնը, իբրև աւելի խելահաս և աւելի գիտակից համապետական բարգաւաճման շահերի—գուցէ նաև վախենալով „հեգեմոնիայի“ խախտման հեռապատկերից—հրաժարւել է ընդհանրապէս իսլամացման քաղաքականութիւնից, իսկ այնտեղ, հեռուն՝ խուժանները և իրենց անձնական առաջնորդները, իբրև աւելի նախանձախնդիր կրօնի բարգաւաճման, օգտւել են սովորաբար պատեհ առիթներից, որպէս զի մոլեգնօրէն արձագանք տան ղուրանի ռազմաշունչ պատգամներին *), գրոհ տան գիաւուրի դէմ և խաչի աւերակների վրայ տնկեն իրենց մահիկը։

Ցամենայն դէպս կրօնը և կրօնական հակամարտութիւնը, իբրև ուրոյն ու զօրաւոր ներազդակ — անկախ նոյնիսկ տնտեսական գործօններից, անկախ ամեն դասա-

*) Այդ մասին—գալ յօդուածում։

կարգային և նիւթական ներշնչումից — յաճախ է դեր խաղացել մահմեդական զանգուածների հոգեբանութեան, նրանց խօլական, արհաւրալի թուիչքների մէջ։ Ապացոյցներով հարուստ են թէ հին, թէ նոր պատմութիւնը, մասնաւորապէս մեր նորագոյն զուլումների պատմութիւնը Թիւրքիայում ու Կովկասում։

Ցիշենք մէկը և — բնորոշը։

Պատմողը անգլիական փոխ-հիւպատոս Ֆից-Մօրիսն է (պաշտօնական Կապոյտ գրքում), որ 1896 թուին իր կառավարութեան հրահանգով, ուղեկցեց Թիւրքական քննիչ յանձնաժողովին՝ Հալէպի վիլայէթում տեղի ունեցած մահմեդական խժդժութիւնները ստուգելու համար։ Երբ — ասում է նա — խուժանը գրոհ տուեց Բիրեճիկի հայ ազգաբնակութեան վրայ ջարդելու և աւերելու որոշումով, երբ հայերը տեսան, որ այլ ևս փրկութիւն չկայ, մի հայ կին բարձրացաւ տանիքի վրայ, պարզեց ճերմակ դրօշը և յայտարարեց, թէ իրենք ամենքն էլ գրկում են մահմեդականութիւնը։ Մնացած հայերն ևս կրկնեցին իսլամ հաւատամքի ֆօրմուլը. այն ժամանակ խուժանը անմիջապէս հեռացաւ, չուզենալով յարձակուել իր նոր հաւատակիցների վրայ *)..

Կրօնի բացած խրամատը հսկայական է։ Փնտրենք այժմ նրա հեռաւոր արմատները, մտնենք փոքր ինչ իսլամական հաւատամքի այլազան և շփոթ մեկնութիւնների մէջ, ծանօթանանք փոքր ինչ Ղուրանի դրական և բացասական պատգամների հետ. տեսնենք նաև, թէ ինչպէս է անդրադարձել կրօնական միահեծան վարդապետութիւնը „ներսում“, օսմանեան ցեղի ու պետութեան ընդհանուր ճակատագրի վրայ և որքան հաշտելի է (compatible) իսլամի ժամանակակից ուղղութիւնը արևելեան Բաբելօնի, մասնաւորապէս մեր երկրի զարգացման ու առաջադիմութեան պրօցէսի հետ։

ՆԻՒԹԱՏԻՊԻՆ

Պոլսոյ Կեդր. Կոմիտէն ուղարկած է՝

Տէտէ-Աղաճի կազմէն՝ խմբական անդամավճ. 155 դրշ։

Գարբալի խումբէն՝ 70 դրշ.։

Կէյվէի կազմէն՝ 240 դրշ։

Տարտանելի կազմէն՝ 643 դրշ.։

Պանդրմայի կազմ. — Հեռեւեալ խումբերէ՝ Արծիւ 105 դրշ., Պարոյր Հայկազն 40, Գիւակից 69, Եւս 72, Սասուն 90, Գժոխք 215, Զէյթուն 126, Արարատեան 394, ուէր Զաւէնէն 5 դրշ.։

Քիրմասթի կազմ. — Հեռեւեալ խումբերէ՝ Կայծակ 34 դրշ., Նէվրուզ 40, Անդրանիկ 44, Գնունի 16, Արծիւ 32. 20, Հուր 20, զանազաններէ 13. 20 դրշ.։

Գուրդ-Պելեն ենթակոմիտէն.—Հեռեւեալ խումբերէ՝ Ժայռ 42 դրշ., Առիւծ 117, Շանթ 108, Աւազ 112, Ապտակ 64, Փայլակ 112, Հորիզոն 72, Գիշատիչ 46, Սպեր 36, Մոսին 295, Արծիւ 28, Խան 65, Վիշապ 134, Արեւ 18, Արսլան 19, Գայլ 36, Նժդեհ 40, Արարատ 112, Վազրիկ 108, Կանանց խ. 370, զանազան ընկեր. ներէ 120 դրշ.։

Զէնկելերի ենթակոմիտէն. — Ընկերներու անդամավճարներէ 1837 դրշ., խումբերէ՝ Առիւծ 103, Ժիրայր 85, Արեւ 94, Նոճի 60, Արծիւ 74, Ոսկի 76, Հայկազն 46, Բաժքի 16 դրշ.։

Պարսիզակի կոմիտէն. — Հեռեւեալ խումբերէ՝ Շանթ 393. 20 դրշ., Մտրակ 170, Ասպիկ 151, Ամպրոպ 328, Որոտ 335. 20, Կայծակ 197, Անահիտ 291. 20, Անդրանիկ 237, Արարատ 331, Մեղու 139, Թաքառ 327, Արուեստաստեր 51, Որսորդ 67, Կրակ 60, Սասուն 80. 20, Գնդակ 56, Ընթերցասէր 44, Թռուցիկ 50, Ընբոստ 25, Վրէժ 48, Գէորգ Զաւուշ 70, Ցակինք 139, Մանիտակ 59, Բազէ 260, Մարտիկ 23, Բրիսաֆոր-Վռամ 82. 20 դրշ.։

Արմաշի ենթակոմիտէն. — Հեռեւեալ խումբերէ՝ Երիտասարդ 52, Հայազան 78, Հէրմես 59, Ասպ 36, Մտակ 37, Շաւարշան 104, Հայրենիք 80, Արարատ 106, Հայկազն 46, Խաչ-գիւղի Բրզնունի խ. 111, Արազած 83. Մասեաց 71 դրշ.։

Իզմիթի կազմ.—Հեռեւեալ խումբերէ՝ Անդրանիկ 257 դրշ., Գործօն 261, Կայծակ 229, Պայքար 187, Սաղար 62, Կարմիր Խաչի Ցասմիկ 34. Կարմիր Խաչի Մանիտակ 38, Վարդ 36, Կարմիր Խաչի Շուշան 40, Նորակազմ 216, օժանդակ ընկերուհիներէ 14, Կարմիր Խաչի ընկերուհիներէն 60 դրշ.։

Զօնգուլտաքի կազմ.—Ընկերներու անդամավճարներէ եւ վիճակահանութենէ 1466. 10 դրշ.։

Դրնդրլարի ենթակոմիտէն. — Հեռեւեալ խումբերէ՝ Երիտասարդ 446 դրշ., Հայազան 208, Հէրմես 257, Ասպ 162, Մտակ 115, Շաւարշան 247, Հայրենիք 201, Արարատ 171, Տ. Դ. խումբերէ 50, Հայկազն 390, Վահան 482, Հրայր 696, Սերոբ 378, Արծիւ 438, Արծրունի 10, Սուր 11, Բաժքի 20, Վարդգէս 256, Անաբեկիչ 92, Շանթ 481, Մարտիկ 5, Ժայռ 243. 20, Կրակ 34, զանազան խումբերէ 243. 20, ուէր Տէյիրմէնճեանէ 60, Զանազաններէ 20 դրշ.։

Մալկարայի կազմ.—Հեռեւեալ խումբերէ՝ Կիլիկիա 130 դրշ., Շանէն 74, Արծիւ 12, Արշալոյս 73. 20, Առիւծ 43. 20, Գառ 60, Կորիւն 36, Արարատ 157, Հեռեւակ 91, Մասիս 55, Ալիս 109, Արածանի 24, զանազաններէ 26. 30, պատանիներէ 120 դրշ.։

Ենիճէի կազմ.—Ընկերներու անդամավճարներէն 2480 դրշ.։

Պրուսայի կազմ.—Պրուսա-Ենիճէի շրջանին մէջ հանգանակած՝ Ն. Փ.-ի միջոցով 3347. 30 դրշ., Բարակի խ. 120, Վահագն խ. 69, Անաբեկիչ խ. 26, Նորակազմ խ. 180։ Նուէրներ՝ Պրուսայէն՝ Կեղծաւոր 5 օսմ. ոսկի, Միրահար 5, Մօրեանդ 5, Գործաւոր 2, Հրար 5, Խնդում 2, Նպրէ 2, Բիթ, Ոչխար, Ամաղաղ, Արծաթ, Ոսկան, Գեր, Աբոռ, Տիտր, Պանդոկ, Այժ, Դաւիթ, Զեփիւռ 1-ական օսմ. ոսկի, Ադամանդ կէս օսմ. ոսկի, Նահապետ 60 դրշ., Բանկոն 40, Կաղին 188, Կապոյտ 55, Միջնորդ 54, Մրջիւն 54 դրշ., Թորոս Կիրակոսեան կէս օսմ. ոսկի, Միրամարգ 40 դրշ., Ալկայ 27 դրշ., Սինոկ 1 օսմ. ոսկի, Մէկեսեղ 2, Առիւծ 3, Նաստղ, Կայծ, Առիւծ, Գայլ, Թագուոր, Ոմն, Մանիտակ 1-ական օսմ. ոսկի, Թալոռ 60 դրշ., Ղեւոնդ 20, Արշակ 20, Հմայեակ 27, Կրակ 20, Կարագ 40, Նարինջ 40, Արքուն 40 դրշ.։

Էտիրնէի կազմ. — Հեռեւեալ խումբերէ՝ Կուկուճեան 76 դրշ., Փոքորիկ 170, Արարատ 445, Կրակ 310, Ամպրոպ 80, Արտաւազդ 285, Գէորգ Զաւուշ 115, Շանթ 90, ուէր Ժիրայրէ 90 դրշ.։

Աստրազարի կոմիտէն.—Խումբերու անդամավճարներէ եւ զանազան ուիրատուութիւններէ 11599 դրշ.։

Պուրսանեան Կեդր. Կոմիտէն՝

Սուլիմայէն՝ 1909 նոյեմ.-էն Դ1910 նոյեմ. — Ղազար Պողոսեան, Յովհ. Մարսուս, Վարդան Մարտիրոս, Պողոս Մուրատ, Աւետիս Սահակ, Խաչիկ Թումասեան, Ղազար Զամարեան, Սեֆեան Կարապետ, Խոսրեղ Նիկողոս, Աւետ Մարկոս, Եղօ Պետրեան, Էլօ Մուշեղեան, Ասատուր Վարդան, Պողոս Յովհաննէսեան, Ռուբէն Պողոս, Մանասս (Գոչեան) Մկրտիչ, Արփիար Մարգար, Մանուկ Մուրատ, Խուրշուտ Յովհաննէս, Մանուկ Տէր Մանուէլեան, Աւետիս Սարգիսեան, Աւետիս Յարութիւն, Արշակ Գրիգորեան, Դաղօ Դաղօեան, Մխօ Յակոբեան, Մանուկ Փուսօեան, Յակոբ Մարիոսեան, Կարապետ Պողոսեան, Մամբրէ Համբարձումեան 12-ական ֆրանկ, Գէորգ Կարապետեան 6, Սահակ Գրիգորեան 9, Պետրոս Մուրատեան 10, Յովհաննէս Մաթոսեան 5, Գէորգ Խոսրեղեան (1909-ի) 4 ֆր.։

Նուէրներ՝ Մուրատ Մինասեան 5 ֆր., Խոսրով Յարութիւնեան 5, Արմենակ Տէր Բարսեղեան 2, տուգանք Հնչակ Սիմօնէ 5, Դաղօյեանէ 5 ֆր.։

Պրայլայի խմբերէն (մինչեւ 1910 դեկտ. 31)՝ Գուրգէն 12 ֆր., Արծիւ 36, Ագուլ 40, ընկալագրի տեսակին մէջի խմբերէն 565 ֆր.։ Նուէրներ՝ Կարապետ Ղազարեան 5 ֆր., Համբարձում Սարգիսեան 9, Բարսեղ Մխիթարեան (Առիւծ խ.-էն) 6 ֆր.։

*) *Blue Book, Turkey No 5 (1896).*